Մասիս ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

34ՐԴ. ՏԱՐԻԹԻ 13 (1663) ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 12, 2014
VOLUME 34, NO. 13 (1663) SATURDAY, APRIL 12, 2014

Պատասխանատու՝ Դ. Ենոքեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASIS Weekly
1600 N. Allen Ave. Suite 161
Pasadena, California 91104

Հայոց Ցեղասպանութեան Նոր Բանաձեւեր Ամերիկայի Գոնկրէսէն Ներս

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Ծերակոյտի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովի նախագահ՝ Դեմոկրատ Ռոբերտ Մենենտէս եւ հանրապետական Մարկ Քըրք պաշտօնապէս շրջանառութեան մէջ դրին Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալու նոր օրինագիծ մը:

Երեք կէտերէ բաղկացած բանաձեւի նախագծի կը շեշտէ, որ Միացեալ Նահանգներու նախագահը հայ-թրքական յարաբերութիւններու ուղղութեամբ աշխատանքները պէտք է տանի, այն հիման վրայ, որ Թուրքիոյ ներկայիս կառավարութիւնը ամբողջովին ընդունի Հայոց ցեղասպանութեան փաստը:

Օրինագիծը Միացեալ Նահանգներու նախագահին կոչ կ'ընէ հայ-թրքական յարաբերութիւններուն առնչութեամբ աշխատանքներ տանիլ արդարութեան եւ կառուցողական կայունութեան ամրապնդման ուղղութեամբ, ներառեալ որ Թուրքիոյ Հանրապետութեան կառավարութիւնը ամբողջովին ընդունի Հայոց ցեղասպանութեան փաստը, եւ որ նախագահը պէտք է ապահովէ, որպէսզի Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը համապատասխանաբար արտացոլէ նրբազգաց խնդիրներու մտահոգութիւնը՝

Շար.ը էջ 4

Լիբանահայ Կուսակցութիւնները եւ Արցախի Կառավարութիւնը Հերքեցին 1500 Հայ Զինեալներու Քեսապ Ուղեւորուելու Մասին Լուրերը

Քեսապի հարցը կը շարունակէ յուզել Հայ Ժողովուրդը, միաժամանակ շահարկումի առարկայ դառնալով տարբեր շրջանակներու կողմէ:

Այս առթիւ Լիբանահայ ազգային երեք Կուսակցութիւնները Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը եւ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը հանդէս եկան յայտարարութեամբ մը՝ հերքելու համար տարածուող անհիմն լուրերը:

«Վերջին օրերուն Քեսապի եւ քեսապահայութեան հարցով բաւական մեծ թափ ստացած է ապատեղեկատուութիւն, որուն իբրեւ արդիւնք՝ անհիմն եւ անճիշդ լրատուութիւններ շրջանառութեան մէջ դրուած են տարբեր լրատուամիջոցներու կողմէ:

«Այս շարքին վերջինը կը հանդիսանայ իրականութեան չհամապատասխանող այն լուրը, թէ 1500 հայ զինեալներ Հայաստանի Հանրապետութենէն, Արցախէն եւ Լիբանանէն հասած են Թարթուսի նաւահանգիստ՝ այնտեղէն մեկնելու համար Քեսապ:

«Լիբանանահայ քաղաքական երեք կուսակցութիւնները հիմնովին կը հերքեն այս ապատեղեկատուութիւնը, որ ամէն պարագայի վնասաբեր հետեւանքներ կ'ունենայ»,- ըսուած է յատարարութեան մէջ:

Երեք Կուսակցութիւնները վերահաստատեցին տեղական եւ շրջանային հարցերուն մէջ հայութեան որդեգրած՝ հարցերը խաղաղ միջոցներով լուծելու վարքագիծը:

Լիբանանահայ քաղաքական երեք կուսակցութիւնները բոլոր լրատուամիջոցներուն կոչ ուղղեցին միայն ստոյգ եւ իրականութեան համապատասխանող լուրեր հաղորդել, մերժելով անհիմն եւ յերիւրածոյ նիւթերը:

«Մենք վստահ ենք, որ մեր ժողովուրդը գիտակից հայութեան քաղաքական վարքագիծին, հաւատք չ'ընծայեր նման սուտ լուրերու եւ որեւէ ձեւով չի նպաստեր ապատեղեկատուութեան քաղաքականութեան տարածման», կ'եզրակացնէ Լիբանահայ Կուսակցութիւններու յայտարարութիւնը:

Նոյն հարցի շուրջ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահի բանբեր Դաւիթ Պապայեան մամուլի յայտարարութեան մը մէջ բացարձակապէս հերքեց Արցախէն Սուրիա 1500 կռուողներ ուղարկելու մասին տարածուած տեղեկութիւնները: «Այս լուրերը ոչ մէկ հիմք ունին եւ չեն համապատասխաներ իրականութեան: Որոշ կողմեր քաղաքական տարբեր պատճառներով կը փորձեն այս նիւթը շահարկել եւ սեպ խրել հայերու եւ արաբներու միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութիւններուն մէջ», ըսաւ Պապայեան: Ան յիշեցուց, որ «ԱՍԱԼԱ» կազմակերպութիւնը Արցախի մէջ գոյութիւն չունի եւ եթէ Արցախէն անձեր Սուրիա պիտի ուղղուէին, ապա այդ պիտի ըլլար մարդասիրական նպատակներով:

Միւս կողմէ Եւրոխորհրդարանի Խորհրդարանական Վեհաժողովը Քեսապի հարցին մասին գրաւոր հռչակագիր ընդունեց, որուն մէջ դատապարտեց խաղաղ բնակչութեան նկատմամբ գործադրուած գործողութիւնները: «Մենք՝ խորհրդարանական վեհաժողովի անդամներս, խոր մտահոգութիւն կը յայտնենք Քեսապի մէջ ծաւալած իրադարձութիւններուն կապակցութեամբ: Բնակավայրի խաղաղ բնակչութեան հանդէպ գործադրուած գործողութիւնները տեղացիներուն ստիպեցին լքել իրենց տունները: Ծայրայեղական խմբաւորումները պղծած են Քեսապի հայկական եկեղեցիները եւ վնաս պատճառած բնակիչներու ունեցուածքին: Մենք խորապէս կը դատապարտենք եւ անընդունելի կը համարենք խաղաղ բնակիչներու դէմ ուժային միջոցներու գործածութիւնը«, ըսուած է յայտարարութեան մէջ:

Հռչակագիրը նաեւ Թուրք-

Շար.ը էջ 4

«Հայաստան» Հիմնադրամը 60 Հազար Տոլար Ուղարկած է Քեսապի Հայութեան

Տեղահանուած քեսապահայութեան օգնելու նպատակով «Հայաստան» Համահայկական

Հիմնադրամի կողմէ նախաձեռնուած դրամահաւաքի շնորհիւ մինչ օրս հանգանակուած է 63 հազար Տոլար, որ արդէն ուղարկուած է Դամասկոսի Հայաստանի դեսպանութիւն:

Այս մասին հաղորդած է Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարի մամուլի քարտուղար Տիգրան Բալայեանը: Ան յայտնած է որ բոլոր հանգանակուած դրամները պիտի ուղարկուին դեսպանատան ճանապարհով:

Բալաեան շեշտած է, որ մօտակայ օրերուն այդ դրամը պիտի բաշխուի քեսապահայ ընտանիքներուն, իսկ դրամահաւաքը պիտի շարունակուի:

Գալիֆորնիոյ Խորհրդարանը Նշեց Հայոց Ցեղասպանութեան 99-րդ Տարելիցը

ՍԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) աջակցութեամբ մայրաքաղաք Սագրամենթոյի հայ գաղութին, Կիրակի 6 Ապրիլի երեկոյեան, Գալիֆորնիոյ նահանգային Խորհրդարանի գլխաւոր մուտքին առջեւ նշեց Հայոց Ցեղասպանութեան 99րդ տարեդարձը: Սոյն միջոցառումին ներկայ էին հայ գաղութի ներկայացուցիչները, ինչպէս նաեւ Սան Ֆրանսիսգոյէն, Լոս Անճելըսէն եւ այլ շրջաններէն ժամանած հայեր:

ԱՄՆի եւ Հայաստանի քայլերգներու կատարումէն ետք օրուան հանդիսավար Քրիսթին Աղախանեանի հրաւէրով շրջանի Ս. Յակոբ Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ հովիւ՝ Արժ Տ. Ասողիկ Քհնյ. Ժամկոչեան նահատակներու անմեռ յիշատակը ոգեկոչող ելոյթով եւ օրհնութեան աղօթքով բացումը կատարեց հաւաքոյթին:

ՀԱԽ-ի ներկայացուցիչները Գալիֆորնիոյ Խորհրդարանի խօսնակ Ճօ Փերեզի հետ հանդիպումի ընթացքին

Երեկոյթի առաջին խօսք առնողն էր ՀԱԽ-ի անդամներէն Գրիգոր Մոլոյեան: Ան հակիրճ ակնարկ մը նետելէ ետք մեծ Եղեռնի տուն տուող պատճառներուն եւ անոր սարսափելի հետեւանքներուն, անդրադարձաւ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին: Գ. Մոլոյեան նշեց որ Հայ Ամերիկեան Խորհուրդը կը զօրակցի Գալիֆորնիոյ Ծերակոյտի եւ Ներկայացուցիչներու Տան թիւ 32 բանաձեւին, որով կը ճանչնայ Ղարաբաղը որպէս ինքնիշխան պետութիւն, միաժամանակ բարոյական պարտաւորութիւն համարեց հայոց ցեղասպանութեան ընդհանրական ճանաչման եւ արդար հատուցման վճռորոշ աշխատանքները:

Օրուան երկրորդ ելոյթ ունե-

Շար.ը էջ 5

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Հրաժարականի պատճառներից

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հայաստանում չկան օբիեկտիւ չափանիշներ եւ մեխանիզմներ, որոնցով գնահատւում է նախորդ կառավարութիւնների կամ վարչապետների աշխատանքը: Քաղաքական ուժերն ունեն իրենց շահերը, եւ բնականաբար նրանց գնահատականը հեռու է օբիեկտիւութիւնից: Ընդդիմութիւնը սովորաբար ասում է, որ վարչապետն ամէն ինչ տապալել է, իսկ իշխանութիւնը՝ որ կառավարութիւնների փոփոխութիւնը բնականոն գործընթաց է, եւ որ նախորդ փուլի համար պէտք էր այս վարչապետը, իսկ ներկայ փուլի համար՝ բոլորովին ուրիշը: Իհարկէ, դժուար է պնդել, որ այս կառավարութիւնը վեց տարում ինչ-որ զգալի յաջողութիւններ է արձանագրել. տնտեսական ձախողումների մասին շատ է խօսուել եւ դեռ կը խօսուի: Բայց անյաջողութիւնների քաղաքական պատճառներից մէկը, ինձ թւում է, թիմի զգացողութեան պակասն էր: Իր վարչապետութեան սկզբնական շրջանում Տիգրան Սարգսեանն անկուսակցական էր, յետոյ դարձաւ հանրապետական: Բայց ՀՀԿ-ում ազդեցութիւն ունեցող մարդիկ նրան իւրային չէին համարում՝ կար մենթալիտետի զգալի անհամապատասխանութիւն:

Երբ չէզոք, բայց մտահոգ մարդիկ խօսում էին տնտեսական վիճակի վատթարացման մասին, որոշակի մտաւոր եւ կրթական ցենզ ունեցող ՀՀԿ-ականները (ոչ հրապարակաւ, իհարկէ) ասում էին՝ «Հա, ինչ անե՛մ, թող Տիկոն տապալուի, նա մեր ախպերութիւնից չի: Երբ օլիգարխները, պատգամաւորները, բարձրաստիճան պաշտօնեաները խնդիրներ էին ունենում, նրանք, ի՞նչ է, վարչապետի՞ն էին դիմում: Իհարկէ՝ ոչ: Հետեւաբար վարչապետը նրանց համար հեղինակութիւն չէր, հարց լուծող չէր:

Վստահ եմ, որ նրանք Տիգրան Սարգսեանի հետ սառնա չէին գնում եւ «տուպայներում» ժամանակ չէին անցկացնում: Մի խօսքով՝ ընկերութիւն չէին անում՝ ենթագիտակցաբար դասակարգային թշնամի զգալով: Իհարկէ, հակուած չեմ նաեւ իդէալականացնելու Տիգրան Սարգսեանին եւ ենթադրում եմ, որ նա «իր ձեռից եկած» չարաշահումները կատարել է: Խօսքն այստեղ «միասնական թիմի» զգացողութեան մասին է: Եւ ահա ես մտածում եմ՝ գուցէ վարչապետի հրաժարականի պատճառը ոչ թէ նրա դէմ «ոչ իշխանականների» տեւական պայքարն էր, ոչ թէ «Դէմ եմ»-ը եւ կուտակայինի տապալումը, ոչ թէ Կրեմլի հրահանգը (չգիտեմ, թէ որքանով է Կրեմլին հետաքրքրում, թէ ով է Հայաստանում վարչապետ աշխատում), այլ պարզապէս Տիգրան Սարգսեանի գիտակցումը, որ բացի նախագահից՝ նրան ոչ ոք չի աջակցում: Եւ նախագահն էլ վերջին ժամանակներս այն չափով չի աջակցում, որքան վարչապետը կը ցանկանար:

Այդ՝ «թիմային» հանգամանքն էլ, երեւի, պէտք է հաշուի առնուի՝ հետագայում վարչապետներ նշանակելու պարագայում: Զնայած ես չէի ցանկանայ, որ Հայաստանի վարչապետը ներդաշնակ լինէր Մանուէլի, Սէյրանի, Շմայսի կամ Թոխմախի Մհերի հետ:

«ԱՌԱՒՕՏ»

Ինչ է որոշելու հայ օլիգարխների յաջորդ «սխոդկան» Տուպայում

ՀԱՅԿԱԶՆ ՂԱՀՐԻՑԵԱՆ

Օրերս հայկական մամուլում տեղեկութիւն հրապարակուեց, ըստ որի հայ օլիգարխները հերթական հաւաք են հրաւիրել Տուպայում, որտեղ քննարկել են իրենց հետագայ անելիքները, մասնաւորապէս վարչապետի ու կառավարութեան փոփոխութեան հարցը: Ըստ այդ տեղեկատւութեան, ՀՀԿ Գործադիր մարմինը սպասում էր հաւաքի «արդիւնքներին», իսկ ՀՀԿ ԳՄ Ապրիլի 3-ի նիստում հրապարակուեց վարչապետ Տիգրան Սարգսեանի հրաժարականը:

Հայ օլիգարխները Տիգրան Սարգսեանի օրօք ոչ միայն պահպանեցին իրենց մենաշնորհներն ու արտօնութիւն ները, այլեւ ամրապնդեցին դրանք եւ ստացան նորերը

Ովքե՞ր են եղել Տուպայում, արդեօք Տուպայի հաւաքը եւ վարչապետի հրաժարականը կապուա՞ծ են իրար հետ, եղե՞լ է նման հաւաք, թէ ոչ: Ընդհանրապէս, ինչո՞ւ էին հայ օլիգարխները դժգոհ: Ի՞նչն էր պատճառը:

Հայ օլիգարխները Տիգրան Սարգսեանի օրօք ոչ միայն պահպանեցին իրենց մենաշնորհներն ու արտօնութիւնները, այլեւ ամրապնդեցին դրանք եւ ստացան նորերը, եւ կարծես թէ դժգոհելու առիթ պէտք է որ չլինէր: Աւելին, վարչապետի պաշտօնում Տիգրան Սարգսեանը ձեռնտու էր օլիգարխներին նաեւ շատ այլ առումներով:

Այսինքն, Տիգրան Սարգսեանն իրենից ոչ մի վտանգ չէր ներկայացնում, եւ չէր էլ կարող ներկայացնել:

Այդ դէպքում, արդեօք հայ օլիգարխների դժգոհութեան եւ մտահոգութեան պատճառը կառավարութեան քաղաքականութեան հետեւանքով ստեղծուած սոցիալ-տնտեսական ծանր վիճակն ու վատթար հեռանկարներն են:

Միւս կողմից, սակայն, այդ իրավիճակը պայմանաւորուած է Հայաստանի քաղաքական-տնտեսական կառուցուածքով՝ մենաշնորհներով, կոռուպցիայի, ստուերային տնտեսութեան, քուոտաների ու անօրինական արտօնութիւնների առկայութեամբ, որոնց, տէրերը օլիգարխներն են՝ բիզնես-պաշտօնեաներն ու պատգամաւորները, որոնք տիրում են նաեւ պետական իշխանութեան լծակներին՝ օրենսդիր ու գործադիր: Հայաստանի իրական իշխանութիւնը հենց այս համակարգն է, որի հիմքը ոչ թէ սահմանադրութիւնն ու օրէնքներն են, այլ ներհամակարգային պայմանաւորուածութիւնները:

Նման համակարգը չի կարող եւ շահագրգռուած չէ երկրի տեխնոլոգիական զարգացմամբ, ներհանրային այլ որակի յարաբերութիւնների, իշխանութեան ձեւաւորման սահմանադրական մեխանիզմների հաստատմամբ: Այս ամէնն, իր հերթին, նպաստում է երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի, մրցունակութեան, պաշտպանունակութեան, կենսունակութեան անկմանը եւ արդիւնքում՝ ինքնիշխանութեան, սուբիեկտութեան կորստին:

Միւս կողմից, այս իրավիճակը, բնականաբար, ինչ որ պահից սկսած սպառնում է նաեւ համակարգին: Սակայն, նման համակարգը չի կարող ապահովել ներքին համարժէք պայմաններ ու պատասխանատուութիւն ստանձնել, եւ այդ պատասխանատուութիւնն իրենից գցելու համար որոնում է արտաքին հովանաւորներ՝ իր գոյութիւնը շարունակելու համար: Սա անխուսափելի եւ օբեկտիւ գործընթաց է, եւ դրա ականատեսը դարձանք յատկապէս վերջին ամիսներին, Սեպտեմբերի 3-ից սկսած՝ արագացուած ռեժիմով:

Միւս կողմից, թերեւս կան ինչ-ինչ այլ, աւելի առարկայական վտանգներ, որոնք միայն համակարգը կարող է զգալ ու պատկերացնել: Զի բացառւում, որ այն ամէնը, ինչը յուշում է այդ վտանգները, կատարւում է արդէն բոլորի կամքից անկախ, ինչ որ տեղ, ուր չի հասնում համակարգի ձեռքը:

Այդ վտանգներից խուսափելու համար կայ խիստ տեսական մի ելք՝ անցնել գործունէութեան օրինական դաշտ, հրաժարուել քուոտաներից ու մենաշնորհներից, վերջ տալ հարկային ու մաքսային արտօնութիւններին եւ այլն: Կարո՞ղ է արդեօք համակարգը տրանսֆորմացուե՞լ կամաւոր, խաղաղ ճանապարհով, թէ այդ տրանսֆորմացիան լինելու է այլ մեթոդներով:

Թւում է, այդքան էլ անիրական հարցեր չեն: Ըստ ամենայնի, հայ օլիգարխները Տուպայի յաջորդ հաւաքում հենց այս հարցերն են քննարկելու, եթէ իհարկէ հասցնեն:

«ԼՐԱԳԻՐ»

Ձեւաւորէք Կոալիցիա

Նոր կառավարութեան ձեւաւորման խնդիրն այս օրերին զբաղեցրել է բոլորի մտքերն ու կթուածահար արել երկրի կառավարումը: Բոլորը քննարկում են, թէ ով կը լինի վարչապետը, ովքեր կ'ընդգրկուեն նորընտիր կառավարութեան կազմում: Սակայն, եթէ վերանանք անձերից, նոր կառավարութեան ձեւաւորման հետ կապուած մէկ ցանկութիւն կարելի է բարձրաձայնել:

Սա այն եզակի իրավիճակներից է, երբ երկրի շահերից է բխում կոալիցիոն կառավարութեան ձեւաւորումը (այն կոչենք Ազգային համաձայնութեան կառավարութիւն): Այս պարագայում մի քանի տարի անց մենք թերեւս կ'ունենանք երկու շատ հաւանական ելք՝ կամ երկրի վիճակը կը լաւանայ, եւ մեր պետութիւնը դուրս կը գայ այս փակուղուց, կամ այսօր գործող ուժերը կը ձախողուեն եւ խմբով կը հեռանան քաղաքական ասպարէզից:

Երկու դէպքում էլ կը շահի երկիրը, կը շահի հայ ժողովուրդը: Հակառակ պարագայում մենք կ'ունենանք նոր վարչապետ ու կառավարութիւն, որոնց յաջողելու հաւանականութիւնը շատ փոքր կը լինի, իսկ մեր բոլորիս ապագան՝ մշուշոտ:

Գործող իշխանութիւնը կը շարունակի պնդել, որ ընդդիմութիւնն իրեն խանգարում է աշխատել, ընդդիմութիւնը կը շարունակի զբաղեցնել քաղաքական դաշտը եւ լաւագոյն դէպքում երկիրը «փրկելու» հնարաւորութիւն կ'ունենայ 3 տարի անց: Դրան կը յաջորդի եւս մի 3-5-10 տարի, մինչեւ այս ուժերը եւս ձախողուեն եւ հեռանան ասպարէզից՝ իրենց տեղը զիջելով նոր, երիտասարդ, չվարկաբեկուած անձանց: Իսկ դա կը նշանակի, որ մենք անորոշ ժամանակով կը յետաձգենք սերնդափոխութիւնը մեր երկրում: Հնարաւորութիւն կը տանք, որ մեզ նորից ու անորոշ ժամանակով խաբեն, մոլորեցնեն: Իսկ մենք «անապատում դեգերելու» ժամանակ չունենք՝ ժամանակը սուղ է, փոփոխութիւնների անհրաժեշտութիւնը՝ հրատապ, ուստի մեր փրկութեան միակ յոյսը կոալիցիոն կառավարութեան ձեւաւորումն է:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» ամպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՄԱՍԻՍ

ԱՄԵՆԱՎԱՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱՋԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly

Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տիգրան Սարգսեան Երկխօսութեան Հրաւիրեց Փողոցը Փակած Ցուցարարներին

Հայաստանի հրաժարեալ Վարչապետ՝ Տիգրան Սարգսեան երկխօսութեան կոչ կ՚ընէ ցուցարարներուն

Հանրապետութեան հրապարակում շուրջ երկու ժամ նստացոյց անցկացնող «Դէմ եմ» շարժման ակտիւիստների հետ Ապրիլ 9-ին հանդիպեց հրաժարական տուած վարչապետ Տիգրան Սարգսեանը:

«Մենք չենք կարող հրապարակում քննարկել օրէնսդրական փոփոխութիւնների խնդիր, որը հիմա պատրաստւում է աշխատանքային խմբի կողմից: Եւ ձեզ յուզող բոլոր հարցերի պատասխանները օրէնսդրական փաթեթում, որը մենք պատրաստում ենք Սահմանադրական Դատարանի որոշումը իրացնելու համար, ձեզ յուզող հարցերի բոլոր պատասխանները առկայ են», - յայտարարեց նախկին վարչապետը՝ յաւելելով, թէ դրա համար անհրաժեշտ է, որ ակտիւիստները աշխատանքային խումբ ձեւաւորեն, որի հետ Կառավարութեան աշխատանքային խումբը կը քննարկի առաջարկութիւնները:

Բարձրախօսով կարճ ելոյթից յետոյ Տիգրան Սարգսեանը հեռացաւ՝ վստահեցնելով, որ իրենց առաջարկները մնում են ուժի մէջ:

Ակտիւիստները, սակայն, բացասաբար արձագանքեցին Սարգսեանի առաջարկին:

Մինչ կը գար նախկին վարչապետը, ցուցարարներին հանդիպեց Երեւանի ոստիկանապետ Աշոտ Կարապետեանը՝ պնդելով, թէ կառավարական շէնքի առջեւ-խմբուած հարիւրաւոր ակտիւիստների գործողութիւններն անօրինական են:

Ոստիկանները անգամ բռնութեան դիմեցին փողոցը բացելու համար:

Յիշեցնենք՝ պարտադիր կուտակային կենսաթոշակային օրէնքի դէմ պայքարող «Դէմ եմ» քաղաքացիական շարժումը նոյն օրը երթ էր կազմակերպել՝ պահանջով փոփոխութիւններ կատարել էլեկտրոնային հաշուետուութիւնների ձեւում եւ հնարաւորութիւն տալ գործատուներին աշխատակիցների կամքին հակառակ պարտադիր կուտակային վճարներ չկատարել: Երթի մեկնարկից որոշ ժամանակ անց, «Դէմ եմ» շարժման աջակիցները հասան Հանրապետութեան հրապարակ եւ անժամկէտ նստացոյց սկսեցին՝ փակելով Նալբանդեան փողոցը եւ կաթուածահար անելով երթեւեկութիւնը քաղաքի կենտրոնում:

Լեւոն Տէր-Պետրոսեան.- «Ընդդիմութիւնը ոչ մի պարագայում չպէտք է նոր կառավարութեան մաս կազմի»

Ընդդիմութիւնը ոչ մի պարագայում խաղերի մէջ չպէտք է մտնի Սերժ Սարգսեանի հետ եւ չպէտք է մաս կազմի նրա կողմից ձեւաւորուած որեւէ կառավարութեան: Այս մասին յայտարարել է ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը՝ Ilur.am-ին տուած հարցազրոյցում:

Նրա խօսքով՝ կառավարութեան փոփոխութեամբ Սերժ Սարգսեանի ռազմավարութիւնն ամենեւին չի փոխուելու եւ ինչպէս նախկինում շարունակելու է հետապնդել մինչեւ իր ժամկէտի աւարտը պաշտօնավարելու, իսկ դրանից յետոյ հաւատարիմ ժառանգորդ կարգելու կամ փոփոխուած սահմանադրութեան ընձեռած լայն լիազօրութիւններով վարչապետի պաշտօնն զբաղեցնելու միջոցով իր իշխանութիւնը եւս տասը տարով երկարաձգելու նպատակը:

Տէր Պետրոսեանը նշել է, որ այդ նպատակին հասնելու համար Սերժ Սարգսեանը վարչապետի պաշտօնում քիչ թէ շատ ընդունելի թեկնածութիւն առաջարկելու եւ դրանով հանրային դժգոհութեան ալիքը մեղմելու, ընդդիմութեանը պաշտօններով գայթակղելու ու նրա շարքերում պառակտումներ առաջացնելու միջոցով ժամանակ է շահելու եւ սեփական դիրքերն ամրապնդելուց յետոյ հեշտուհանգիստ անցնելու է վերոյիշեալ ծրագրի իրականացմանը:

«Իմ տպաւորութեամբ, ընդդիմութիւնը դեռեւս մինչեւ վերջ չի գիտակցել, որ ընդամէնը շուրջօրեայ հանրահաւաքների սպառնալիքի միջոցով հասնելով վարչապետի հրաժարականին, արդէն իսկ մեծ յաղթանակ է տարել, իսկ



ՀՀ նախկին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան

Սերժ Սարգսեանը, եթէ ոչ ամբողջովին, ապա գոնէ կիսով չափ կապիտուլյացիայի է ենթարկուել: Զգարգացնել այդ յաջողութիւնը՝ կը նշանակի մեծագոյն նուէր մատուցել Սարգսեանին եւ նպաստել երկրում տիրող մղձաւանջի խորացմանը»,-ասել է նա:

Հարցին, թէ ինչ հակաքայլեր պիտի ձեռնարկի քառեակը ՀԱԿ առաջնորդը պատասխանել է.

«Անշուշտ տեղեակ էք, որ քառեակում այդ հարցերի շուրջ ներկայումս ինտենսիւ խորհրդակցութիւններ են ընթանում, որոնք դեռ իրենց աւարտին չեն հասել: Հետեւաբար, իրաւունք չունենալով խօսելու քառեակի անունից, ես կարող եմ արտայայտել միայն իմ մասնաւոր տեսակէտը, որ ընդդիմութիւնը ոչ մի պարագայում խաղերի մէջ չպէտք է մտնի Սերժ Սարգսեանի հետ եւ չպէտք է մաս կազմի նրա կողմից ձեւաւորուած որեւէ կառավարութեան, անգամ եթէ վարչապետի պաշտօնը առաջարկուի ընդդիմադիր գործիչներից մէկին:

ԲՀԿ-ի Օրակարգում «Այս Պահին Կոալիցիա Մտնելու Հարց Չկայ»

«Բարգաւաճ Հայաստանի» (ԲՀԿ) օրակարգում կոալիցիոն կառավարութիւն մտնելու հարց չկայ, այս մասին ի պատասխան «Ազատութեան» հարցի վստահեցրեց ԲՀԿ պատգամաւոր Ստեփան Մարգարեանը:

«Այս պահին նման հարց չկայ»,- ասաց Մարգարեանը:

Հայաստանի առաջին նախագահ, Հայ ազգային կոնգրէս (ՀԱԿ) կուսակցութեան ղեկավար Լեւոն Տէր-Պետրոսեանն յորդորել էր խորհրդարանական քառեակին ոչ մի պարագայում խաղերի մէջ չմտնել Սերժ Սարգսեանի հետ եւ նրա կողմից ձեւաւորուած որեւէ կառավարութեան մաս չկազմել, անգամ եթէ վարչապետի պաշտօնը առաջարկուի ընդդիմադիր գործիչներից մէկին: Տէր-Պետրոսեանը զգուշացրել էր, որ Սերժ Սարգսեանն այժմ ընդամէնը փորձելու է հանրային դժգոհութեան ալիքը մեղմել, եւ ընդդիմութեանը պաշտօններով գայթակղելով ու նրա շարքերում պառակտումներ առաջացնելով, ժամանակ շահել՝ սեփական դիրքերը ամրապնդելու եւ իր իշխանութիւնը երկարաձգելու համար:

Քառեակի՝ Ապրիլ 9-ին տեղի ունեցած խորհրդակցութիւնների ընդմիջման ժամանակ Գագիկ Ծառուկեանի ղեկավարած խմբակցութեան պատգամաւոր Ստեփան Մարգարեանը վստահեցրեց, իրենք երբեք խաղերի մէջ չեն մտնի:

«Մենք որեւէ մէկի հետ խաղերի մէջ չենք մտել երբեք եւ չենք մտնի, խաղը վատ բան է»,- ասաց Մարգարեանը՝ յաւելելով, որ ԲՀԿ-ին չեն առաջարկել կոալիցիա մտնել:

Քառեակն երկարատեւ հանդիպման ընթացքում որոշում չի կայացրել: Ինչպէս երեք ժամ տեւած քննարկումներից յետոյ տեղեկացրեց ՀԱԿ խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը, ոչ իշխանական ուժերը ընդմիջում են յայտարարել՝ հաշուի առնելով Ազատութեան հրապարակում Բաֆֆի Յովհաննիսեանի կազմակերպած միջոցառումը, այդ կերպ հնարաւորութիւն ընձեռելով քննարկումներին մասնակցող «Ժառանգութեան» պատուիրակութեանը մասնակցել այդ միջոցառմանը:

«Ժառանգութիւն» կուսակցութեան Առաջնորդ «Մենք Չենք Ընդունի Նախագահի Հրաւէրը»

«Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Բաֆֆի Յովհաննիսեանը Ապրիլ 9-ին «Ազատութեան» հրապարակում տեղի ունեցած հանրահաւաքին անդրադարձաւ ուղիղ մէկ տարի առաջ այս նոյն օրուան՝ Ապրիլի 9-ին, որն նրա եւ ՀՀ նախագահի երդմնակալութեան օրն էր, մի փոքր պատմական ակնարկ կատարեց Բաֆֆի Յովհաննիսեանը՝ վերյիշելով թէ նախորդ տարի այս օրն ինչ եղաւ, ապա պատասխանեց լրագրողների հարցերին:

Aravot.am-ի այն հարցին, թէ ԲՀԿ-ն ու ՀՅԴ-ն ասել են, որ դէմ չեն լինի իշխանութեան հետ կոալիցիա կազմելուն, ի՞նչպէս է վերաբերւում «Ժառանգութեան» առաջնորդն այդ յայտարարութեանը, հաշուի առնելով, որ իրենք էլ քառեակի մաս են կազմում: Պարոն Յովհաննիսեանն ասաց, որ արդէն պէտք է քառեակի անունը փոխել. «Իսկ ներկայումս կայ ներխորհրդարանական շատ կառուցողական շինիչ համագործակցութիւն, քառեակ չկայ, ոչ էլ՝ եռեակ: Ես կոչ եմ անում, որ ղեկավարները հանդիպեն եւ որոշեն թէ մեր հաւաքական ուժի անունն ինչ է լինելու: Այս կամ այն ուժն իրեն համար կ՚որոշի մտնել կոալիցիա թէ ոչ, ես պարզապէս ասում եմ, եթէ մենք ունենք ձեւաչափ, եթէ ժողովուրդն ակնկալիք ունի քաղաքական ուժերից, միասին կանգնել ու պահանջել, եւ ուրեմն ես պատրաստ եմ սպասարկել այդ պահանջը»: Հարցին, թէ Աժ նախագահ Յովիկ Աբրահամեանի մասին լուրեր կան, որ ամենաընդունելի թեկնածուն է ոչ իշխանական ուժերի համար, «Ժառանգութեան» համար այս թեկնածուն ընդունելի՞ է, պարոն Յովհաննիսեանն ասաց՝ «Քանի որ այս ոչ լեգիտիմ իշխանութեան ներքոյ առանց ժողովրդի հետ համաձայնութեան՝ նոր ընտրութիւններ, ժամանակացոյց, որեւէ մի վարչապետ չի վայելելու ժողովրդի եւ մեր վստահութիւնը»:

«Ես համաձայն եմ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի կոչերի հետ՝ ուղղուած չորս խորհրդարանական ուժերին, որպէսզի նրանք իշխանութիւնների հետ գործարքի չգնանան ու հանրահաւաքների միջոցով հասնեն իշխանափոխութեան»-. յայտարարեց «Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդը:

Ի պատասխան այն հարցին, արդեօք «Ժառանգութիւնը» նախագահից հրաւէր ստացել է մասնակցելու նոր վարչապետի նշանակման վերաբերեալ խորհրդակցութիւններին, Նա ընդգծել է. «Այո, ստացել ենք, սակայն չենք մասնակցելու»:

ԼՈՒՐԵՐ

Արդեո՞ք Հայաստանցիներին Կը Հրապուրի ՌԴ Քաղաքացիութեան Տրամադրման Նոր Կարգը

Անցած մի քանի ամիսների ընթացքում Ռուսաստանի Դաշնութիւնը մէկը միւսի հետեւից միգրացիոն ոլորտը կարգաւորող մի շարք օրէնքներ է ընդունել՝ մի կողմից խստացնելով միգրանտների մուտքը Ռուսաստանի տարածք, միւս կողմից՝ հեշտացնելով Ռուսաստանի քաղաքացիութիւն տրամադրելու ընթացակարգը:

Այսուհետ ՌԴ քաղաքացիութիւն կարելի է 3 ամսում ստանալ՝ ռուսաց լեզուի բաւարար գիտելիք ունենալու դէպքում: Պետդուման ընդունել է օրէնքը:

Միգրացիոն փորձագէտ Ռուբէն Եգանեանը գտնում է, որ այս նոր օրէնքով հայաստանցի ցանկացած թոշակառու ով ապրել է ԽՍՀՄ տարածքում, նաեւ շատ թէ քիչ ռուսերէնի է տիրապետում, տեսականօրէն կարող է դառնալ ՌԴ քաղաքացի ու ստանալ մի քանի անգամ աւելի բարձր կենսաթոշակ:

Ռուսաստանի քաղաքացիութիւն տրամադրելու գլխաւոր պայմաններից մէկն էլ այն է, որ դիմողը հրաժարուելու է իր երկրի քաղաքացիութիւնից: 220 հազար հայաստանցի՝ այն միգրանտները, ովքեր յայտնուել են Ռուսաստանի միգրացիոն ծառայութեան «սեւ ցուցակում», նրանց մուտքն արգելուել է Ռուսաստանի տարածք, կարող են հեշտացուած կարգով ստանալ քաղաքացիութիւն ու շարունակել աշխատել Ռուսաստանում:

Այսօր, երբ կարելի ասել բաւականին լուրջ վտանգ կայ, որ ռուսական կողմի այս օրէնսդրական նախաձեռնութեան արդիւնքում հազարաւոր հայաստանցիներ կարող են Ռուսաստանի քաղաքացիութիւն ստանալ ու արդէն մշտական բնակութիւն հաստատել ՌԴ տարածքում, ի՞նչ են անելու Հայաստանի իշխանութիւնները:

«Հիմա մեր պետութիւնն էլ պէտք է փորձի հասկանալ՝ իսկ արդեո՞ք այս իրավիճակը մեր ազգային շահերից է բխում, որ տարեկան բնակչութեան մէկ տոկոսը մեկնում է ու չի վերադառնում», - հարցնում է փորձագէտը:

Սերժ Սարգսեան. «Ղարաբաղի Ժողովրդի Ինքնորոշման Իրաւունքը Անվիճելի է»

Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրաւունքը անվիճելի է, եւ դրա փաստացի կազմակերպումը պէտք է ամրագրուի դե ժուրէ: Այդ մասին Ապրիլ 8-ին Աշգաբատում յայտարարել է Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեանը:

«Ես այսօր եւս մէկ անգամ ներկայացրեցի ղարաբաղեան հիմնախնդրի կարգաւորմանն ուղղուած մեր սկզբունքային դիրքորոշումը՝ հարցը կարող է եւ պէտք է լուծուի բացառապէս խաղաղ ճանապարհով, միջազգային իրաւունքի նորմերի եւ սկզբունքների հիման վրայ», - ասել է Սերժ Սարգսեանը Թուրքմենստանի Նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովի հետ բանակցութիւնների արդիւնքներով համատեղ ասուլիսի ժամանակ:

«Մենք շնորհակալ ենք Թուրքմենստանին՝ մեզ համար կարեւորագոյն հարցում ըմբռնման եւ չէզոքութեան համար», - յայտարարել է Հայաստանի Նախագահը:

Նա փոխանցել է, որ Թուրքմենստանի Նախագահի հետ բանակցութիւնների ընթացքում բարեկամական եւ վստահութեան մթնոլորտում հանգամանօրէն քննարկել են հայ - թուրքմենական յարաբերութիւնների զարգացման ընթացքը, ապագայի համար նախանշուել գլխաւոր կողմնորոշիչները: «Ես ուրախ եմ, որ հայ - թուրքմենական յարաբերութիւնները դինամիկ զարգանում են», - ասել է Սերժ Սարգսեանը:

Հայոց Ցեղասպանութեան Նոր Բանաձեւեր

Շարունակուած էջ 1-էն

կապուած մարդու իրաւունքներու, մարդկութեան դէմ յանցագործութիւններու, էթնիկ զտումներու եւ այն փաստաթուղթերու հետ, որ Միացեալ Նահանգները ունի Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ:

Շրջանառութեան մէջ դնելով օրինագիծը՝ Ռոբերտ Մենենտէս յայտարարեց, որ Հայոց ցեղասպանութիւնը սարսափելի փաստացի իրականութիւն է, որ երբեք կարելի չէ հերքուիլ:

«Այս բանաձեւը վճռականօրէն կը վերահաստատէ, որ մենք միշտ կը յիշենք այդ ողբերգութիւնը եւ յարգանքի տուրք կը մատուցենք հայ անմեղ մարդոց, կանանց ու երեխաներու յիշատակին, որ սպաննուած կամ ստիպողաբար տեղահանուած են իրենց հայրենիքէն: Հայոց ցեղասպանութիւնը պէտք է դասաւանդուի, ճանչցուի եւ յիշատակուի՝ կանխելու համար նման ոճրագործութիւններու կրկնութիւնը, որպէսզի անոնք երբեք տեղի չունենան», - յայտարարեց Մենենտէս:

Ծերակուտական Քըրք, իր կարգին յայտնեց , որ գալիք տարի պիտի նշուի 100-րդ տարելիցը հայերու ցեղասպանութեան, երբ օսմանեան Թուրքերու կողմէ մէկուկէս միլիոն հայ սպաննուած են:

«Փրկուածներէն ընդամէնը մի քանին մնացած են, անոնց շարքին՝ Շիքակոյի մէջ բնակող 107-ամեայ Հելէն Փալոյեանը, որ կորսնցուցած է իր ծնողներուն ու երկու եղբայրներուն: Վերապրածներու պատուին եւ զոհուածներու յիշատակին ու յանուն աշխարհի վրայ մարդու իրաւունքներու առաջնորդութեան, Միացեալ Նահանգները վերջապէս պէտք է միանայ Եւրոպական Միութեան եւ ՆԱԹՕ-ի անդամ մեր 11 դաշնակիցներուն եւ պաշտօնապէս ճանչնայ Հայոց ցեղասպանութիւնը»:

Ծերակուտականներ՝ Պարպարա Պոքսըր եւ Էտ Մարքի միացած են օրինագիծին որպէս համահեղինակներ:

Ծերակոյտի Նիստին քննարկելու համար բանաձեւը նախ պէտք է ընդունուի Արտաքին Յարաբերութիւններու յանձնաժողովին կողմէ:

Զուգահեռաբար, Ներկայացուցիչներու պալատէն ներս շրջանառութեան մէջ դրուեցաւ Հայոց ցեղասպանութիւնը վերաբերող մէկ այլ բանաձեւ: Այս օրինագիծի համահեղինակներ են գոնկրէսականներ՝ Տէյվիտ Վալատաօ (Հանրապետական, Քալիֆորնիա), Ատամ Շիֆ (Դեմոկրատ, Քալիֆորնիա), Գոնկրէսի հայկական հարցերով յանձնախումբի համանախագահներ Ֆրանք Փալոն (Դեմոկրատ, Նիւ Ճըրզի) եւ Մայքլ Կրիմ (Հանրապետական, Նիւ Եորք):

Շուրջ 50 գոնկրէսականներ միացած են անոնց նախաձեռնութեան:

Բան Կի Մունը Սիրիայում Հակամարտող Կողմերին Կոչ է Արել Պաշտպանել Փոքրամասնութիւններին եւ Խօսել է Քեսաբի Մասին

ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղար Բան Կի Մուն

ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղար Բան Կի Մունը մտահոգութիւն է յայտնել Սիրիայի Քեսաբ աւանի վերաբերեալ տարածուած լուրերում առկայ մահապատիժների սարսափելի տեսարաններով:

«Չնայած ՄԱԿ-ը չի կարող ստուգել հաղորդուող վայրագութիւնների իսկութիւնը, սակայն մարդու իրաւունքների հանդէպ աճող բռնութիւններն անհերքելի օրէն շարունակւում են, եւ ամբողջ գիւղերի բնակիչներ, ինչպէս, օրինակ, Քեսաբում, ստիպուած են լինում փախչել»,- ասուած է հաղորդագրութեան մէջ:

Բան Կի Մունը նշում է, որ կառավարական ուժերը շարունակում են աւերել ամբողջական թաղամասեր: ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղարը նաեւ մտահոգութիւն է յայտնում, որ կազմակերպութեան կողմից ահաբեկչական համարուած խմբաւորումները շարունակում են վայրենաբար յարձակուել քաղաքացիական բնակչութեան վրայ:

Բան Կի Մունը մտահոգիչ է համարել Սիրիայում շարունակուող հակամարտութեան ընթացքում վայրագութիւնների վերաբերեալ հաղորդագրութիւնները եւ զգուշացրել է հակամարտող կողմերին եւ նրանց աջակիցներին պաշտպանել քաղաքացիական անձանց՝ անկախ նրանց կրօնական, համայնքային եւ էթնիկ պատկանելիութիւնից:

«Թէ՛ Սիրիայի կառավարութիւնը, թէ՛ զինեալ խմբաւորումներն իրական եւ բարոյական պատասխանատուութիւն ունեն դա անելու: Նրանք պէտք է անեն հնարաւորը՝ խուսափելու եւ կանխելու բռնութիւնները քաղաքացիների հանդէպ, ներառեալ՝ հրետակոծումներն ու օդային հարուածները քաղաքային տարածքներում»,- ասել է ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղար Բան Կի Մուն:

«Ակօս»-ի Լրագրողի Համաձայն Քեսաբահայերին Խաբէութեամբ Են Թուրքիա Տեղափոխել

19 տարեց քեսաբահայերի Սիրիայից Թուրքիա են տեղափոխել խաբէութեան միջոցով: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում յայտարարել է Ստամբուլի «Ակօս» հայկական պարբերականի լրագրող Բագրատ Էստուկեանը, ընդգծելով, որ ահաբեկիչները, որոնք գրաւել են Քեսաբը, պարզապէս խաբել են անօգնական տարեցներին ու տեղափոխել նրանց Թուրքիայի միակ հայաբնակ գիւղ՝ Վակըֆ:

«Զինեալները պարզապէս խաբել են տարեցներին, յայտարարելով, որ նրանց տանում են Լաթաքիա՝ փոխարէնը Թուրքիա տանելով: Վակըֆի բնակիչները ապաստանել են ծերունիներին: Չնայած որ 120 բնակիչ ունեցող գիւղում տեղը քիչ է, սակայն տեղաբնակների խօսքով՝ 19 մարդու ապաստան տալ իրենք կարող են»,- ընդգծել է Էստուկեանը:

Ըստ նրա՝ այդ կապակցութեամբ Ստամբուլի հայկական համայնքում միջոցներ են հաւաքել, որպէսզի օգնեն տարեցներին: Նա նաեւ ընդգծել է, որ քեսաբահայերը հետ՝ Սիրիա, վերադառնալու ցանկութիւն են յայտնել, մասնաւորապէս՝ Լաթաքիա, սակայն նկատի ունենալով ռազմական գործողութիւնները դա առայժմ հնարաւոր չէ. «Նրանց, իհարկէ, այժմ վտանգ չի սպառնում, սակայն նրանք անհարմարութիւն են զգում, քանի որ հեռացել են հարազատներից ու ծանօթներից»:

Յիշեցնենք, որ սիրիահայերով բնակեցուած սիրիական Քեսաբ աւանը յարձակման էր ենթարկուել Թուրքիայի տարածքից ներխուժած իսլամիստ ծայրայեղականների կողմից:

Հերքեցին Հայ Զինեալներու Մասին Լուրերը

Շարունակուած էջ 1-էն

իոյ իշխանութիւններուն կոչ կ'ուղղէ անյապաղ քայլերու ձեռնարկելու բացառելու համար սահմաններու հետագայ գործածութիւնը ծայրայեղականներու կողմէ:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարեց, որ Պոլսոյ հայոց պատրիարքութեան հետ համագործակցաբար, Ապրիլ 5-ին Քեսապէն Թուրքիա փոխադրուած են 18 հայեր: Անտոլու լրատու գործակալութեան համաձայն, 18 հայերը այժմ կը բնակին հայկական Վաքըֆլը գիւղին մէջ: Նշենք, որ այս տեղեկութիւններուն մասին նախապէս անդրադարձած էին Թրքական եւ պոլսահայ շարք մը լրատուամիջոցներ:

Թրքական գործակալութիւնը վերստին յիշեցուց, որ Թուրքիա պատրաստ է ընդունելու Քեսապի շրջանէն փախուստ տուած հայերը:

Գալիֆորնիոյ Խորհրդարանը նշեց Հայոց Ցեղասպանութեան 99-րդ Տարելիցը

Շարունակուածէջ 1-էն

ցողն էր Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Վարիչ Մարմնի փոխ-ատենապետ Սուրէն Խուտանեան: Ան յատկապէս ընդգծեց որ արդարութիւն պահանջելը ժամանակավրէպ չէ: Աւելի քան մէկ ու կէս միլիոն անմեղ զոհերու դատը հայցելը վաղեմութեան ժամկէտ չունի: Դժբախտաբար օսմանեան կայսրութեան ժառանգորդ հանդիսացող ներկայ Թուրքիան, իր վարքագիծով քիչ կը տարբերուի իր նախորդէն: Անոնք չի կրցան ընդունիլ որ կարելի չէ շարունակաբար դրժել հայոց ցեղասպանութեան հարցը, հսկայածաւալ «ագիտացիոն» ծախսերու գինով: Վստահինք որ Գալիֆորնիոյ օրէնսդիր մարմինը կը ճանչնայ հայց ցեղասպանութիւնը:

Գործադրուեցաւ գեղարուեստական պատշաճ յայտագիր մը: Յուզիչ էր Սամուէլի տուտուկով հնչած՝ «Տլէ Եման»ն ու «Կռունկ»ը: Տպաւորիչ էին հայր եւ որդի Մասիս եւ Արշակ Իսայեանի՝ «Մայր Հայաստան» երգի կատարումն ու Ռուզաննա Եղիազարեանի ասմունքը՝ (Պայրոյ Սեւակի «Անլռելի Զանգակատուն»էն հատուածներ), ինչպէս նաեւ Լենա Մանուկեանի «Կիլիկիա» եւ «Ատանա» երգերու կատարումը:

Սոյն եզակի միջոցառումը եզրափակուեցաւ արժ. Տ. Ասողիկ Քհնյ. Ժամկոչեանի Մեծ Եղեռնի նահատակներու նուիրուած հոգեհանգստեան արարողութեամբ:

Յաջորդ օրը Երկուշաբթի 6 Ապրիլի առաւօտեան Գալիֆորնիոյ Օրէնսդիր զոյգ Մարմիններու (Ծեռակոյտ եւ Ներկայացուցիչներու Ժողով) միացեալ նիստերու գումարման օրն էր: Ներկայ էր ժողովականներու մեծամասնութիւնը հոն էին նաեւ ՀԱԽ-ի, ՍԴՀԿ-ի եւ Հայկական տարբեր կազմակերպութիւններէն աւելի քան 300 հոգիներ: Օրակարգի առաջին հարցն էր՝ «Ապրիլը հռչակել Հայոց Ցեղասպանութեան յիշատակութեան ամիս»:

Նիստի բացման աղօթքը կատարեց Սան Ֆրանսիսքոյի Ս. Յովհաննէս Հայաստանեայց եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Մեսրոպ Քհնյ. Աշ: Ան միաժամանակ յիշատակեց ցեղասպանութեան զոհերը եւ ադէտահար շրջաններու, յատկապէս Հալէպի եւ Քեսապի տառապեալ ու վտարանդի հայերու պարագան, մաղթելով խաղաղութիւն եւ պահանջատէր հայ ժողովուրդի արդար դատի յաջողութիւն:

Իսկապէս յուզիչ էր տեսարանը եւ ոգեւորիչ, երբ դրօշակի արարողութենէն ետք բոլոր ներկաները մէկ վայրկեան յոտընկայս լռութեամբ յարգեցին մեր մէկ ու կէս միլիոն հայ նահատակներու յիշատակը: Առաւել ոգեւորիչ երեւոյթ մըն էր, երբ յաջորդաբար խօսք առին օրէնսդիր մարմնի յարգարժան պատգամաւորները:

Անոնք յարգելով հանդերձ մեր նահատակներու յիշատակը, դատապարտեցին անմեղ հայերու նկատմամբ գործուած 20րդ դարու առաջին ցեղասպանութիւնը, պահանջելով արդար հատուցում հայ ժողովուրդին եւ խաղաղ կարգաւորում Արցախի հիմնահարցին: Արդարեւ իրենց զօրակցական ելոյթներով հանդէս եկան Խորհրդարանի անդամներ՝ Ատրին Նազարեան, Մայք Կաթօ, Խաչիկ Աչաճեան, խօսնակ Ճօ Փերեզ, պատգամաւորներ Ուայլան, Լիու, Նիէլսօն, Պէրիհիլ, հրէական համախմբումի ներկայացուցիչ՝ Պլօք, սպանախօս պլօքի անունով՝ Լարա, Սեւերու համախմբումի կողմէ՝ Միշէլ Ուալանտ:

Վերջաւորութեան Տը Լէոնի կողմէ առաջարկուած թիւ SJR 21 բանաձեւը որդեգրուեցաւ ձայներու ջախջախիչ մեծամասնութեամբ որով՝ Ապրիլ ամիսը կը հռչակուէր Հայոց Ցեղասպանութեան յիշատակութեան ամիս:

Այս կապակցութեամբ օրէնսդիր միացեալ մարմնի կողմէ յայտարարագիրներ յանձնուեցան հայութեան ներկայացուցիչներուն, որոնք դիմաւորուեցան բուռն ծափահարութիւններով:

Ժողովի պաշտօնական բաժինէն ետք ՀԱԽ-ը ներկայացնող զոյգ պատուիրակութիւններ առանձին հանդիպումներ ունեցան հայասէր կարգ մը ծերակուտականներու եւ պատգամաւորներու հետ, որոնք խոստացան զօրակցիլ եւ պաշտպանել հայութիւնը յուզող հիմնական հարցերուն, մասնաւորաբար Արցախի հանրապետութիւնը ճանչնալու խնդրին:

ՎԱՐԴԵՆԻՍ-ՄԱՐՏԱԿԵՐՏ ՄԱՅՐՈՒՂԻՆ

Հռոմէական կայսրութեան օրերուն, ճամբաներն էին որ միացուցին վիթխարի պետութեան զանազան շրջանները, կարելի դարձնելով բանակներու եւ առեւտուրի ազատ ու յարաբերաբար դիւրին շարժումը կայսրութեան մէկ ծայրէն միւսը: Երկու հազարամեակ ասդին, Միացեալ Նահանգներու ճամբաներն ու ազատուղիները իրարու կը կապեն երկրի հսկայական տարածքները, այնպէս որ, օրինակ, կարելի է Սան Տիէկոյէն առնել Միջնահանգային 5 Ազատուղին եւ քշել ուղղակի մինչեւ Գանատա, եւ կամ առնել Միջնահանգային 10 Ազատուղին եւ քշել մինչեւ Ֆլորիտա:

Աւելի քան 50 տարի առաջ, Նախագահ Տուայթ Այզընհաուըր հետեւեալը կ՚ըսէր՝ բացատրելով երկրատարած ճանապարհացանցի մը կարիքը - «Արդիական, դիւրամատչելի ազատուղիներու համակարգ մը էական է մեր մեծցող բնակչութեան, ընդարձակուող տնտեսութեան եւ ազգային ապահովութեան պահանջները գոհացնելու համար»:

Այսօր Հայաստանն ու Արցախը պէտք ունին միջհանրապետական ճանապարհային նոր ցանցի մը, որու շնորհիւ կարելի պիտի ըլլայ ընդլայնել զոյգ հանրապետութիւններու տնտեսութիւնները, աւելի եւս ամրապնդել անոնց ազգային անվտանգութիւնը, եւ, հետեւաբար, սատարել բնակչութեան աճին: Այս հեռանկարներով է որ Հայաստան Համահայկական Հիմնադրամը ներկայիս կը կառուցէ Վարդենիս-Մարտակերտ Մայրուղին:

Պատկերացուած մայրուղին պիտի ըլլայ փոխադրական բովանդակ ցանց մը, ամէն տեսակի ինքնաշարժային երթեւեկի յարմար: Կառուցման աւարտին, Հայաստանն ու Արցախը միացնող այս ճամբան կարելի պիտի դարձնէ աննախընթաց ու ազատ շարժում՝ բազմաթիւ համայնքներու միջեւ:

Հիմնուելով Գորիս-Ստեփանակերտ Մայրուղիի - Արցախը վերականգնելու առաջին համահայկական մեծածաւալ ծրագրի - փորձառութեան վրայ,

Վարդենիս-Մարտակերտ Մայրուղին նշանակալից սատար պիտի հանդիսանայ շրջակայ համայնքներու բարգաւաճման համար:

Ազերի անթարթ ռմբակոծման հետեւանքով քանդուած նախկին ճամբան վերականգնելու կոչուած, Գորիս-Ստեփանակերտ Մայրուղին $11 միլիոն արժէքով ներդրում մըն էր, գումար մը որ ամբողջութեամբ ծախսուեցաւ Արցախի մէջ՝ նպաստելով տեղական տնտեսութեան: Իր բացումէն ի վեր, մայրուղին աւելի քան $38 միլիոնի եկամուտ յառաջ բերած է՝ զբօսաշրջիկային իմաստով միայն, իսկ ճանապարհի կից համայնքներու 65,000 բնակիչներուն համար անմիջական ձեռնմխելիութիւն ստեղծած է՝ ինչ կը վերաբերի առողջապահական ծառայութիւններու, առեւտուրի եւ զբօսաշրջիկային պատեհութիւններու:

Մինչեւ Ստեփանակերտի Օդակայանի բացումը, Գորիս-Ստեփանակերտ Մայրուղին պիտի շարունակէ մնալ Արցախի արտաքին աշխարհին հետ միակ փոխադրական կապը, բանալի դեր ունենալով հանրապետութեան հեռաւոր շրջաններու տնտեսութիւնը բարելաւելու գործընթացին մէջ:

Եօթանասուն երկու մղոն երկարութեամբ Վարդենիս-Մարտակերտ Մայրուղին մեծապէս պիտի դիւրացնէ Արցախի հիւսիսային շրջաններէն, ներառեալ ճամբու կից յօ գիւղերէն, երկրագործական արտադրանքներու փոխադրումը Երեւան՝

Հայաստանի տնտեսական կեդրոնը, եւ այլուր: Մինչ ներկայիս սահմանամերձ Մարտակերտէն Երեւան ճամբորդելը մօտ 6.5 ժամ կ՚առնէ, Վարդենիս-Մարտակերտ Մայրուղիին շնորհիւ այդ ժամանակը պիտի իջնէ նուազ քան 4.5 ժամի:

Մայրուղիի Հայաստանի ճանապարհացանցին միացման շնորհիւ, Արցախեան արտադրութիւնները աննախընթաց դիւրութեամբ պիտի հասնին նաեւ Սեւ Ծովեան

Փօթի քաղաքի նաւահանգիստը, հոնկէ օտար շուկաներ արտածման համար:

Հետեւաբար Արցախեան բարձրորակ ապրանքներու-թարմ բերքէն մինչեւ Մարտունիի գինին- արտածումը կարողականութիւնը ունի մեծապէս նպաստելու լեռնային հանրապետութեան տնտեսական զարգացման:

Արդիւնքը՝ տրուած ըլլալով Արցախի բերրի հողը, հոյակապ կլիման ու արտածման պատրաստ շուկաները, երկրի հողագործները պիտի կարենան տնտեսապէս ինքնաբաւ դառնալ եւ ունենալ ամէն պատճառ՝ իրենց ծննդավայրը մնալու:

Վարդենիս-Մարտակերտ Մայրուղիին շնորհիւ Հայաստանի զանազան շրջաններու միջեւ բարելաւուած կապը, իր կարգին, պիտի սատարէ անոնց տնտեսական վերելքին:

Օրինակի համար, Սեւանայ Լիճը պարփակող Գեղարքունիք Մարզի կլիման յարմարաւէտ է գետնախնձորի մշակման համար միայն. սակայն Վարդենիս-Մարտակերտ Մայրուղիի կառուցմամբ, մարզը պիտի դառնայ նոր ու դիւրամատչելի շուկայ մը՝ հիւսիսային Արցախի մէջ մշակուած լիառատ կանաչեղէնին ու պտղատեսակներուն համար:

Մայրուղիին բերելիք նպաստները պիտի առընչուին նաեւ զբօսաշրջիկութեան:

Մինչ Արցախը հետզհետէ աւելի գրաւիչ այցելավայր մը կը դառնայ արկածախնդիր ճամբորդներու համար, Քարվաճառի եւ Շահումեանի շրջանները այցելուներու քանակի աճէն օգտուելու գլխաւոր թեկնածուներ են: Մայրուղիի կառուցմամբ, զբօսաշրջիկները պիտի կարենան ուղղակիօրէն ճամբորդել Արցախի արեւմտեան ծայրամասէն մինչեւ արեւելեան յանգակէտը-ընտրանք մը որ այսօր գոյութիւն չունի- առիթը ունենալով ընբոշխնելու հանրապետութեան ամբողջ հիւսիսի գեղեցկութիւնը:

Մայրուղիի կառուցումը սկսաւ կապալառուներու մրցոյթի եւ ծրագրի փլանաւորման գործընթացներու աւարտէն անմիջապէս ետք: Փետրուարի կիսուն, եղանակի մեղմացմամբ, գործի լծուեցան շինարարական խումբեր, եւ արդէն զգալի դարձան ծրագրի դրական արդիւնքները: Այսպէս, մինչեւ Մարտ 2014-ի առաջին շաբաթը, 150 անձի աշխատանք հայթայթուած է, եւ կ՚ակնկալուի որ մինչեւ մօտ 300-ի հասնի: Իսկ մինչեւ ծրագրի ամբողջացումը, մայրուղիի բացումէն իսկ առաջ, Հայաստանի եւ Արցախի տնտեսութիւններէն ներս աւելի քան $30 միլիոն ներարկուած պիտի ըլլայ:

Մէյ մը որ կապուի զոյգ հանրապետութիւններու փոխադրական ներկայ շնչերակներուն, Վարդենիս-Մարտակերտ Մայրուղին խորհրդանշական շրջանակ մը կազմած պիտի ըլլայ: Այդ շրջանակը արդիւնքն է Հայաստանի եւ Արցախի զօրացումն ու զարգացումը հետապնդող բազմամեայ, համահայկական ջանքի մը, որ կը հանդիսանայ հպարտանքի եւ ազգային վերանորոգ ինքնավստահութեան աղբիւր մը:

Շնորհիւ համայն աշխարհի հայութեան եւ Հայաստան Համահայկական Հիմնադրամի տեսլականին ու նպատակային սեւեռման, այսօր հայրենիքը աւելի հզօր է քան երէկ, եւ անոր բարգաւաճման հեռանկարը կը պայծառանայ իւրաքանչիւր քայլափոխին:



ԲԱՑԱՅԱՅՏՈՒԱԾ Է ԵՒՐՈԴԱՏԱՐԱՆԻ ՄԷՋ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ԲՈՂՈՔԱԳԻՐԸ

ՑԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ
«Քալիֆորնիա Քուրիըր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր

Զուիցերիոյ կառավարութիւնը երկու շաբաթ առաջ՝ եռամսեայ ժամկէտին վերջին օրը, որոշեց բողոքարկել «Փերինչէքն ընդդէմ Զուիցերիոյ» դատական գործով Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանի (ՄԻԵԴ) վճիռը:

Հակառակ անոր որ Զուիցերիոյ բողոքագիրը կնքուած կը պահուէր մինչ ՄԻԵԴի մէջ անոր քննարկուիլը, սակայն ես յաջողեցայ ձեռք բերել օրինակ մը՝ ֆրանսերէնով: Զուիցերիական բողոքագիրին բովանդակութիւնը առաջին անգամ ըլլալով կը հրապարակուի մամուլին մէջ:

2013 թուականի Դեկտեմբեր 17ին Եւրոդատարանը վճռեց, որ զուիցերիական դատարանները խախտած էին իրաւունքները Տողու Փերինչէքի՝ թրքական աննշան կուսակցութեան մը ղեկավարին, որ 2005 թուականին մեկնած էր Զուիցերիա՝ Հայոց Ցեղասպանութիւնը ժխտելու յատուկ դիտաւորութեամբ եւ տեսնելու, թէ արդեօք զուիցերիական իշխանութիւնները պիտի յանդգնէի՞ն զինք պատժել Ցեղասպանութիւնը «միջազգային սուտ» անուանելուն համար:

Ցեղային խտրականութեան, ցեղասպանութեան ժխտման եւ մարդկութեան դէմ գործած յանցագործութիւններու վերաբերեալ զուիցերիական օրէնքի խախտման մեղադրանքով դատապարտուելէ ետք, Փերինչէքը բողոքարկեց իր դատավճիռը ընդհուպ մինչեւ Դաշնակցային դատարան՝ Զուիցերիոյ բարձրագոյն դատական ատեան, որ հաստատեց անոր մեղքը: Այնուհետեւ, ան դիմեց Մարդու իրաւունքներու եւրոպական դատարան՝ մեղադրելով Զուիցերիան իր տարբեր իրաւունքներու, ինչպէս՝ խօսքի ազատութեան խախտման համար: Զարմանալի է, որ Եւրոդատարանի եօթը դատաւորներէն հինգը արդարացուցին Փերինչէքը՝ նկատել տալով, որ Զուիցերիան խախտած է Եւրոպական համաձայնագիրի որոշ դրոյթներ:

ՄԻԵԴի որոշումը անպատասխան ձգելը լուրջ նահանջ պիտի ըլլար Հայոց Ցեղասպանութեան ճանաչման գործին մէջ, յատկապէս մինչեւ ամբողջ աշխարհի մէջ Ցեղասպանութեան հարիւրամեակի ոգեկոչումը, 24 Ապրիլ 2015: Առաւել կարեւոր է այն, որ Եւրոդատարանի դատաւորները՝ զերազանցելով իրենց իրաւագիրը Փերինչէքի իրաւունքներու թուացեալ խախտումներուն վերաբերեալ, հարցեր բարձրացուցած են Հայոց Ցեղասպանութեան իրաւացիութեան մասին: Անոնք նաեւ անհիմն ու մակերեսային տարբերութիւններ նշած են Հայոց Ցեղասպանութեան եւ հրէական Ողջակիզումի միջեւ, սահմանելով, որ առաջինը ժխտողները պատժելը անօրինական է, մինչդեռ վերջինը ժխտողները մեղադրելը՝ ճիշդ:

Նկատի առնելով Հայ Դատի վրայ այս անարդար որոշման խիստ վնասակար հետեւանքները, Հայաստանի կառավարութիւնը, աշխարհասփիւռ հայկական համայնքները եւ յատկապէս Զուիցերիոյ հայերը, մեծ աշխատանք կատարեցին, որպէսզի Զուիցերիան բողոքարկէ ՄԻԵԴի վճիռը Փերինչէքի գործով: Իրականութեան մէջ, զուիցերիական իշխանութիւնները հայերու կողմէ յորդորման կարիք պէտք չէ ունենային, քանի որ անոնք պարտաւոր էին պաշտպանելու իրենց սեփական դատարաններու որոշումները, ներառեալ նաեւ Դաշնակցային դատարանի եւ իրենց երկրի իրաւական համակարգին վարկը:

2014 թուականի Մարտ 17ին ներկայացուած վեց էջանոց զուիցերիական բողոքը կը հաստատէ, որ ՄԻԵԴի վճիռը կը բարձրացնէ Մարդու իրաւունքներու եւրոպական համաձայնագիրին առնչուած «մեկնաբանման եւ կիրարկման լուրջ հարցադրումներ»՝ հետեւեալ երեք պատճառներով.

- Դատական որոշումը կը ներառէ հարց մը՝ Հայոց Ցեղասպանութիւնը, որ երբեք չէ քննարկուած ՄԻԵԴի մէջ: Այս գործը կը բարձրացնէ երկու հիմնարար իրաւական հարց, որոնցմով Եւրոդատարանը չէ զբաղած. Ցեղասպանութեան իրաւական որակաւորումը եւ խօսքի ազատութեան սահմանը, երբ Համաձայնագիրի անդամ պետութիւն մը ցեղապաշտութեան դէմ պայքարի ծիրին մէջ կը քրէականացնէ ցեղասպանութեան ժխտումը:

- Դատական որոշումը անհարկի ձեւով կը նուազեցնէ Զուիցերիոյ «հայեցողութեան շրջագիծը»՝ համաձայն ՄԻԵԴի իրաւագիտութեան փորձին: Փերինչէքը բազմիցս յայտարարած է, որ ան երբեք չի փոխեր իր կարծիքը Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ: Անոր ժխտողական դիրքորոշումը «խիստ վիրաւորական» է: Եւրոդատարանի պնդումը, որ նման անձնաւորութիւն մը կրնայ սոյն հարցին վերաբերեալ իր ուսանդը բերել «բանավէճին եւ պատմական ուսումնասիրութեան»՝ «կը շեղէ ՄԻԵԴի հաստատուած եւ հաւասարակշռուած իրաւագիտութենէն»:

- Դատական որոշումը կը ստեղծէ «արհեստական տարբերութիւններ»: Փերինչէքը ոչ միայն պարզապէս չէ օգտագործած ցեղասպանութիւն եզրը, այլ նաեւ հայերու զանգուածային սպանութիւնները որակած է իբրեւ «միջազգային սուտ»: Բացի ատկէ, թէեւ չէ եղած միջազգային դատավճիռ Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ, սակայն Թրքական դատարանի 1919 թուականի վճիռը՝ ընդդէմ Հայոց Ցեղասպանութեան հեղինակներու, «կազմած է արժանահաւատ ապացոյցներու տարր՝ «ճանչնալով փաստերը կամ անբարենպաստ վերաբերմունքը» Միջազգային դատարանի իրաւագիտութեան փորձին վերաբերեալ: Աւելին, նոյնիսկ «Նիւրենպերկեան դատարանը չէ նշած ցեղասպանութիւն եզրը» եւ նացիական յանցագործները «դատապար-

Շար.ը էջ 18



ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՓԱՍԱՏԻՆԱ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ԱՌՋԵՒ

Հայկական ցեղասպանութեան 99-րդ տարեդարձի ոգեկոչումը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի 24 Ապրիլ, 2014, առաւօտեան ժամը 10:00-ին, Փասատինա քաղաքի քաղաքապետարանին առջեւ (100 N. Garfield Ave.):

Այս ոգեկոչումը կազմակերպուած է Փասատինայի Հայ Համագաղութային Մարմինի կողմէն, մասնակցութեամբ Փասատինա քաղաքի պատկան իշխանութեան, հայ կազմակերպութիւններու, եկեղեցիներու եւ տեղական դպրոցներու աշակերտութեան:

Յայտագիրը կը սկսի ամերիկեան դրօշակներու ներկայացումով որ պիտի կատարուի Հ.Բ.Ը.Մ. սկաուտներու կողմէն, եւ որուն պիտի յաջորդէն ամերիկեան եւ Հայաստանի Հանրապետութեան քայլերգները: Հ.Բ.Ը.Մ. երիտասարդները պատուոյ պահակները պիտի ըլլան:

Ամէն տարուայ պէս, քաղաքի, գաւառի եւ նահանգի բարձրաստիճան անձնաւորութիւններ ներկայ պիտի ըլլան, ոմանք ալ յայտագրին մաս պիտի կազմեն:

Երկու գլխաւոր խօսնակները պիտի ըլլան, անգլերէնով՝ տոքթ. Համբիկ Սարաֆեան եւ հայերէնով՝ Անտոն Ծ. Վրդ. Ադամեան: Երիտասարդի մը կողմէն հայ երիտասարներու ուղղուած կարճ պատգամ մըն ալ պիտի հաղորդուի:

Marshall Fundamental School Orchestra-ն յարմար նուագներով ելոյթ պիտի ունենայ:

Ինչպէս կը տեսնէք, այս տխուր առիթին, մեր ներկայացուցածը մշակութային պատշաճ յայտագիր մըն է որուն հրաւիրուած է հայ հասարակութիւնը: Փասատինայի Հայ Համագաղութային Մարմինը եւ հայ համայնքը հպարտ պիտի ըլլան ձեր ներկայութեամբ եւ պիտի քաջալերուին այս ոգեկոչումի ձեր մասնակից փորձառութեամբ:

ԵՐԵԿՈՅ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՆԱՀԱՏԱԿ ԳՐՈՂՆԵՐԻՆ

ՎԱՀԷ ՄԵՍՐՈՊԵԱՆ

«Գալիֆորնիայի հայ գրողներ» միութիւնն իր հերթական միջոցառումն անցկացրեց Գլենդելի Հանրային գրադարանում, որը նուիրուած էր հայ նահատակ գրողների ոգեկոչմանը:

Երեկոյի անցկացման իր բացման խօսքում «Գալիֆորնիայի հայ գրողներ» միութեան նախագահ, բանաստեղծ Գէորգ Քրիստինեանը նախ խնդրեց, որ մէկ րոպէ լռութեամբ յարգել նահատակ մտաւորականների, Հայոց Ցեղասպանութեան անմեղ զոհերի յիշատակը, ապա ան հանդէս եկաւ մի քանի յայտարարութիւններով: Օրուան հաղորդավար Սեդա Հայրիյեանը խօսափողի մօտ էր հրաւիրում լոսանճելոսեան հայ համայնքի մտաւորականներին, ովքեր իրենց խօսքով, ասմունքով, երգելով, կարդալով, նուագելով ներկայացրեցին մեր նահատակ գրողների կեանքի որոշ դրուագներ, նրանց ստեղծագործութիւնները, նրանց մասին ասուած խօսքերը:

Մտաւորականների խօսքերն ընդմիջւում էին հայ գրողների ձեռնարկների մշտական մասնակից, Ժաննա Խաչատրեանի դաշնամուրային նուագակցութիւններով:

Երգահան, արձակագիր Հենրիկ Անասեանը եւ Սեդա Հայիրեանը հատուածներ կարդացին «Կոմիտասը՝ ինչպէս եղել է» գրքից: Գրող, Տաճատ Ծ. Վրդ. Եարտմեանը հանգամանալից ներկայացրեց Յակոբ Օշականին: Գրող, արձակագիր Մարգարիտ Դերանցը կարդաց Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւններից: Ասմունքով հանդէս եկաւ նաեւ մանկագիր Ֆիրա Ակեանը, ապա վերլուծական խօսքով հանդէս եկաւ հեռուստալրագրող Ծերուն Թադէոսեանը, իսկ բանասէր Յովսէփ Նալբանդեանը ներկայացրեց ուսումնասիրութիւններ, որտեղ ասւում է, որ թուրք ջարդարարների կողմից իրականացուած ցեղասպանութիւնը հայ ազգի նկատմամբ սկսուել է 1894-96թթ. եւ աւարտուել 1923թ., որի ժամանակահատուածում նահատակուեցին մօտ 2մլն հայեր եւ որ մենք պէտք է խօսենք այս թուի մասին, այլ ոչ 1,5մլն-ի մասին: Երեկոյի հիւր, ճանաչուած բանաստեղծ, Երեւանի Պետական համալսարանի պրոֆեսոր Արտեմ Յարութիւնեանը հանդէս եկաւ իր նոր բանաստեղծութեամբ, որը նուիրուած էր այս օրերին հայ, հասարակութեան ուշադրութիւնը՝ Քեսապին: Նա իրեն յատուկ առոգանութեամբ ներկաներին կարծես նորից յիշեցրեց հայկական այդ գաղթօճախում կատարուող ոճրագործութիւնները՝ Թուրքը մնում է Թուրք:

Դաշնակահար Ժաննա Խաչատրեանի նուագակցութեամբ Կոմիտասի «Անլռելի զանգակատուն» պոէմից հիանալի շեշտադրութեամբ հատուածներ կարդաց շնորհալի երիտասարդ Արամ Մուրադեանը: Իսկ երգչուհի Անահիտ Մանուկեանը կատարեց մի քանի երգեր, որոնց լռելեայն եւ բաձրաձայն ձայնակցում էին նաեւ ներկաները, որովհետեւ ներկաների համար անմիջական եւ հոգեհարազատ էին այդ երգերը՝ դրանք յիշեցնում էին իրենց նախնիների տառապանքներն ու դեգերումները: Իր կատարումներով ներկաներին ոգեւորց նաեւ երիտասարդ, ճանաչուած երգիչ Նարեկ Ներսիսեանը:

Երեկոյի մասնակիցները ջերմօրէն ընդունեցին եւ ծափահարեցին ելոյթ ունեցողներին: Ափսոս, որ նման ձեռնարկն անուշադրութեան է մատնուում մեր հայ հասարակութեան կողմից:

HYEAID3 ՀԱՄԵՐԳԸ՝ Ի ՆՊԱՍՏ ՔԵՍԱՊԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Սուրիոյ Հայութեան Զօրակցութեան Միացեալ Գործադիր Մարմինը իր առաքելութեան հաւատարիմ՝ պատշաճ կոչերով, հաղորդագրութիւններով, հանգանակութեամբ եւ գլխաւոր երկու գեղարուեստական ձեռնարկներով՝ HayAID1 եւ HayAID2 փորձեց նիւթաբարոյական մեծ օժանդակութիւն ապահովել՝ յանձինս մեր ազնիւ արուեստագէտներու եւ հայրենակիցներու կամաւոր ներդրումին եւ մասնակցութեան:

Այսօր նոր կանչ մը՝ Օգնենք Մեր Քեսապին...

Եկէ՛ք միասնաբար, Երեքշաբթի, Ապրիլ 29ի երեկոյեան ժամը 7-ին Կլէյնտելի Alex Theatre համերգասրահին մէջ ունկնդրելու սիրուած Հայ արուեստագէտներու, որոնք սիրայօժար իրենց արուեստի ճամբով պիտի նպաստեն տեղահանուած՝ Քեսապահայութեան բարօրութեան:

Կը խնդրենք որ շտապէք եւ ապահովէք ձեր տոմսակները՝ www.itsmyseat.com/HyeAID կայքէջի հասցէով կամ տրամադրուած թիւերով մեր կամաւորներուն հեռաձայնելով:

***

Սուրիոյ Հայութեան Զօրակցութեան Միացեալ Մարմինը կազմուած է Օգոստոս 2012ին հետեւեալ անդամներով.- Հայ Առաքելական Եկեղեցւոյ Ա.Մ.Ն.ի Արեւմտեան Թեմ, Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմ, Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութիւն, Հիւսիսային Ամերիկայի Հայ Կաթողիկէ Թեմ, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւն, Հայ Օգնութեան Միութեան Ա.Մ.Ն.ի Արեւմտեան Շրջան, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, Ռամկավար Ազատական Կուսակցութիւն եւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն: Մեր հասցէն է՝Syrian Armenian Relief Fund, P.O. Box 1948, Glendale, CA 91209-1948: Համացանցի հասցէն է՝ www.SyrianArmenianReliefFund.org

Հ.Բ.Ը.Մ-Ի ՍԱԹԱՄԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆԻ «ՇՈՂՈՔՈՐԹԸ»

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Սաթամեան Թատերախումբը մեծ խանդավառութեամբ կը պատրաստուի ներկայացնել անմահ երգիծաբան Յակոբ Պարոնեանի «Շողոքորթը», բեմադրութեամբ Գեղարուեստական ղեկավար Գրիգոր Սաթամեանի: Ինչպէս Մոլիէռի, Շէյքսպիրի եւ Չեխովի թատերգութիւնները՝ Պարոնեանի գործերն ալ չեն կրնար ժամանակավրէպ դառնալ, որովհետեւ նոյն նկարագիրի տէր մարդիկ տակաւին գոյութիւն ունին մեր հասարակութեան մէջ եւ դժբախտաբար տակաւին կը գործեն չարաշահելով անմեղ եւ միամիտ մարդիկը:

«Շողոքորթ»ը երաժշտախառն կատակերգութիւն մըն է երեք արարով որ պիտի ներկայացուի Մայիսի 3էն սկսեալ երկու թատերասրահներու մէջ՝ հետեւեալ կարգով:

. Մայիս 3, 4, 17 եւ 18՝ Հ.Բ.Ը. Միութեան Փասատինայի «Վաչէ եւ Թամար Մանուկեան» կեդրոնին մէջ:

. Մայիս 31, Յունիս, 1, 7 եւ 8՝ Հ.Բ.Ը. Միութեան Մանուկեան-Տէմիրճեան վարժարանի «Աղաճանեան սրահին մէջ, (Canoga Park):

Շաբաթ օրերը ժամը 8:00ին, իսկ Կիրակի օրերը ժամը 6:00ին:

Տոմսերու արժէքն է $25

Մի փախցնէք այս բացառիկ առիթը եւ կանուխէն ապահովեցէք ձեր տոմսերը հեռաձայնելով Հ.Բ.Ը. Միութեան գրասենեակը, (626) 794-7942:

www.massispost.com
daily news updates

Massis Weekly

Volume 34, No. 13 Saturday, April 12, 2014

Dem.am Activists Stage Sit-In Protest in Yerevan City Center

YEREVAN -- Members and supporters of Dem.am civil movement campaigning against the controversial pension reform staged a protest in Yerevan on Wednesday, declaring that it was in support of the recent decision by the Constitutional Court that found some of the provisions of the law to be against the Constitution.

The crowd blocked a major street opposite the Finance Ministry building in the city center for more than two hours, demanding a meeting with Finance Minister Davit Sargsian. It said he must explain why tax authorities have continued enforcing the reform even after it was declared unconstitutional by Armenia's Constitutional Court last.

Davit Manukian, a leader of the Dem Em (I Am Against) pressure group campaigning against the reform said the authorities should comply with the Constitutional Court ruling handed

Continued on page 3

Armenian Genocide Commemorated at the California State Capital

Armenian Genocide vigil at the California State Capital

SACRAMENTO, CA – The Armenian Council of America, in partnership with the Armenian-American community of Sacramento, organized an informative and empowering evening vigil, commemorating the 99th anniversary of the Armenian Genocide at the California State Capital on Sunday, April 6.

The program for the solemn occasion led by Mistress of Ceremonies Ms. Christine Aghakhanian, included dignitaries, members of clergy and community leaders, began with an invocation by Father Asoghig Jamgochian of the St. James Armenian Church, followed by remarks by ACA Board Member Mr. Krikor Moloyan and Social Democrat Hunchakian Western Region Executive Committee member Mr. Suren Khudanyan. Both gentlemen expressed the worth of acknowledging the Genocide and addressing the issue so that history does not repeat itself as it has in recent years in other parts of the world.

Among the dignitaries in the audience was Assemblymember Roger Dickinson of the 7th Assembly District who expressed his solidarity for the Armenian Cause. Also in attendance were a group of over a dozen

Continued on page 3

AJR 32 Moving Forward in State Assembly

ACA representatives with Speaker of the State Assembly John Perez

SACRAMENTO, CA – On April 7, a delegation of over 100 members from the Armenian Council of America participated in a day of advocacy to gain support for Assembly Joint Resolution 32 during the annual Armenian Genocide Commemoration sponsored by the California State Senate and Assembly at the State Capitol.

The delegation, made up of members from all throughout the Golden State, met with several elected officials discussing Assembly Joint Resolution 32 and effectively gaining support from a large number of Assemblymembers. Some of the State representatives the ACA met with, included, Speaker of the State Assembly John Perez, Scott Wilk, Mike Gatto, Katcho Achadjian, Chris Holden, Ed Chau, Adrin Nazarian, Roger Dickinson, Tim Donnelly and several others.

AJR 32 calls for the United States to recognize the Nagorno-Karabakh Republic as a sovereign state, invokes strong language from the United States' own history regarding the rights of the people to "self-determination and democratic independence." If Gatto's resolution passes, it would make California the most populous governmental entity to call for Nagorno-Karabakh's recognition or to recognize it outright.

Assemblymember Mike Gatto, announced today that through the collaborative efforts of the ACA, AJR 32 will move forward in the policy com-

Continued on page 3

Senators Robert Menendez and Mark Kirk Introduced New Armenian Genocide Resolution

SenatorS Robert Menendez (D-NJ) and Mark Kirk (R-IL)

WASHINGTON, D.C. – Senator Robert Menendez (D-NJ), a long-time champion of Armenian issues and powerful voice for justice, along with Senator Mark Kirk (R-IL), who previously served as Co-Chair of the Armenian Caucus during his tenure in the House of Representatives (House), introduced a new Armenian Genocide resolution on Thursday.

The Senate action comes as House Foreign Affairs Chairman Rep. Ed Royce (R-CA) and Ranking Member Rep. Eliot Engel (D-NY) last week introduced H.R.4347, the Turkey Christian Churches Accountability Act,

Continued on page 3

Three Azeri Soldiers Killed, Six Wounded in a Fresh Act of Sabotage

Azerbaijan's Defense Ministry says three Azerbaijani soldiers were killed and six others wounded in a mine explosion along the border with Nagorno-Karabakh.

Azerbaijani news agencies cited the Defense Ministry in Baku as saying Tuesday that the soldiers led by a captain hit a landmine at a section of Armenian-Azerbaijani "line of contact" southeast of Karabakh. They said the officer, Jeykhun Orujaliyev, and two conscripts died on the spot. One of them, Seyfaddin Kerimov, was a former wrestling champion of Azerbaijan, reported SalamNews.az.

Two of the wounded soldiers were said to be in a critical condition and were flown to a military hospital in Baku by a helicopter.

Azerbaijani Defense Minister Zakir Hasanov reportedly visited the frontline section on Tuesday to personally investigate the incident. According to the Trend news agency, Hasanov's press office said that the "accident" occurred while the soldiers reinforced their trenches.

The Karabakh Defense Army later today reported that the Azerbaijani side attempted another reconnaissance-sabotage activity, but the attack was repulsed and Azeri soldiers had to retreat via a minefield.

"The Karabakh side suffered no casualties while fighting back the Azerbaijani attackers," the Karabakh Defense Army said in a statement. "Following the incident, frontline units of the Defense Army continue to … control the situation along the entire Line of Contact."

The incident occurred less than three months after an upsurge in deadly ceasefire violations on "the line of contact" around Karabakh and the Armenian-Azerbaijani border. It was sparked by the killing of an Armenian soldier in northeastern Karabakh, which the military authorities in Stepanakert and Yerevan said was the result of a failed Azerbaijani commando raid. The Azerbaijani military denied attacking Karabakh Armenian positions in the area. It acknowledged suffering two casualties, both of them officers, there in the following days.

UN Chief Condemns Violence in Syria, Including Armenian-Populated Kessab

NEW YORK (Armradio.am) — UN Secretary-General Ban Ki-moon on Monday urged the warring parties in Syrians and their supporters to "do everything" to protect civilians in the Middle East country, where armed conflicts entered its fourth year in March.

In the face of troubling new reports of atrocities in the brutal conflict driving Syria to its destruction, the Secretary-General demands that warring parties and their supporters ensure that civilians are protected, regardless of their religion, community or ethnic affiliation. Both the Syrian government and armed groups have the legal obligation and moral responsibility to do so. They must do everything to avoid and prevent violence against civilians, including indiscriminate shelling and air attacks on civilian areas.

The killing of an elderly priest, Father Frans van der Lugt, in Homs yesterday is but the latest tragedy highlighting the urgent need to protect civilians. The Secretary-General condemns this inhumane act of violence against a man who heroically stood by the people of Syria amid sieges and growing difficulties.

The Secretary-General is also horrified by the gruesome images purporting executions in the Syrian town of Kassab. While the United Nations is unable to confirm the validity of these reported atrocities, gross human rights violations undeniably continue and residents of entire villages such as Kassab have been forced to flee. Government forces continue to indiscriminately destroy whole neighbourhoods, burying entire families beneath the rubble of their homes. The Secretary-General is also extremely concerned that groups listed as terrorist organizations by the United Nations Security Council continue to brutalize the civilian population.

There is a belief by too many in Syria and beyond that this conflict can be won militarily. More violence will only bring more suffering and instability to Syria and sow chaos in the region. The Secretary-General again urges all Syrians and their outside supporters to put a stop to this conflict, now. For the sake of families and communities across Syria, the Secretary-General appeals to all sides to permit immediately the unfettered access of humanitarian assistance and workers.

Under the Secretary-General's leadership, the United Nations is prepared to contribute to a new day in Syria by fostering a political settlement, providing humanitarian assistance, and supporting reconstruction.

Twitter Vice President Raffi Krikorian to Visit Armenia in Mid April

YEREVAN -- Tumo board member and Twitter Vice President Raffi Krikorian will be visiting Armenia in mid April at the invitation of Tumo, Tumo center said in a statement.

During his week-long visit, Krikorian will lead two computer programming workshops, give a public lecture, and meet with representatives of the Armenian IT community and government.

Krikorian and his teams manage the core infrastructure of Twitter, including its databases, server clusters, and software libraries. Prior to Twitter, Krikorian, a graduate of the Massachusetts Institute of Technology, co-founded the personal energy management platform WattzOn, ran a consulting company, and taught at the New York University Interactive Telecommunications Program.

On April 18, 2014, Krikorian will give a public lecture on Software Development Management titled "The things that turn out to matter" about lessons learned while running engineering at Twitter. He will lead an advanced programming workshop open to university students and recent graduates, focusing on the Twitter API, and an intermediate level workshop for Tumo students on good coding practices.

" Recognize the Crime of the Century, the Armenian Genocide"

By Rosario Teixeira
Peace of Art, Inc.

BOSTON -- During the month of April, the 2014 Armenian Genocide commemorative billboards will be displayed at the corner of Arsenal and School Streets in Watertown; on Cambridge Street, at the Lechmere Station in Cambridge; and on Route 1 South, 1/4 mile from the Gillette Stadium, in Foxboro.

Sponsored by Peace of Art, Inc., www.PeaceofArt.org, the 2014 Armenian Genocide commemorative billboards honor the victims and survivors of the Armenian Genocide. In this year's message "Recognize the Crime of the Century, the Armenian Genocide," the word 'genocide' has imbedded the number 100, and handcuffs. The number 100 refers to the approaching 100th anniversary of the Armenian Genocide. The handcuffs refer to a century of victimization and denial by the perpetrators of the Armenian Genocide and their supporters. The Armenian Genocide was the crime of the century because it was the first genocide of the 20th century. Had the genocide been condemned by the world community, the governments that followed most likely would not have used genocide as the means to eliminate unwanted groups of their populations segregated by race, religion or ethnicity.

Millions of people around the world have been killed, victims of genocide, for political motives, and ethnic cleansing. Since the Armenian genocide took place in the beginning of the 20th century, genocide has become an effective tool of war, to eliminate unwanted sectors of the population segregated by race, or religion, or ethnicity. As the Armenian people struggle for recognition of the crime of the century, the world remains 'blind' to crimes against humanity perpetrated around the globe. The world community must recognize the Armenian genocide and condemn such crimes against humanity.

In 1996, Peace of Art, Inc. founder and president, Daniel Varoujan Hejinian, began to display the annual Armenian Genocide commemorative billboards, bringing awareness about the Armenian Genocide to the community at large. Since 2003, through the annual commemorative billboards, Peace of Art, Inc., www.PeaceofArt.org has been calling for the recognition of the Armenian Genocide, and it has urged the community at large, the President of the United States, and the United Nations to recognize the Armenian Genocide. It is time to urge Turkey to recognize the Armenian Genocide, and to make amends.

"To deny the Armenian Genocide is to further victimize those who perished and their descendants, it is an act of blaming the victims. After a century of denial, it is time to place the 'handcuffs' on the criminals. For those who think that after the last survivor dies there will be no more witnesses, and with the passing of time the Armenian genocide will be forgotten, know that all Armenians are survivors of the genocide, and as long as the Armenian genocide remains unrecognized by Turkey, millions of Armenians around the world will demand recognition and justice." Said the president of Peace of Art, Inc., Daniel Varoujan Hejinian.

Peace of Art, Inc., is a non-profit educational organization registered with the Massachusetts Secretary of State, and tax exempt under section 501(C)(3). For more information visit www.PeaceofArt.org

HayastanInfo.net

AJR 32 Moving Forward in State Assembly

Continued from page 1

mittee and will be on its way to get full consideration by the State Assembly. The Resolution is projected to be heard on the Assembly floor after the Spring recess around April 28. Four other states have passed similar legislation, including Louisiana, which was spearheaded by the ACA Louisiana Chapter.

The day-long activities featured a reception where dignitaries, including Senator de Leon and Lara, Assemblymembers Gatto, Achadjian, Wilk, Gomez, Brown, Nazarian and others, reiterated their supportive stance towards recognition of the Armenian Genocide and applauded the audience for all their efforts in working towards the Armenian Cause.

Armenian Genocide Commemorated

Continued from page 1

SEIU Local 721 Armenian Caucus members, who travelled to Sacramento from Los Angeles to partake in the annual State Capitol Armenian Genocide commemorative events.

A duduk performance of "Dle Yaman" and "Groong" by Samvel, enchanted the audience as father and son duo Masis and Arshak Isayan sang "Mayr Hayastan." Ms. Ruzanna Yeghiazarian gracefully recited Paruyr Sevak's "Anlereli Zangakatun" as Ms. Lena Manoogian sang "Adana" and "Cilicia" to pay tribute to those who perished during the Genocide.

The event concluded with a hokehangist prayer by Father Jamgochian who prayed for the memory of the victims of the Genocide.

Senators Robert Menendez and Mark Kirk

Continued from page 1

which requires an annual report from the U.S. Department of State on the status of stolen, confiscated or unreturned Christian properties in territories controlled by Turkey. The Royce-Engel effort builds on the successful House passage of similar legislation in 2011.

"Next year will mark the 100th anniversary of the Armenian Genocide, during which 1.5 million Armenians were killed by Ottoman Turkey. There are only a few brave survivors left, such as 107-year-old Helen Paloian of Chicago, who lost her parents and two brothers," Senator Kirk said. "To honor the survivors and the memory of those lost, and to lead globally on human rights, the United States should finally join the European Union and 11 of our NATO allies in officially recognizing the Armenian Genocide."

"The Armenian Genocide is a horrifying factual reality that can never be denied," Chairman Menendez said. "This resolution reaffirms in the strongest terms that we will always remember this tragedy and honor the memory of innocent Armenian men, women and children who were killed and expelled from their homeland. The Armenian Genocide must be taught, recognized, and commemorated to prevent the re-occurrence of similar atrocities from ever happening again."

The Armenian Genocide resolution expresses the sense of the Senate, "To remember and observe the anniversary of the Armenian Genocide on April 24, 2014; That the President should work toward an equitable, constructive, stable, and durable Armenian-Turkish relationship that includes the full acknowledgment by the Government of the Republic of Turkey of the facts about the Armenian Genocide;" and "That the President should ensure that the foreign policy of the United States reflects appropriate understanding and sensitivity concerning issues related to human rights, crimes against humanity, ethnic cleansing, and genocide documented in the United States record relating to the Armenian Genocide."

Armenian Diaspora United for #SaveKessab HyeAID3 Concert

GLENDALE, CA -- Over the past two years, the Syrian Armenian Relief Fund (SARF) Executive Committee has been faithful to its mission, with calls to action, press releases, fundraisers and two major concerts, HyeAID and HyeAID2, combining our efforts, with those of artists and volunteers.

Today's call to action is to #SaveKessab.

Join us on Tuesday, April 29, 2014, at 7 p.m., at the Alex Theatre, 216 N Brand Blvd., Glendale, CA 91203. Let us be delighted by the appearance of beloved and admired artists, who are volunteering their time for the sake of the Armenians of Kessab, who had to flee their ancestral homes to survive.

Get your tickets at www.itsmyseat.com/HyeAID or call the telephone numbers listed on our flyer.

***

The following churches, charities and organizations came together to form the Syrian Armenian Relief Fund in August 2012: Armenian Catholic Eparchy in North America; Armenian Evangelical Union of North America; Western Diocese of the Armenian Church; Western Prelacy of the Armenian Apostolic Church of America; Armenian General Benevolent Union; Armenian Missionary Association of America; Armenian Relief Society of Western U.S.A.; Armenian Democratic Liberal Party; Armenian Revolutionary Federation-Western U.S.A.; and Social Democrat Hunchakian Party-Western U.S.A. The SARF mailing address follows: P.O. Box 1948, Glendale, CA 91209-1948. The web site address follows: www.SyrianArmenianReliefFund.org.

Benefit Evening for Dikranagerd's St. Giragos Church to be Held at Hovnanian School

St. Giragos Church before and after renovation (Photo credit: George Aghjanian)

NEW MILFORD, NJ - Dikranagerdtsis present a benefit evening to raise funds for the restoration efforts of the St. Giragos Church in Dikranagerd, Turkey on Saturday evening, May 17 at the Hovnanian Banquet Hall in New Milford, New Jersey.

The evening will be under the auspices of His Eminence Archbishop Khajam Barsamian, Primate of the Eastern Diocese, and will feature traditional Armenian music by Udi Yervant, who will be traveling straight from Dikranagerd to perform, as well as local oud player Mike Uzatmajian.

One of the most significant works in Armenian architecture, St. Giragos is the largest Armenian Church in the Middle East. The church, which remains in the possession of the Armenian community, under the jurisdiction of the Patriarchate of Istanbul, Turkey, was originally constructed in the 15th century and was rebuilt and enlarged in the 19th century after a fire. The first bell tower of the church was built in 1884 (cast by the world famous Zildjian Company), making it the tallest structure in Dikranagerd. Renowned for having seven altars signifying 'eternity' in the Armenian alphabet, the church can accommodate more than 2,500 faithful during services.

The church was damaged in 1915 at the start of the Armenian Genocide and was later used as a headquarters by German officers during World War I and then as a warehouse until the 1950s when the few Armenians left in Dikranagerd continued to worship in the chapel in the courtyard of St. Giragos. This small community managed to regroup and reopened the church for use by the Armenian community in 1960, although the structure had become severely dilapidated.

A group of concerned parishioners, led by Vasken Ergun Ayik, St. Giragos Parish Council Chairman, stepped in six years ago to begin restoration on the church. Through fundraising events by the St. Giragos Parish Council and Dikranagerdtsis worldwide, two and a half million dollars has been raised thus far. Ayik will be in attendance at the Benefit Evening to deliver updates on the progress of the fundraising and renovations.

"The St. Giragos Church is the first church in Anatolia to be restored by Armenians," said Ayik, who noted that the community refused to hand over ownership of the church to the Turkish ministry in return for its support because St. Giragos would have opened as a museum. "This church is the heritage of all humanity."

The Benefit Night will take place on Saturday, May 17 at 7:30 pm at Hovnanian Banquet Hall, 817 River Road, New Milford, New Jersey. Donation $80. For reservations, please call: Hirant Gulian at 212-764-8730, Zivart Gulian at 201-906-0553, Ruby Gulian at 201-313-1762 or Sonya Bekarian at 201-315-5916.

Taleen Babayan

www.massisweekly.com
Updated every Friday

Prof. Richard Hovannisian to Speak on "The Armenians of Gesaria"

(From Evkere and Talas to Mount Arkeos, Chomakhlu, and Evereg)

FRESNO -- Dr. Richard G. Hovannisian of UCLA will speak on "The Armenians of Gesaria" (From Evkere and Talas to Mount Arkeos, Chomakhlu, and Evereg) at 7:30 PM on Friday, April 25, 2014, in the Industrial Technology Building, Room 101 Auditorium, on the Fresno State campus (corner of Barstow and Campus Drive).

The presentation is part of the Spring Lecture Series of the Armenian Studies Program and is co-sponsored by the Armenian Students Organization as part of the activities commemorating the 99th Anniversary of the Armenian Genocide. The Leon S. Peters Foundation has supported the Lecture Series for the 2013-2014 academic year.

By tradition, the Armenian presence in Cappadocia and Gesaria/Kesaria dates back to the times of Tigran the Great and Gregory the Illuminator. Down through the centuries Armenian communities in the area grew in number and in size.

Professor Hovannisian has visited Gesaria (now Kayseri) several times and will give a short overview of the region's Armenian history and the significant roles played by Armenians, both in urban and rural Gesaria

Dr. Richard G. Hovannisian is past holder of the UCLA Armenian Educational Foundation Chair in Modern Armenian History and Distinguished Chancellor's Fellow at Chapman University, Orange County.

Hovannisian is the author of Armenia on the Road to Independence, the four-volume history The Republic of Armenia, and has edited and contributed to more than twenty-five books including The Armenian Genocide in Perspective; The Armenian People from Ancient to Modern Times; Remembrance and Denial; Looking Backward, Moving Forward; and The Armenian Genocide: Cultural and Ethical Legacies.

Copies of Armenian Gesaria as well as many other titles from the "Historic Armenian Cities and Provinces" series will be available for purchase and signing by Prof. Hovannisian.

The lecture is free and open to the public. Free parking, no permit necessary, is available in Lots P23, P24, or P20, adjacent to the Industrial Arts building.

For more information on the lecture please contact the Armenian Studies Program at 278-2669.

Dem.am Activists Stage Sit-In Protest

Continued from page 1

down on April 2. He said that means the State Revenue Committee must stop forcing employers to withhold 5 percent of gross wages paid to workers born after 1973.

In a surprise public appearance, former Prime Minister Tigran Sarkisian addressed the protesters when he arrived at the scene and urged them to discuss the matter inside the ministry building. "Please come with us to the Finance Ministry hall," he said through a megaphone. "Up to a hundred people can fit in there. Let's discuss your issues there. We cannot discuss legislative changes on the street."

The crowd responded with boos and jeers. "So what do you want?" the ex-premier asked before leaving the scene. He refused to answer questions from journalists.

By ruling against some of the provisions of the law, the Constitutional Court gave the government and the National Assembly until the end of September to make appropriate amendments.

Members and supporters of the initiative plan to hold a rally in Yerevan on April 12 to address the situation created after the Constitutional Court's decision and present their further actions.

ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՆ ՊԱՏԱՆԴ Է - 12

ՈՍԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ

Եկեղեցին պարտաւոր է յատակ կեցուածք ունենալ ժողովուրդի ամէնօրեայ կեանքին մէջ տեղի ունեցող բժշկական վիժումներուն մասին, որոնք ժամանակի ընթացքին կրնան խախտել մեր գոյութենական պայքարի հիմերը:

Աստուածաշնչական ուսուցումի համաձայն, դատապարտելի է վիժումը զանազան պատճառներով: Թէեւ շատեր կ՚առարկեն, եւ ճիշդ է, որ «վիժում» բառը գոյութիւն չունի Աստուածաշունչին մէջ, սակայն եւ այնպէս վիժումի մասին ուսուցումները այդտեղ են: Այս է իրողութիւնը նաեւ շատ մը ա՛յլ ուսուցումներու մասին: Օրինակի համար՝ «երրորդութիւն» բառը գոյութիւն չունի Աստուածաշունչին մէջ, բայց այդ մասին ստուար տեղեկութիւններ կան: Հաւանաբար բոլոր անոնք, որոնք կ՚ուրանան եւ կը ժխտեն սուրբ գրոց ուսուցումները, անկասկած պիտի ուրանան եւ ժխտեն նոյնիսկ՝ եթէ այդ բառը որոշակի կերպով արձանագրուած ըլլար Աստուածաշունչին մէջ:

Նախ ակնարկ մը նետենք աստուածաշնչական ուսուցումի պատճառաբանութեանց եւ մեկնաբանութեանց վրայ, տեսնելու համար թէ ինչո՞ւ սաղմնաւորուած երախայի մը կանխամտածուած փճացումը շատ սխալ է եւ անիրաւ:

Աստուածաշունչը մեզի կ՚ուսուցանէ որ մարդկային կեանքը տարբեր է միւս բոլոր կեանքերէն, որովհետեւ մարդ արարածը ստեղծուած է Աստուծոյ պատկերին համաձայն: Այս մասին բազմաթիւ վկայութիւններ կան Ծննդոց Գիրքէն սկսեալ. «Եւ ըսաւ Աստուած. Մարդը ստեղծենք, մեր պատկերին նման, մեր նմանութեամբ, եւ իշխէ ան ծովու ձուկերուն, երկինքի թռչուններուն, անասուններուն եւ ամբողջ երկրին, եւ բոլոր սողուններուն, որոնք կը սողան երկրի վրայ: Եւ Աստուած ստեղծեց մարդն իր պատկերին նմանութեամբ. Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծեց զայն, արու եւ էգ ստեղծեց զանոնք:» (Ծնն. 1:26-27):

Ինչպէս կը տեսնենք, երեք անգամ կը գործածուի «ստեղծել» բառը, շեշտելու համար այն իրողութիւնը որ արարչագործութեան գլուխ գործոցը՝ մարդ արարածի ստեղծագործութիւնն էր, որուն յանձնուեցաւ իշխել միւս բոլոր ստեղծուածներուն վրայ: Նոյնիսկ ադամական մեղքը չկրցաւ աստուածային պատկերը մարդուն մէջ եղծանել, եւ ճիշդ ատոր համար Յակոբ Առաքեալի Ընդհանրական նամակին մէջ կը կարդանք. «Բայց չկայ մէկը որ մարդկային լեզուն կրցած ըլլայ հնազանդեցնել, (այդ) չարն ու անկարգը, եւ (այդ) մահաբեր թոյնով լեցուածը: Անով կ՚օրհնենք Տէրը եւ Հայրը, եւ անով կ՚անիծենք մարդիկ, որոնք Աստուծոյ պատկերին նմանութեամբ ստեղծուած են»: (Յակոբ. 3:8-9):

Հետեւաբար, մարդ ըլլալ կը նշանակէ աստուածային պատկեր ունենալ: Որովհետեւ մենք՝ պատահականօրէն պարզապէս իրարու քով նետուած-հաւաքուած բջիջներ չենք անանձնական ուժերու կողմէ, ընդհակառակը, մենք կ՚արտացոլացնենք պատկերը յաւիտենական Աստուծոյ, որ կը ճանչնար մեզ մեր ծնունդէն առաջ եւ մեզ ստեղծած է յատուկ նպատակով:

Ուրեմն՝ Աստուած ո՛չ միայն ստեղծեց մեզ, այլ եւ արժէքաւորեց-գնահատեց մեզ: Եւ ինչպէս Աստուածաշունչը կը վկայէ, Աստուած մեզ այնքան սիրեց, որ մինչեւ իսկ իր Միածին Որդին աշխարհ ղրկեց մեզ փրկելու համար: Այս բոլորը գիտնալով, կրնա՞նք ըսել որ մարդ արարածը գործածուած ապրանքի պէս կրնանք նետել, ինչպէս պիտի ընէինք մեր հինցած ինքնաշարժի պարագային: Անկասկած ո՛չ, որովհետեւ մարդկային կեանքը սուրբ է եւ աւելի սրբազան քան մենք կրնանք երեւակայել:

Դարձեալ՝ Աստուածաշունչը մեզի կ՚ուսուցանէ թէ մօրը արգանդին մէջ եղող երախան, ճշմարիտ մարդ արարած է, որ իր սիրոյ կապը ունի Տիրոջ հետ: Եւ ինչպէս Սաղմոսերգուն կը վկայէ. «Թաքուն չմնաց քեզմէ նոյնիսկ ոսկորներէս մէկը, երբ ծածկաբար կազմեցիր զիս» (Սաղմ. 139:15): «Դուն ես, որ մօրս արգանդէն հանեցիր զիս, Դուն ես իմ յոյսս» (Սաղմ. 22:10): Նոյն վկայութիւնը կ՚ընէ Պօղոս Առաքեալ իր Գաղատացիներուն գրած նամակին մէջ. «Բայց երբ Աստուած ուզեց՝ իմ մօրս արգանդէն ընտրեց զիս, եւ իր շնորհքներուն ազդեցութեամբ կոչեց զիս» (Գաղ. 1:15):

Արդարութիւնը այն արարքն է, որու միջոցաւ մարդ արարածը կը միջամտէ օգնելու անկարողին, տկարին եւ անտէրին, եւ ինչպէս Սաղմոսերգուն կ՚ըսէ. «Այն ատեն արդարութիւնը պիտի ծագի անոր օրով, եւ մեծ խաղաղութիւն պիտի տիրէ... Որովհետեւ աղքատը փրկեց ան հզօրի բռնակալութենէն, աղքատն ու տնանկը, որ չունի իրեն օգնական» (Սաղմ. 72:7,12): Ի վերջոյ ճշմարիտ արդարութիւնը նոյն ինքն Քրիստոս է, «Որովհետեւ անո՛ր միջոցով կը գտնուիք դուք Յիսուս Քրիստոսի մէջ, որ իմաստութիւն, սրբութիւն եւ փրկութիւն եղաւ մեզի Աստուծոյ կողմէ» (Ա.Կորնթ.1:30):

Աստուած արդար է իր ժողովուրդին հանդէպ, եւ կ՚ակնկալէ նաեւ որ իր ժողովուրդը արդար ըլլան իրարու հանդէպ. «Այնպէս գթասիրտ եղէք ինչպէս ձեր Հայրը գթասիրտ է» (Ղուկ. 6:36): «Բոլոր այն բաները, որոնք ընդհանրապէս դուք կ՚ուզէք որ մարդիկ ընեն ձեզի, դուք ալ ա՛յդ ըրէք անոնց» (Մատթ.7:12):

Վիժումը ճիշդ հակառակն է աստուածաշնչական այս ուսուցումներուն, այլ խօսքով՝ ան խորտակումն ու աւերումն է անկարողին, անօգնականին: Որպէս ճշմարիտ քրիստոնեաներ, չենք կրնար անտարբեր մնալ ո՛չ-աստուածահաճոյ այս գայթակղեցուցիչ եւ աւերիչ երեւոյթին նկատմամբ:

Քրիստոս իր մասնաւոր եւ յատուկ ուշադրութեան առարկայ դարձուց աղքատները, անկեալները եւ արհամարուածները եւ մասնաւորաբար մանուկները: Ան իր սիրով խորտակեց արհեստական մարդկային բոլոր պատուարները եւ բոլոր մարդիկը նկատեց իրերահաւասար: Նոյնիսկ երբ Առաքեալներ փորձեցին երախաները հեռու պահել իրմէ, չվարանեցաւ ըսելու. «Թոյլ տուէք այդ մանուկներուն եւ արգելք մի՛ ըլլաք որ ինծի գան անոնք, որովհետեւ այդպիսիներուն է երկնքի արքայութիւնը» (Մատթ.19:14):

Շար.ը էջ 18

ԽՆԴՐԱՆՔ - ԲԱՑ ՆԱՄԱԿ

Ծանօթ: Նկատի ունենալով Սուրիահայ մեր գաղութին այժմու ծանր կացութիւնն ու արեւմտահայերէնի մահացու նահանջը, վերջերս Հ.Բ.Ը. Միութեան Մելգոնեան Կրթական Հաստատութեան կարգ մը շրջանաւարտներ եւ աւելի քան 1000 Մելգոնեանցի եւ սփիւռքով մտահոգ հայեր, «Կոչ - Բաց Նամակ»ով մը դիմած էին Հ.Բ.Ը. Միութեան Պատկառելի Կեդրոնական Վարչութեան եւ անոր Նախագահ՝ Տիար Պերճ Սեդրակեանին, վերաբանալու Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը Կիպրոսի մէջ, եւ հոն պատսպարելու եւ դաստիարակելու շուրջ 500 - 1000 աշակերտներ, գլխաւորաբար Սուրիայէն: Այս «Կոչ - Բաց Նամակ»ը հրատարակուեցաւ կարգ մը հայկական թերթերու մէջ եւ համացանցի միջոցաւ ղրկուեցաւ բազմահազար հայերու: Քեսապի պարպումը եւ գաղթականներու նոր ալիքը ցգնաժամային եւ ազգային շատ աւելի ծանր կացութիւն մը ստեղծեցին հայութեան համար:

Մելգոնեանցի այս շրջանաւարտները «Խնդրանք - Բաց Նամակ»ով մը նաեւ դիմեցին մեր զոյգ Կաթողիկոսներուն, ՀՀ Նախագահին, ՀՀ Սփիւռքի, Կրթութեան եւ Գիտութեան Նախարարներուն եւ Աւանդական երեք Կուսակցութիւններու բարձրագոյն մարմիններուն որպէսզի բարեխօսեն Հ.Բ.Ը. Միութեան Պատկառելի Կեդրոնական Վարչութեան եւ անոր Նախագահ՝ Տիար Պերճ Սեդրակեանին մօտ որպէսզի Հ.Բ.Ը. Միութիւնը վերաբանայ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը:

Ստորեւ այդ «Խնդրանք - Բաց Նամակ»ին պատճէնը:

Վսեմաշուք Տիար Սերժ Սարգիսեան, Նախագահ Հայաստանի Հանրապետութեան,

Երեւան

Մեծայարգ Պրն. Նախագահ,

Սոյն «Խնդրանք - Բաց Նամակ»-ով խումբ մը Հ.Բ.Ը.Միութեան Մելգոնեան Կրթական Հաստատութեան շրջանաւարտներս կու գանք Ձեզմէ խնդրելու, որ բարի ըլլաք բարեխօսելու Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Պատկառելի Կեդրոնական Վարչութեան եւ անոր Նախագահ՝ Տիար Պերճ Սեդրակեանի մօտ, որպէսզի վերատեսութեան ենթարկեն Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը փակելու իրենց որոշումը եւ զայն վերաբանան կարելի փութով:

Մեր այս վերանորոգուած խնդրանքին տուն տուող պատճառները երկուք են.

Ա.- Նկատի ունենալով Սուրիոյ քաղաքացիական պատերազմին պատճառով Հալէպի եւ Սուրիոյ այլ հայաշատ շրջաններու, ինչպէս նաեւ Սուրիահայ գաղթականներու հայ պատանիներու բազմակողմանի անապահով կացութիւնը, Մելգոնեան Կրթական Հաստատութեան վերաբացումով կարելի պիտի ըլլայ 500-1000 հայ պարմանպարմանուհիներ գիշերօթիկ միջավայր փոխադրել, ուր անոնք պիտի կարենան ապահով պայմաններու տակ իրենց ուսումը շարունակել:

Բ.- Գաղտնիք չէ որ Արեւմտահայերէնը արտասահմանի մէջ ահաւոր անկում կը կրէ: "Council of Europe, Committee of Ministers"ը եւ "UNESCO"ն արեւմտահայերէնը արդէն իսկ դասած են վտանգուած լեզուներու շարքին: Սփիւռքի մէջ կը նահանջէ արեւմտահայերէնը: Ոչ մէկ դպրոց, ոչ մէկ կազմակերութիւն, ոչ մէկ միութիւն կամ հաստատութիւն կրնայ առաջքը առնել այս մահացու նահանջին: Եթէ անկեղծ ըլլանք իրարու հետ, գիտենք որ այս պայմաններուն տակ հազիւ թէ կարենանք առաւելագոյն մէկ սերունդ եւս դիմանալ որպէս արեւմտահայ: Սփիւռքի մեր արեւմտահայ զանգուածները հասած են անդունդի եզրին, ամբողջական ձուլումի վտանգին ենթակայ: Մեր Եկեղեցւոյ Նուիրապետական Աթոռներու Գահակալներուն, ՀՀ Պետական Այրերուն եւ սփիւռքի աւանդական երեք կուսակցութիւններուն (ինչպէս նաեւ մտաւորականութեան) աւագ պարտականութիւններէն մէկը պէտք է ըլլայ ոչ միայն փրկել եւ պահպանել արեւմտահայերէնը, այլ զարգացնել եւ տարածել զայն: Այս անյետաձգելի հրամայականը կարելի է մեծ մասամբ իրագործել վերաբանալով Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը:

Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը ըլլալով գիշերօթիկ վարժարան, հոն հաւաքուած արեւմտահայ ուսանողութիւնը Հալէպէն, Իրաքէն, Եգիպտոսէն, Կիպրոսէն եւ այլ գաղութներէն, նուիրեալ եւ մտահոգ ուսուցիչներու հսկողութեան տակ լաւագոյնս պիտի կարենան սորվիլ արեւմտահայերէնը եւ այս աշակերտներէն խումբ մը, որպէս արեւմտահայերէնի ուսուցիչներ, խմբագիրներ, ազգային գործիչներ եւ այլ պաշտօններ վարող անհատներ, պիտի պահեն, զարգացնեն եւ տարածեն արեւմտահայերէնը: Տարիներու ընթացքին, վերաբացուած Մելգոնեանի արեւմտահայ շրջանաւարտներու թիւը պիտի հասնի հազարներու: Այսպէսով մասամբ ապահովուած պիտի ըլլայ նաեւ արեւմտահայ զանգուածներու գոյատեւումը: Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը բարձրորակ ուսում ջամբող կրթական հաստատութիւն մը ըլլալով հանդերձ, պիտի ծառայէ նաեւ որպէս արեւմտահայերէնի ամրոց, եւ ազգային ինքնութեան դարբնոց: Այս միքտը աւելի եւս զարգացուցած ենք կցեալ գրութիւններուն մէջ, որոնք հրատարակուեցան սփիւռքահայ մամուլի կարգ մը օրկաններու էջերուն մէջ, ինչպէս նաեւ համացանցային միջոցներով:

Նկատի ունենալով վերոյիշեալ զոյգ մտահոգութիւններուն ահազանգային հանգամանքը, պիտի խնդրէինք որ կարելի փութով բարեխօսէիք Հ.Բ.Ը.Միութեան Պատկառելի Կեդրոնական Վարչութեան եւ Նախագահ Տիար Պերճ Սեդրակեանին մօտ՝ անյապաղ վերաբանալու Հ.Բ.Ը.Միութեան Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը:

Սպասելով Ձեր բարեհաճ պատասխանին՝

Խորին Յարգանքներով՝

Վարդգէս Գուրուեան (Համադրող) Զոհրապ Շամմասեան Ժիրայր Մակարեան

Գէորգ Յակոբեան Կարօ Գասպարեան Սարգիս Շահինեան Բաֆֆի Ցնծալեան

Եւ աւելի քան հազար (1000) Մելգոնեանցի եւ վերոյիշեալ հարցերով մտահոգ հայորդիներ, որոնց գրաւոր եւ կամ համացանցային

Շար.ը էջ 18

ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԵԱՆԻ «ՇԱՐԺՈՒՄ ԴԷՊԻ ՀԱՒԱՍԱՐԱԿՇՌՈՒԹԻՒՆ» ՄԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ ԱՆԳԼԵՐԷՆ

ՄԵԼԱՆԻԱ ԲԱԴԱԼԵԱՆ

Օրերս Թեհրանում լոյս տեսաւ հայաստանցի բանաստեղծ, գրականագէտ, մշակութաբան Հենրիկ Էդոյեանի «Շարժում դէպի հաւասարակշռութիւն» /A RELIGIOUS PHILOSOPHICAL CRITICAL APPROACH TO WESTERN LITERATURE/A WAY TO EQUILIBERIUM/ մենագրութիւնը, անգլերէնով: Թարգմանչուհին՝ Թեհրանի համալսարանի բանասիրական ֆակուլտետի անգլո-ամերիկեան գրականութեան ամպիոնի վարիչ Անիտա Հայրապետեանը, մի քանի տարի առաջ դոկտորական դիսերտացիան պաշտպանել է Երեւանում, ԳԱԱ գրականութեան ինստիտուտում: Երկու տարի առաջ Թեհրանի համալսարանում Հ. Էդոյեանի այս մենագրութեան մասին նրա զեկուցումից տպաւորուած՝ տեղի մասնագէտները առաջարկել են անգլերէն թարգմանել գիրքը, ինչը հաւանութեան է արժանացել, որն իրականացուել է եւ հրատարակուել Իրանի Հանրապետութեան Մշակոյթի եւ արուեստի ինստիտուտի աջակցութեամբ/ nowrouzehonar */:*

Հենրիկ Էդոյեանի «Շարժում դէպի հաւասարակշռութիւն» մենագրութիւնը Երեւանում լոյս տեսաւ 2009 թ.-ին/«Սարգիս Խաչենց. Փրինթինֆո» հրատ./: Մտածողութեան եւ մեկնաբանութեան ինքնատիպութեամբ այն կարելի է աննախադէպ համարել հայ գրականագիտութեան պատմութեան մէջ՝ բերած նորութիւններով եւ արեւմտեան գրականութեան ողջ ընթացքին, այդ հսկայական ժամանակաշրջանին, «հետեւած» հայեացքի ուղղութեան անսովորութեան առումով: Ընթերցելուց յետոյ այն տպաւորութիւնն ունեցայ, որ արեւմուտքի մեծ գրականութիւնը, չնայած առկայ ժամանակային, մշակութային, լեզուական տարբերութիւններին, սնւում է հոգեւոր միեւնոյն ակունքից եւ փաստօրէն մարդու հոգու յետագծի պատմութիւնն է: Ըստ այդու, այն դիտարկուած է մշակութային համապարփակ-համընդհանուր, մէկ ամբողջական շղթայի մէջ: Մենագրութեան վերնագրի «շարժում» բառը ելակետային է. գրականութեան մէջ կատարուող փոփոխութիւնների, շարժման մէջ արտացոլուած է մարդու հոգեւոր- իմացական զարգացումների ընթացքը: Այսպիսի մեկնաբանութիւնը եւ հայեացքը թոյլ է տալիս մենագրութիւնը համարել գրականութեան իւրօրինակ փիլիսոփայութիւն, անհատական հոգեւոր փորձի արդիւնք:

Նման մօտեցումը գրականութեանը՝ զերծ պայմանականութիւններից/ ակադեմիական եւ այլ/, ասես վերացնում է բոլոր սահմանները, աւելի շուտ վերացարկւում է առկայ բոլոր գործօններից՝ ազգային- լեզուական եւ այլ անջրպետներից, առաջնայինը տալով տուեալ տարածքի հանրութեան, միջավայրի հոգեւոր վիճակին, նրա կրօնական պատկերացումներին, որպէս այն գլխաւոր հենքը, որի վրայ կառուցւում է գրականութիւնը, արուեստն առհասարակ: Եւ քանի՝ որեւէ ժողովրդի մշակոյթ սերտօրէն կապուած է տուեալ հանրութեան կրօնափիլիսոփայական հայեացքների հետ, նրա մշակոյթի կառուցուածքն էլ այնպիսին է, ինչպիսին այդ պատկերացումներն են: Արեւմտեան քաղաքակրթութիւնը՝ 14-րդ դարից մինչեւ 20-րդ դարի 60-ականների /ուսումնասիրուող շրջանը/ մշակոյթը խարսխուած է քրիստոնէական ուսմունքի վրայ: Այս տեսանկիւնից է Հ. Էդոյեանը դիտարկում արեւմուտքի գրականութեան պատմութիւնը, շարժման ընթացքը՝ վաղ միջնադարից, Վերածննդից, մինչեւ անցեալ դարի գրական երեւոյթները՝ քննելով իւրաքանչիւր դարաշրջանին բնորոշ ուղղութիւնները, հոսանքները, հեղինակների հիմնական գործերը: Արեւմտեան գրականութիւնը համակարգուած, դրուած է մէկ ընդհանուր սիստեմի մէջ այնպէս, որ հնարաւորութիւն է տալիս մէկ մենագրութեան շրջանակներում պատկերացում կազմել ութդարեայ գրական ընթացքի մասին:

Ամբողջացուել-յստակեցուել է, պայմանականօրէն եթէ ասենք, քրիստոնէական գրականութեան պատկերը. զարմանալի հաղորդական, կենդանի շնչով «վերակերպաւորուած» են գրական հերոսները, ինչպէս Շեքսպիրի Համլետը, Դոստոեւսկու, Կաֆկայի կամ Բեկետի հերոսները- այն տպաւորութիւնն է, կարծես մի նոր գեղարուեստական վէպ ես կարդում:

Մենագրութեան գաղափարաբանութիւնը ընդհանուր առումով ուղղուած է մարդկութեան հոգեւոր կեանքին, նրա պատմական փորձին, անհատի ճակատագրին: Միաժամանակ անցեալի մշակոյթի նման խորքային մեկնաբանութիւնը ժամանակակից գրականագիտութեան համար ուսանելի շերտեր ունի, ինչը պայմանաւորում է ուսումնասիրութեան արդիական բնոյթը:

Փորձենք հետեւել «Շարժման» տրամաբանութեանն ու յետագծին՝ ինչպէս է ձեւաւորւում այն, ինչ փուլերով ու հոսանքներով է անցնում, ինչպէս է հնարաւոր հասնել հաւասարակշռութեան, ներդաշնակութեան գաղափարին:

Գրականութիւնը,- ինչպէս նկատուած է գրքում,- մարդկային ճանաչողութեան արտայայտութիւններից մէկն է, որ կարող է ժամանակներ կապել իրար, նոր իրականութիւններ ստեղծել, ճակատագրեր փոխել, աւելին՝ նոյնիսկ՝ փիլիսոփայութիւնն է ընդունում իբրեւ գրականութեան մեկնաբանութիւն: Այն ինչ գրականութեան մէջ դրուած է իբրեւ ներքին վիճակ, փիլիսոփայութիւնը դա փորձում է արտայայտել իբրեւ գաղափար, իբրեւ հասկացութիւն:

Արեւմուտքի քրիստոնէական մշակութային համակարգը, գրականութիւնը դիտարկուած են իրարայաջորդող երկու փուլերով՝ Միջնադար՝ 4-5 դարերից/Հայրաբանութիւնից՝ Աւգուստինուս Աւրելիուսից, մինչեւ Դանտէ Ալիգիերի, մինչեւ 14-րդ դար/ եւ Վերածնունդ՝ 14-րդ դարից սկսուող եւ մինչեւ 20-րդ դարը շարունակուող: Վերածնունդը, որի աւարտը միջազգային մշակութաբանութեան մէջ մինչեւ այսօր ընդունուած է համարել 17-րդ դարի սկիզբները, ըստ մենագրութեան հեղինակի, շարունակւում է մինչեւ 20-րդ դար, որով նորութիւն է ներմուծւում ոչ միայն հայ, այլեւ միջազգային գրականագիտութեան մէջ: Ընդգրկելով ժամանակային այսպիսի շառաւիղ՝ հեղինակը նկատի է ունեցել տուեալ մշակոյթի ներքին միասնականութիւնը՝ «ինֆորմացիոն նոյն աղբիւրը, նրա մարդակենտրոն համակարգը»: Այդ ժամանակաշրջանում ձեւաւորուած գեղարուեստական բոլոր հոսանքները, ուղղութիւնները /կլասիցիզմ, ռոմանտիզմ, սիմվոլիզմ, ռեալիզմ, նատուրալիզմ, մոդեռնիզմ եւ այլ/, նկատուած են իբրեւ տուեալ համակարգի տարբեր աստիճաններ:

Միջնադարի եւ Վերածննդի՝ միմեանց շարունակող մշակութային համակարգերը, ըստ հեղինակի, հիմքում ունեն քրիստոնէական կրօնի սկզբունքային դրոյթները, որը մեկնաբանութեան ելակէտային մօտեցումն է: Ի տարբերութիւն Միջնադարի, որն ընդունուած է համարել աստուածակենտրոն մշակութային համակարգ, որովհետեւ այս դարաշրջանում գրականութեան, արուեստի միջուկը բացառապէս Աստուածն էր, աստուածային թեմատիկան, Վերածննդի դարաշրջանը բնորոշւում է մարդու ֆենոմենի բացայայտումով, մարդը մտնում է գրականութեան, արուեստի մէջ, ստեղծւում է մարդակենտրոն մշակոյթ, մարդն է դառնում արուեստի հետաքրքրութեան նիւթը: Ըստ Հ. Էդոյեանի, այսպիսի տարբերակումը, բնորոշումը պայմանաւորուած է արուեստի, գրականութեան մէջ քրիստոնէական դաւանաբանութեան հիմնադրոյթի՝ Քրիստոսի՝ որպէս Աստուած եւ Մարդ երկբնոյթ էութեան արտացոլմամբ: Սա հեղինակի բերած երկրորդ հիմնական նորութիւնն է:

Մշակութային երկու համակարգերի մէջ կատարուող փոփոխութիւնները, գրականութեան զարգացման փուլերը/շարժումը/ ներկայացուած են գրքի հինգ գլուխներում/ «Քրիստոսի միֆո-կերպարը գրական մշակութային զարգացման մէջ», «Միջնադար-Եղեմ» - «Վերածնունդ - Աշխարհ» անտինոմիան», «Մարդու հոգեկերտուածքի տատանումները», «Գրական ժանրերը 17-19-րդ գրականութեան մէջ», «Մարդու քայքայման երեք աստիճանները 19-րդ դարի երկրորդ կէսի եւ 20-րդ դարի գրականութեան մէջ»:

Այսպէս՝ երկնային եւ երկրային աստիճանները, գրականութեան մէջ մարդու երկուութեան, երկփեղկուածութեան /հոգի եւ մարմին/ առաջին դրսեւորումները, նրա երեք վիճակները արտայայտուած են Դանտէի, Պետրարկայի եւ Բոկաչչոյի գործերում- Բիատրիչէն՝ երկրային ոլորտում, Լաուրան՝ երկնքի եւ երկրի միջեւ եւ Մադոննա Ֆլամետան՝ երկրայինում: Գրականութեան հետագայ ընթացքը արտացոլում է անհատական ճակատագրի արթնացումը, որտեղից սկսւում է մարդու հոգեբանական բեկումը. դրա առաջին արձագանքողը Ֆրանսուա Վիյոնն էր: Յաջորդ խոշոր գրողները՝ Ռաբլէն, Սերվանտէսը եւ Շեքսպիրը գրականութիւն են ներբերում այլ խնդիրներ, գրական տարբեր իրականութիւններ՝ մարդու կերպաւորում լեզուապատկերային իրողութիւնների մէջ, կերպարի կոմիկական եւ ողբերգական վիճակների դրսեւորումներ /Դոն Կիխոտ/, մարդու հոգեաշխարհի ամբողջականութեան՝ բանականութեան ու զգայականութեան հակադրութիւնների, բախումների համլետեան դրամա: Մարդու հոգեկերտուածքային անխուսափելի փոփոխութիւնները, տատանումները զարգացնում են հետագայ դարաշրջանի մտածողները, առաջ են գալիս գրական հոսանքներ եւ շարժումներ՝ կլասիցիզմը, որը մարդուն դիտում է իբրեւ զուտ բանական էակ/ Ոգին /, լուսաւորչական շարժման մէջ մարդը երեւում է հասարակական յարաբերութիւններում / Մարմինը, ռոմանտիզմը ներկայացնում է մարդու զգացական-զգայական շերտը /Հոգին/:



Մարդու ամբողջականութեան քայքայման պրոցեսը սկսում է Շեքսպիրից՝ սոցիալական շերտում, Դոստոեւսկու մօտ դա արտայայտւում է ներքին հոգեբանական մակարդակներում: Բացելով հոգու խոր շերտերը, գրողը ներկայացնում է մարդու քայքայման հոգեբանական պատկերը, որով պայմանաւորւում են 20-րդ դարի գրականութեան մի քանի էական կողմեր: Ֆրանց Կաֆկայի մօտ աշխարհում մարդը անհետանում է, նա մնում է իբրեւ գիտակցութիւն, իսկ Սամուէլ Բեկկետն, ինչպէս աբսուրդի դրաման, այդ գիտակցութիւնն էլ է քայքայում, մարդուց մնում է միայն ձայնը՝ որպէս նշան, որպէս հետք:

Շարժման կորագիծը, ընդունելով նոր ձեւեր, աստիճանաբար իջնում է ցած, արուեստը կորցնում է ազդեցութեան նախկին ուժը, մարդու թեման սպառւում է, նա անհետանում է արուեստի բեմից: Բնականաբար փոխւում են արտայայտչաձեւերն ու միջոցները, նախկիններին փոխարինելու են գալիս արուեստի դեկորատիւ տարրեր, ֆորմաներ: 20-րդ դարավերջի արուեստը, մոդեռնիստական ոճերը միանգամայն այլ հարթութիւններ են ընդգրկում եւ հոգեկան աղքատութեան ակնյայտ նշաններ ցոյց

Շար.ը էջ 19

ԱՐՏԱՍՈՎՈՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ 100-ԱՄԵԱՅ ԵՒՆԻԿԷ ՍԱԼԻՊԵԱՆԻ

ՎԵՐՋԻՆ ԱՊՐՈՂՆԵՐԷՆ, ՈՐ ԿՐՆԱՅ ՎԵՐՅԻՇԵԼ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՐՀԱՒԻՐՔԸ

Չիու մը սանձը ազատած էր իր կեանքը իր ընտանիքի Օսմանեան իշխանութեան վայրագութենէն փախուստի ընթացքին

Ռոպէրթ Ֆիսք
The Independent,
30-3-2014

Մեծ Պատերազմի զաւակ մըն էր ան, ծնած հեռաւոր սպանդի դաշտի մը վրայ, որու մասին քիչ բան գիտենք, մէկը՝ վերջին վկաներէն անցեալ դարու առաջին ցեղասպանութեան, նստած իր սայլակին մէջ, որ ժպտալով կը խօսի Յիսուսի մասին եւ այն Հայ մանուկներուն՝ որ Թուրք ոստիկանները կը մտրակէին, եւ որ ինք տեսած էր իր տան մուտքի փայտեայ դռան ճեղքերուն մէջէն: Ամէն օր չէ, որ առիթը կ'ունենաս հանդիպելու մարդկային պատմութեան այսքան անցողական վկայ մը, եւ շուտով, աւաղ, մեր կեանքի ընթացքին պիտի չկարենանք դարձեալ տեսնել իր նմանները:

Անցեալ շաբաթ զիս տարին Եւնիկէ Սալիպեանը հանդիպելու Քալիֆորնիայի Միշըն Հիլզի մէջ, որու գաղջ զեփիւռները եւ արմաւենիները տարբեր չեն Այնթապ քաղաքէն, ուր ծնած էր ան աւելի քան հարիւր տարի առաջ: Ծերանոցին մէջ ծեր տիկին մըն է ան հիմա, տակաւին անթերի յիշողութեամբ եւ նոյնքան սուր ու վայրագ սպիով մը իր սրունքին վրայ, որ ցոյց կու տայ առանց ամչկոտութեան եւ ուրկէ ձիու մը սանձը զինք կախուած պահած էր կիրճի մը վրայ, մինչեւ արիւնահոսութենէն մահուան դուռը հասնիլը, իր Հայկական հայրենիքէն վերջնական փախուստի ընթացքին: ,Հը՝ՀՀՀՀ կ'ըսէ: ,Այդպէս կը լսուէր արիւնը երբ մարմինէս դուրս կը հոսէր: Տակաւին կը յիշեմ, ,Հը՝ՀՀՀՀ, ,Հը՝ՀՀՀՀ:

Հայկական Ողջակիզումի եղելութիւնները նոյնքան յստակ եւ իրական են որքան հետագայ Հրէական Ողջակիզումի եղելութիւնները: Հարկ է կրկնել, սակայն, զանոնք որովհետեւ Թուրքիոյ պետութիւնը կը շարունակէ ողջակիզումը ուրացող մը ըլլալ, տակաւին պնդելով թէ Օսմանեան կառավարութիւնը գրեթէ դար մը առաջ իր Հայ Քրիստոնեայ բնակչութեան մէկուկէս միլիոնը բնաջնջող ցեղասպանութիւնը չիրագործեց: Հայերը տասնեակ հազարներով կացինահար, դաշունահար եւ հրացանահար եղան, կիները եւ մանուկները մահուան կարաւաններով քշուեցան հիւսիսային Սուրիոյ անապատները, ուր սովի մատնուեցան ու բռնաբարուեցան ու մորթուեցան: Թուրքերը շոգեկառքեր եւ նախնական կազախուցեր գործածեցին, դաս մը որ Գերմանացիները լաւ սորվեցան: Շատ շուտով, Եւնիկէներ պիտի չըլլան այլեւս անոնց պատմութիւնը պատմելու:

Ան ծնած է 14 Յունուար 1914-ին, դուստրը Աբոշ Աբոշեանին, Այնթապցի պղինձի վաճառական մը, որ Յիսուսի պատմութիւնը իր հինգ զաւակներուն սորվեցուց մեծ Աւետարանէ մը, զոր ինք գիրկին մէջ կը պահէր երբ անոնց հետ կը նստէր գորգի մը վրայ իրենց տան յատակը: Անոնք եւ ինչպէս շատ Հայեր եւ մինչեւ դասակարգի ընտանիք մըն էին եւ Աբոշ ունէր Թուրք ընկերներ եւ, թէեւ Եւնիկէ չ'ըսեր այդպէս, կ'երեւի թէ ան առուծախ կ'ընէր Օսմանեան բանակին հետ, որ հաւանաբար խնայեց իրենց կեանքերը: Երբ սկսան առաջին տեղահանութիւնները, Սալիպեաններուն թոյլ տրուեցաւ մնալ իրենց տան մէջ, սակայն ցեղասպանութիւնը տեւեց մինչեւ Մեծ Պատերազմի վերջին օրերը եւ սկսած էր Դաշնակիցներու Կալիպոլի ցամաքահանումէն շաբաթներ ետք եւ 1917-ին, Թուրքերը տակաւին կը պարպէին Այնթապը իր Հայերէն: Այն ատեն է որ լացի ձայնը եռամեայ Եւնիկէն առաջնորդեց իր տան մուտքի դուռը:

«Հին փայտեայ դուռ մըն էր եւ ճեղքեր ունէր եւ ես նայեցայ ճեղքերուն մէջէն», կ'ըսէ ան: Առանց կօշիկի բազմաթիւ մանուկներ կային դուրսը եւ Թուրք ոստիկաններ մտրակներ կը գործածէին փողոցին մէջ առաջ քշելու զանոնք: Մի քանին ծնողք ունէին: Մեզի արգիլուած էր իրենց ուտելիք տալ: Ոստիկանները մտրակներ եւ մեծ գաւազաններ կը գործածէին մանուկները ծեծելու համար: Տեղահանութեան վրայ ճչացող մանուկներուն ձայնը եւ տակաւին կը լսեմ մինչ կը նայիմ ճեղքուած դուռին մէջէն:»

Այնքան ծնողներ սպաննուեցան Հայոց Ցեղասպանութեան առաջին տարին, որ որբերը եւ տասնեակ հազարաւոր վայրիացած մանուկներ, որ անոնց բացակայութեան կը վխտային երկրի տարածքին եւ աւելի ուշ դուրս քշուած էին Թուրքերուն կողմէ: Ասոնք էին տեղահանուող պզտիկները որ տեսած էր Եւնիկէն: Աբոշեանները, սակայն, կրցած էին մնալ մինչեւ ֆրանսական բանակի ժամանումը արեւելեան Թուրքիա, Օսմանցիներու յանձնումէն վերջ: Բայց երբ Մուսթաֆա Քեմալ Աթաթուրք հայադուկայի պատերազմ սկսաւ իր երկրի ֆրանսացի նուաճողներուն դէմ, ֆրանսացիները նահանջեցին եւ 1921-ին վերապրող Հայերը անոնց հետ փախան Սուրիա, Եւնիկէն եւ իր ընտանիքը ներառեալ, խռնուած երկու ձիաքարշ կառքերու մէջ: Ան վերջին Քրիստոնեաներէն էր որ կը լքէր իր Հայկական հայրենիքը:

«Ընտանիքս բաժնուած էր երկու կառքերուն միջեւ: Տեղ փոխուեցայ ծեր կնոջ մը հետ: Գիշեր էր, երբ կիրճի մը վրայ ձիերը սարսափեցան, կառքը շրջուեցաւ

Շար.ը էջ 19

ԷՋԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱՆՑԵԱԼԻՑ

ՈՍԿԱՆ ԵՐԵՒԱՆՑԻ

Վերջին քառորդ դարում մեր ժողովուրդն առաջին անգամ ոտքի կանգնեց 1988-ին: Գրեթէ ազգովի: Ժողովուրդը միասնական ու միահամուռ էր, որովհետեւ անմնացորդ ու առանց վերապահումների էր հաւատում շարժման առաջնորդներին: Առաջին օրերին Իգոր Մուրադեանին ու Վաչէ Սարուխանեանին էր անվերապահօրէն հաւատում, այնուհետեւ՝ «Ղարաբաղ» կոմիտէին: Եւ այդ միահամուռ հաւատն էր պատճառը, որ «Ղարաբաղ» կոմիտէի ցանկացած նախաձեռնութիւն յաջողութեամբ էր պսակւում, եւ այդ անմնացորդ հաւատի շնորհիւ շուտով «Ղարաբաղ» կոմիտէն իշխանութեան հասաւ, եւ Հայաստանն էլ անկախացաւ: Կարծիք կայ, որ, ուզէինք թէ չուզէինք, անկախ մեզանից անկախանալու էինք, բայց փաստ է նաեւ, որ մեր ժողովուրդը խորհրդային ժողովուրդներից առաջիններից էր, որ ոտքի կանգնեց:

Երկրորդ անգամ մեր ժողովրդի մի զգալի հատուած ոտքի կանգնեց արդէն Լեւոն Տէր-Պետրոսեանի ու ՀՀՇ-ի իշխանութեան դէմ: Պատերազմի տարիներն էին եւ ժողովրդի մի զգալի զանգուած Տէր-Պետրոսեանի հրաժարականն էր պահանջում: Առաջին նախագահը զիջումների գնաց՝ ընդդիմութեան լիդերներից Վազգէն Մանուկեանին պաշտպանութեան նախարար նշանակելով: Արդիւնքը միանգամայն դրական էր: Սա անկախութեան շրջանում թերեւս միակ դէպքն էր, երբ իշխանութիւնն ընդդիմութեան հետ փորձեց ընդհանուր լեզու գտնել, եւ չնայած տուեալ իշխանութեան ներկայացուցիչներից ոմանք Լեւոն Տէր-Պետրոսեանի էդ փոխզիջումը սխալ էին համարում, եւ չնայած ընդդիմադիրներից շատերն էլ Վազգէն Մանուկեանին էին էդ փոխզիջման իմաստով մեղադրում, փաստը մնում է փաստ, որ մեր վերջին անկախութեան պատմութեան մէջ առաջինն ու վերջինը լինելով՝ տուեալ փոխզիջումը միանգամայն դրական արդիւնքներ տուեց:

Երրորդ անգամ մեր ժողովրդի բողոքաւոր զանգուածն իրար գլխի հաւաքուեց անցեալ դարի 96 թուականին՝ հերթական նախագահական ընտրութիւնների առիթով: Սա նախագահական ընտրութիւնների առիթով ընդդիմութեան առաջին լուրջ համախմբումն էր, որը, փաստօրէն, որեւէ արդիւնք չտուեց: Աժ դարպասները փուլ եկան, գլուխներ ջարդուեցին, այնուհետեւ տանկեր մտան քաղաք, եւ դրանով ամէն ինչ աւարտուեց:

Չորրորդ անգամ ժողովուրդը ոտքի կանգնեց վերստին նախագահական ընտրութիւնների առիթով՝ յանուն կրտսեր Դեմիրճեանի: Ժողովրդի չորրորդ ընդվզումը, փաստօրէն, երրորդի թոյլ կրկնութիւնն էր՝ գրեթէ բոլոր առումներով, ինչպէս նաեւ՝ արդիւնքն էր գրեթէ նոյնը:

Հինգերորդ անգամ բողոքաւոր զանգուածն ի մի եկաւ՝ վերստին նախագահական ընտրութիւնների առիթով: Այս անգամ արդէն ժողովրդի ընտրեալը քաղաքականութիւն վերադարձած Լեւոն Տէր-Պետրոսեանն էր, ինչպէս ասում են՝ լաւ մոռացուած հինը:

Տէր-Պետրոսեանը հիմնականում իր հին թիմով քաղաքականութիւն վերադարձաւ, եւ չնայած Նիկոլն ու ուրիշներ էլ իր հին թիմին գումարուեցին, նոր շարժման յաջողութեան հիմնական գրաւականն առաջին նախագահի կատարեալ ճարտասանութիւնն էր, ինչպէս նաեւ, էդ ճարտասանութեան կատարողի խօսքերով ասած, էդ ճարտասանութեան էներգետի-

Շար.ը էջ 19

ՀԱՅՐ ԿՈՄԻՏԱՍԻ ՅԵՏՄԱՀՈՒ ԳՈՂԳՈԹԱՆ (ԻՐԱՊԱՏՈՒՄ)

ԳՐԻԳՈՐ ՋԱՆԻԿԵԱՆ

(Շարունակուած նախորդ թիւէն)

«Բաթում-Երեւան՝ Խորհրդային Հայաստան» («Խորհրդայինը» կարմիր ջրաներկով ընդգծուած) ուղեբեռը նկատելով՝ ամենաշատ աստղեր ունեցող զինուորականը երկարաճտքի կրունկով զգոյշ խփեց կողեզրին:

- Էս ի՞նչ է:

- Հայր Կոմիտասի մարմինը,- յուղարկաւորի պարտականութիւններին անցաւ Սեղբոսը:

Բարձրաստիճան զինուորականը գունատուեց, ասես Սեղբոսը համայնավարական երկիրը կործանելու համար գերհզօր հրթիռ էր բերել դրամատիրական Ֆրանսիայից: Վախից մի պահ խօսելն էլ մոռացաւ, լեզուն փաթ ընկաւ:

- Ո՞վ է թոյլ տուել:

Նրա ենթականներն խսկոյն վտանգ զգացին, մի ակնթարթում ձեռքները ատրճանակների պատեաններին տարան, շրջապատեցին դագաղը:

- Հանգուցեալի վերջին ցանկութիւնն էր,- Սեղբոսի ընկերկումը նկատելով իրավիճակը մեղմել փորձեցին Երուանդ Թոլոյեանը՝ Գաւառոշը (երգիծաբան եւ սիւնակագիր), Երուանդ Քոչարը (գեղանկարիչ եւ քանդակագործ), Լեւոն Յարութը (դերասան), Գէորգ Եաղուբեանը (նուագավար եւ երաժշտաբան)... ինչպէս նաեւ գիւղատնտես Անդրէն, որ Շուէյցարիայից էր ներգաղթում՝ Արարատեան դաշտավայրի խաղողի բերքատուութիւնը բարձրացնելու համար:

Շատ աստղեր ունեցող զինուորականը աւելի սիրթնեց, նայեց նրանց ու բռունցքները պրկեց՝ հաստատ մէկնումէկին ուզում էր խեղդամահ անել, բայց չէր կողնորոշւում ում:

-Բա ձեզ հեռագիր չտուեցի՞ն, չզգուշացրին, որ մենք այսպիսի հանգուցեալներ յուղարկաւորելու ցանկութիւն չունենք:

Նաւապետը երեւի այնքան էր ծովի նայել, որ աչքերը ծովաջրի գոյն էին ստացել: Թերեւս այդ պատճառով՝ դէմքի արտայայտութիւնը միամիտ, անմեղ էր: Առաւել եւս, որ խորհրդային պետանվտանգութեան ծառայութիւններից որեւէ կախում չունէր: Հարկ համարեց միջամտել.

-Ճիշդ է, այդպիսի բովանդակութեամբ ռադիոգիր ես էլ եմ ստացել, բայց նաւը երեք օր է արդէն բաց ծովում էր: Հազար ութ հարիւր ուղեւորի չէի կարող ետ՝ Ֆրանսիա տանել: Բացի դրանից՝ ռադիոգիրն անստորագիր էր, ինձ համար պարզ չեղաւ, թէ ո՞վ է ինձ նման կարգադրութիւն արել:

Բարձրաստիճան զինուորականը բռունցքները բացեց, տեղում ձիգ ձգուեց ու, ինչպէս դեսպանութեան կցորդը Փարիզում, ցուցամատը եօթերորդ երկինք մեկնեց:

Երուանդ Քոչարը, Երուանդ Թոլոյեանը, գիւղատնտես Անդրէն սկսուեցին:

- Հիմա ի՞նչ պիտի անեմ,- մենակ մնաց Ակնունին:

- Ինչ ուզում էք արէք, միայն շուտ արէք: Ուզում էք ծովը թափէք, ուզում էք որտեղից բերել եք, այնտեղ էլ տարէք:

- Կը տանեմ,- այդ պահին Ակնունու աչքերին զինուորականի խոշոր աստղերը չէին երեւում: Ասենք խորհրդային աստղերից բան էլ չէր հասկանում:

Զինուորականները, հայրենադարձներն իջան, Կոմիտասին, Ակնունուն թողեցին:

-Ընկեր Խանջեանին յայտնեցէք, ընկեր Խանջեանին տեղեկացրէք,- նաւացռուկում մենակ մնալով հեռացող հայրենակիցներին խնդրում, աղերսում էր Ակնունին:

Ֆրանսահայ հայրենադարձները, դեռեւս Բաթումից, չորս օր անընդհատ հեռագրում, զանգահարում, Աղասի Խանջեանին չէին գտնում: Նա Երեւանում չէր: Թէ որտե՞ղ էր՝ չէին ասում:

Ակնունին առանձին նաւախուց ունէր, բայց անջրանցիկ թիկնոցը վերցրեց (լաւ է՝ հետը բերել էր), տախտակամած իջաւ, ապահովութեան համար Կոմիտասի մօտ տեղաւորուեց: Գիշերները, Բաթումի յորդ, վարար անձրեւի տակ թիկնոցը հանգուցեալի ու իր գլխին էր քաշում, քնում: Նաւապետը միշտ զբաղուած էր լինում, միշտ արագարագ էր գնում-գալիս կողքից, մի անգամ յամենայն դէպս կանգ առաւ, յուսադրեց.

- Էդքան մի տխրիր, բախտդ բերեց, որ չթողեցին ցած իջնես: Այստեղ դու ֆրանսիական տարածքում ես:

- Որ ցած իջնէի, ի՞նչ պիտի անէին:

Նաւապետը բազմիմաստ սուլեց, թողեց գնաց:

Հեղինակը համապատասխան տեղում գրել է, թէ ինչ տեղի ունեցաւ, երբ երիտթուրքերը համոզուեցին, որ Զանղըրիի սպանդանոցում անգամ Կոմիտասին վերացնել չեն կարողանալու: Երկու շաբաթ էլ չանցած յետ՝ Պոլիս բերել տուին: Այն, որ Կոմիտասը այդ ընթացքում մտագարուել էր, չգիտէին: Եթէ իմանային, շատ կը զարմանային, որովհետեւ պատճառը չէին հասկանայ:

Համայնավարներն էլ երիտթուրքերի պէս վարուեցին: Հէնց գլխի ընկան, որ Բաթումում անտէր մնացած դիակից ազատում չունեն, մարդասէր, երաժշտասէր, անգամ կրօնասէր դարձան:

Վեց օր տեղատարափի տակ թողնելուց յետոյ դագաղը տախտակատուփից հանեցին, յատուկ վագոնում տեղաւորեցին: Աջարիայից մինչեւ Հայաստան՝ վագոնի ամբողջ երկայնքով, հնարաւոր ամենախոշոր գրերով փռփռում էր Կոմիտասի անունը, ինչպէս նաեւ Կոստան Զարեանի բանաստեղծութեան «Բարի ճանապարհ եւ բարի վերադարձ, վարդապետ» տողերը: Սեղբոսը, ում տեսնել չէին ուզում, նման պարտադրուած յուղարկաւորութեան միակ մեղաւորն էին համարում, վերջին պահին գնացքի ընդհանուր վագոնը խցկուեց, հարբած վրացիների կերուխումի աղմուկով ճամբորդեց:

Բարեբախտաբար Հայաստանը ճիշդ եւ ճիշդ այնպիսին էր, ինչպիսին Զանղըրը աքսորուելուց առաջ բազմիցս նկարագրել էր հայրը: Արարատը, դեռեւս Երեւան չհասած, գնացքի պատուհանից յայտնուեց: Սեղբոսը իջաւ կառամատոյցում, մայր լեռանը շրջուելով խաչակնքեց, կռացաւ, հայրենի հողը համբուրեց, ճակատին, աչքերին քսեց, բայց հէնց դիատար վագոնին հասաւ, հայրենիքի հմայքը մոռացաւ: Դագաղը չկար: Տարել էին: Ո՞ւր: Ոչ ոք չգիտէր: Կամ չէին ասում:

Առաւօտեան վաղ աչքերը հիւրանոցում բացեց ու իրեն, միայն իրեն նախատեց Փարիզից Երեւան հասցնելու, Երեւանում Կոմիտասի աճիւնը կորցնելու համար: Առանց նախաճաշելու ատիճաններով արագ առաջին յարկ՝ սպասասրահ իջաւ: Մշեցու պէս բեղերը քունքերին հասցրած բարապանն էր միայն արթուն:

- Հայր Կոմիտասին վերաբերեալ տեղեկութիւն ունէ՞ք: Երէկ... Բարապանը իրօք մշեցի էր, մինչեւ վերջ չլսեց, չոր ընդհատեց.

- Թերթ կարդայ:

Ու ցոյց տուեց աթոռին կիսաբաց փռած «Խորհրդային Հայաստանը»: Սեղբոսը վերցրեց թերթը:

Օրուայ թիւն էր, ծայրէծայր աչքի անցկացրեց ու վերջապէս, չորրորդ էջի անկիւնում, երկու յայտարարութիւնների արանքում մանր տառերով մահազդը գտաւ. «Ժողկոմխորհին կից Արուեստի վարչութիւնը յայտնում է, որ երաժշտագէտ Կոմիտասի աճիւնը այս ամսի 27-ին հասաւ Երեւան եւ փոխադրուեց կուլտուրայի տուն:

Թաղումը տեղի կ'ունենայ այսօր:

Կուլտուրայի տան մուտքը ազատ է հասարակութեան համար ժամը 11-ից 4-ը»:

Զէ, անհնար էր, հայրենիքն այդքան զբաղուած չէր կարող լինել: Կոմիտասի դագաղը նախորդ օրը, ուշ երեկոյեան էր գնացքը Երեւան հասցրել, գիշերուայ ո՞ր ժամին, ովքե՞ր էին նման փութկոտութեամբ նիստ գումարել, որոշել իսկոյն հողին յանձնել, յուղարկաւորութեան ծանուցումը նոյն օրուայ պաշտօնաթերթում հրապարակել:

Տանմէկն անցել էր, մտմտալու ժամանակը չէր: Սեղբոսը լրագիրը բարապանին վերադարձրեց, քանի որ առայժմ Երեւանի իր միակ ծանօթն էր, հետաքրքրուեց.

- Հայրենակից, որտե՞ղ է ձեր մշակոյթի տունը:

- Շատ ես հարցեր տալիս,- մշեցին բարապանի տարազով էր, արտասահմանցի հայի հետ խօսելու ցանկութիւն ընաւ չունէր,- տե՛ս, բոլորը ուր են գնում, յետեւներից գնայ:

Սեղբոսը փողոց ելաւ ու իսկոյն ընկղմուեց ժողովրդի յորձանքի մէջ, որ գետի պէս Աբովեանով իջնում, Կուլտուրայի տան առաջ ծովանում էր: Արդէն նշանակութիւն չունէր, որ դագաղն ինքն էր բերել, բոլորի պէս մի հայ էր, Կուլտուրայի տան առաջ կանգ առաւ: Սպասեց: Սրահից Կոմիտասի մեղեդիներն էին հնչում, ու Սեղբոսը առաջին անգամ լալ էր ուզում: Ուրախութիւնից: Վերջապէս հասել էր նպատակին: Ինքը՝ հէջ, վարդապետն էր նպատակին հասել: Հերթը մօտեցաւ, սրահ մտաւ: Դեռեւս Փարիզից ծանօթ՝ ընկուզէ դագաղը դրել էին մահաբեմին, սգեպսակներով շրջապատել: Հայրենահայերը, այդքան շատ հայ Սեղբոսն առաջին անգամ էր տեսնում, գլխահակ անցնում էին սրահով, դագաղի մօտ կանգ էին առնում, որ ապակէ փոքրիկ պատուհանի միջից մի պահ գոնէ դէմքը տեսնեն: Ինքն էլ դագաղին հասաւ, ինչ անելը չիմացաւ: Այդ պահին էլ նկատեց Եղիշէ Չարենցին, ում լուսանկարը յաճախ էր յայտնւում Փարիզի հայկական թերթերում: Բանաստեղծին գլխահակ կանգնելը չգոհացրաց, կռացաւ, ապակու վրայից համբուրեց Կոմիտասի ճակատը: Ու տեղնուտեղը արիւնը երակներում ասես ցամաքեց, դէմքը մթնեց:

- Սրիկաներ,- շրթունքների արանքից մռլտում էր նա, - մեռելից ի՞նչ էք ուզում, մեռելին ինչի՞ հանգիստ չէք թողնում:

Ձեռքը թափ տուեց, գնաց:

Սեղբոսը բանաստեղծի կոպիտ յիշոցից նախ ոչինչ չհասկացաւ, յետոյ հայեացքը աւելի ուշադիր դագաղին յառեց, այլայլուեց: Մատներով չօշափեց, որովհետեւ չկարողացաւ տեսածին հաւատալ: Ընկուզէ, դրուագանախշ կափարիչը խախտուած, կնքամոմը տեղ-տեղ քերուած էր: Անգամ բութակներն ու երիթներն էին տեղաշարժուած: Ուրեմն ճիշդ էին գիշերը հիւրանոցի ճաշասրահում մշուշի պէս պտտող շշուկները, որ պետանվտանգութեան գործակալները, նախքան մահաբեմում տեղաւորելը, Կոմիտասի դագաղը բացել են, հագուստները, անգամ գրպանները խուզարկել:

Մահից յետոյ էլ ահն ու սարսափը հանգիստ չէին թողել, մարմինը չարչրկել էին:

-Քելէ, քելէ, քելքիդ մեռնեմ,- երգում էր Հայկանոյշ Դանիէլեանը:

# # #

Վերջապէս Սեղբոս Ակնունուն հայրենիքում նկատեցին: Ամենաանպատեհ պահին: Քաղաքային գերեզմանատանը Կոմիտասի խոնաւ շիրմաթմբից մի բուռ հող էր վերցրել, որ Փարիզ հասցնի, մեծդի Թիկենու տակ քաշուած հայեացքով ընկեր Աղասի Խանջեանին, Վեհափառ Հայրապետին էր որոնում, չէր գտնում, մէկ էլ երկու հոգի մօտեցան, խիստ բարեկիրթ թեւը մտան:

- Մենք ուզում ենք ձեզ հետ զրուցել,- ասացին:

- Խնդրեմ,- պատրաստակամ ձայնեց Ակնունին ու նոյնիսկ ուրախացաւ, որ յուղարկաւորութիւնից յետոյ գոնէ ուշադրութեան արժանացաւ:

Նրան ինքնաշարժ նստեցրին, մի շէնք առաջնորդեցին, որի մուտքի մօտ, ներսի կողմում, զինուած ժամապահ կար:

Մենախցի նմանուող սենեակում յայտնուելուց յետոյ, մանաւանդ, երբ ետեւից սողնակի խզխզոց լսեց, Ակնունին հասկացաւ, որ ձերբակալուած է: Շատ չանցած՝ քննիչի մօտ առաջնորդեցին:

Պետանվտանգութեան պաշտօնեան բացատրեց, որ ինքը կապիտան Պողոսեանն է, բայց Սեղբոսը, հարցերին պատասխանելիս, «քաղաքացի քննիչ» պիտի ասի: Ակնունին հպանցիկ հայեացք նետեց նրա շեղ աչքերին, փառակալած ակնաբիբերին, դէմքին ծեփուած ռունգերին ու դառնութեամբ մտածեց, որ թաթար-մոնղոլական լուծը Արտաքուստ կապիտան Պողոսեանը երիտասար-

Շար.ը էջ 20

ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ 34ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ

Սահակ-Մեսրոպ Վարժարանի 34-րդ տարեկան ճաշկերոյթը տեղի ունեցաւ Կիրակի 16 Մարտ 2014-ին: Երեկոյեան ժամը 6-էն սկսեալ, ակներեւ էր ծնողներու եւ բարեկամներու մուտքը Փալատիօ շքեղ սրահը, ուր հաճելի ընկերային մթնոլորտ մը կը տիրէր:

Արդէն որոշեալ ժամուն ներկաները տեղաւորուած էին իրենց տեղերը: Առաջին առիթով բարի գալուստի ջերմ խօսքեր ուղղեց հոգաբարձական կազմէն եւ այս ձեռնարկի փոխ ատենապետուհի՝ Տիկ. Նունէ Սէֆէթճեան, վեր առնելով հայ սերունդի բարձր ուսման կարեւորութիւնը, ապահով միջավայրի մէջ, ստանալով հայեցի եւ հոգեւոր մնունդ: Ան ողջունեց ներկայ ծնողները եւ Սահակ-Մեսրոպի բարերարներն ու հարազատները իրենց կատարած զոհողութիւններուն եւ ծառայութեանց համար:

Յայտագրի հանդիսավարութիւնը ստանձնած էին Արփի եւ Գասպար ձիվէլէկեաններ, որոնք Սահակ-Մեսրոպի շրջանաւարտներ են եւ երկուքն ալ կը վարեն իրաւաբանի պաշտօններ: Անոնք փոխն ի փոխ ձեռնհասօրէն վարեցին օրուան յայտագիրը, առաջին առիթով հրաւիրելով Սահակ-Մեսրոպ Վարժարանի աշակերտներէն Սեւանա Մինասեանը, Քրիստինա Շիրանեանը եւ Թաթիանա Համբարձումեանը, որոնք կատարեցին Ամերիկեան եւ Հայկական քայլերգները իրենց քաղցրահնչիւն ձայներով:

Ապա բեմ հրաւիրուեցաւ Վեր. Վահէ Էքմէքճեան, որ օրհնեց աշխատող անձնակազմը եւ ծնողները եւ ապա կատարեց բացման աղօթքը:

Սահակ-Մեսրոպի Ը. Կարգի աշակերտներու նուագախումբի մասնակցութեամբ առիթը ունեցանք ունկնդրելու հաճելի երաժշտական կտոր մը:

Սոյն երաժշտական ներկայացումէն ետք, անգլերէն արտասանութեամբ հանդէս եկան Վազգէն Հզօր եւ Սերլի Շանլեան, տպաւորելով ներկաները:

Հանդիսավարները առիթը ունեցան ներկայացնելու պատուական հիւրերը եւ դպրոցիս նախկին տնօրէնները:

Մինչ կը հրամցուէր համադամ ընթրիքը, Մերուժան Մարգարեան իր ջութակով դիւթեց ներկաները հաճելի եղանակներով, որուն յաջորդեցին Հայպէրթ Սարեանի եւ Ալէքսի Եղիքեանի երգով եւ կիթարով հայաշունչ եւ գողտրիկ երգերը:

Պահն էր վայելելու օրուան բանախօսը՝ գիտնական Դոկտ. Շանթ Քենտերեան, որ շեշտեց Սահակ-Մեսրոպ Վարժարանի մէջ գոյութիւն ունեցող հայ հոգիի եւ քրիստոնէական ներշնչումի կարեւորութիւնը:

Ան հաւատացած եւ համոզուած էր, որ իր կեանքը ուրախ եւ խաղաղ եղած է, ապաւինելով Աստուծոյ, որ գինք պաշտպանած է շատ մը փորձանքներէ:

Այժմ բանախօսը կ՚աշխատի հրթիռներու վրայ եւ մինչ ինք եւ իր տիկինը իրենց ներդրումը կը բերեն Սահակ-Մեսրոպի ընտանիքի աշխատանքներուն:

Պրն. Տնօրէնը գնահատեց Դոկտ. Քենտերեանը, եւ իր տիկինը՝ Անին, որոնք անձնուիրութեամբ իրենց ժամանակը կը տրամադրեն դպրոցի մէջ նոր ծրագիրներ մշակելով եւ կիրարկելով:

Հանդիսավար Գասպար ձիվէլէկեան յիշեց, որ Սահակ-Մեսրոպ Վարժարանը 34 տարիներէ ի վեր կը շարունակէ ջամբել հայեցի ուսում եւ կրթութիւն նաեւ քրիստոնէական դաստիարակութիւն: Ան նաեւ հպարտութեամբ յիշեց Սահակ-Մեսրոպի շրջանաւարտները, որոնք այս օրերուն ունին լաւ պաշտօններ եւ օրինակելի հայորդիներ են շնորհիւ այս վարժարանի դաստիարակութեան:

Պրն. Ինճէճիքեան իր կարգին շնորհակալութիւն յայտնեց այս ձեռնարկի յանձնախումբի անդամներուն, դպրոցիս պաշտօնէութեան, հոգաբարձական կազմին, ծնողական մարմնին եւ յայտագրի մասնակիցներուն, որոնք բոլորն ալ անսակարկ նուիրումով աշխատեցան իրենց լաւագոյն ներդրումը բերելով եւ դպրոցիս օժանդակելով նիւթապէս եւ բարոյապէս:

Ան յատուկ երախտագիտական խօսքեր ուղղեց բոլոր նուիրատուներուն, մասնաւորաբար՝ այս ճաշկերոյթը հովանաւորող Տէր եւ Տիկ. Զարեհ եւ Սօսի Աստուրեաններու եւ Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Նունէ Սէֆէթճեաններու, որոնք միշտ սատար կը հանդիսանան մեր դպրոցին:

Ապա գնահատեց այն ուսուցիչները, որոնք իրենց 20 տարուայ ծառայութիւնը բերած էին Սահակ-Մեսրոպ Վարժարանին, յանձինս՝ Տիկ. Լիւսի Ապաճեանին եւ Տիկ. Սիւզի Պաղտոյեանին եւ 10 տարուան ծառայութիւն կատարած՝ Տիկ. Թամար Մխճեանին, Տէր եւ Տիկ. Արտաշէս եւ Ժաննա Սինանեաններուն եւ Տիկ. Լարա Գոզաքճեանին:

Վերոյիշեալները պարգեւատրուեցան յատուկ յուշատախտակներով եւ նուէրներով:

Յայտագրի վերջին բաժինը ներկայացուցին դպրոցիս 4րդ եւ 5րդ դասարանի աշակերտները, որոնք ելոյթ ունեցան 3 հոգեպարար եւ ոգեշունչ հայրենասիրական երգերով, առաջնորդութեամբ Արտաշէս եւ Ժաննա Սինանեաններու, ուր ներկաներու խանդավառութիւնը հասաւ գագաթնակէտին

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՅԻՇԱՏԱԿՈՒՄ ՅՈՎՍԷՓԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

Փետրուար ամսուան ընթացքին մեր աւանդական սովորութիւններէն մէկը վերակենդանացաւ մեր վարժարանէն եւ եկեղեցիէն ներս, շնորհիւ Հաճնոյ հայրենակցական միութեան սիրասուն եւ փափկասուն տիկիններուն՝ Մայտա Մանկրեանին, Մատլէն Սաթամեանին եւ վարժարանի Հայրերու յանձնախումբի անդամներէն Անդօ Շահինեանին: Երկու օրերու ընթացքին անոնք աշխատեցան, աշակերտներուն եւ ուսուցչակազմին համար պատրաստեցին հայկական աւանդական հոգեճաշը՝ ճիտապուրը:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Սարգիս քհնյ. Փեթոյեան աշակերտներուն տեղեկութիւններ փոխանցեց մատաղ մատուցելու աւանդութեան մասին՝ զայն նկատելով հոգեճաշ բոլոր անոնց համար, որոնք նահատակուած են Վարդանանց պատերազմին ընթացքին:

Աշակերտները խումբ առ խումբ այցելեցին զբօսավայրին մէջ տեղ գրաւած երկու կաթսաները, որոնց մէջ եփուող ճիտապուրին բոյրը տարածուած էր ամբողջ դպրոցը, եւ հերթաբար մասնակցեցան ճիտապուրը «զարնելու»՝ խառնելու աշխատանքին:

Վարդանանցի յիշատակին նուիրուած աշակերտական հանդիսութիւնը տեղի ունեցաւ «Գալուստեան-Տունայեանց» սրահին մէջ: Մանկապարտէզէն մինչեւ Ը. կարգի աշակերտները մասնակցեցան տօնակատարութեան՝ երգերով, արտասանութիւններով եւ ներկայացումով: Օրուան հանդիսավարն էր ուսուցչուհի Լիզա Մանոյեան, որ իր բացման խօսքին մէջ աշակերտներուն փոխանցեց, թէ Վարդանանց պատերազմը մեր կրօնքին եւ ազգին հանդէպ բուռն սիրոյ պատերազմ մըն էր: Ապա, Ը. կարգի երկու աշակերտներ՝ Ճուլիըն Ղուլեանց եւ Ալին Գէյիլեան, յաջորդաբար փոխանցեցին Վարդան Մամիկոնեանի ճառը եւ Վարդանանց պատերազմի պատմականը: Մանկապարտէզի, Ա. եւ Դ. կարգի աշակերտները ներկայացուցին երգ եւ արտասանութիւն, իսկ Բ. կարգի աշակերտները՝ թատրոն մը, ուր կենդանացուցած էին Վարդանը, իշխաններն ու իշխանուհիները, որոնք փոխանցեցին օրուան պատգամը՝ «Մահ իմացեալ՝ անմահութիւն է, մահ ոչ իմացեալ՝ մահ է»:

Ապա Գ. եւ Ե. կարգի աշակերտները երգեցին երեք խմբային երգեր՝ «Իմ հայրենեաց հոգի Վարդան», «Մենք Քաջ Վարդանի տոհմէն ենք» եւ «Հիմի է՛լ լռենք»: Աշակերտական հանդիսութիւնը աւարտեցաւ Զ.-Ը. կարգերու աշակերտներուն կողմէ Վահան Թէքէեանի՝ «Խորհուրդ Վարդանանց»ի խմբային արտասանութեամբ:

Օրուան հանդիսութիւնը վերջ գտաւ տնօրէն Շահէ Մանկրեանի փակման խօսքով, ուր ան յիշեցուց, թէ մեր նախահայրերը իրենց հաւատքին համար պատրաստ էին նահատակուելու, ապա քաջալերեց զիրենք յաճախելու կիրակնօրեայ դպրոց եւ եկեղեցի, շարունակելու համար մեր նախահայրերուն աւանդութիւնը: Ան նաեւ շնորհակալութիւն յայտնեց հայկական բաժանմունքի ուսուցիչներուն եւ երաժշտութեան ուսուցչուհիին, որոնք պատրաստած էին աշակերտական կոկիկ հանդիսութիւնը:

Աշակերտները հանդիսութենէն ետք համով-հոտով համտեսեցին իրենց համար պատրաստուած ճիտապուրը եւ շնորհակալութիւն յայտնեցին «խոհարարներ»ուն:

(Թղթակցութիւնը՝ Վարժարանէն)

Վերջին Լուրերու Համար
Հայ news.am

Սօնա Պատալեան

ԲԱՑԱՅԱՅՏՈՒԱԾ Է ԵՒՐՈԴԱՏԱՐԱՆԻ ՄԷՋ

Շարունակուած էջ 7-էն

տած» է ոչ թէ ցեղասպանութիւն իրականացնելու, այլ խաղաղութեան դէմ յանցագործութիւններու, ռազմական յանցագործութիւններու եւ մարդկութեան դէմ գործած յանցագործութիւններու յանցանքով:

Զուիցերիական բողոքը ներկայացուցած էր համոզիչ փաստարկներ եւ անառարկելի ապացոյցներ այն մասին, որ Միւեդի եօթը դատաւորներէն հինգը կատարած են լուրջ դատողութեան եւ տուեալներու սխալներ՝ որոշում կայացնելով ի նպաստ Փերինչէքի եւ ընդդէմ Զուիցերիոյ:

Այժմ Եւրոդատարանի հինգ նոր դատաւորներու կազմը պիտի որոշէ, եթէ Զուիցերիոյ բողոքը պէտք է ուղարկուի 17 դատաւորներէն կազմուած Մեծ պալատ՝ վերջնական լուծում տալու համար:

Թարգմանեց՝
ՌՈՒԶԱՆՆԱ ԱՒԱԳԵԱՆ

ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՆ ՊԱՏԱՆԴ Է

Շարունակուած էջ 13-էն

Երբ խնդրոյ առարկայ է մարդկային արժանապատուութիւնը, Քրիստոս կը ջնջէ բոլոր տարբերութիւնները,- կ՚ըսէ Պողոս Առաքեալ իր Գաղատացիներուն ուղղած նամակին մէջ. « Խտրութիւն չկա՛յ այլեւս, ո՛չ հրեայի եւ ո՛չ հեթանոսի, ո՛չ ստրուկի եւ ո՛չ ազատի, ո՛չ այր մարդու եւ կնոջ միջեւ, որովհետեւ բոլորդ մէկ էք, դուք Քրիստոս Յիսուսի մէջ» (Գաղտ. 3:28):

Նկատի ունենալով աստուածաշնչական մեծագոյն ճշմարտութիւնը, որ ՍԷՐՆ է, կարելի է յայտարարել որ մարդասպանութիւնը կը հակասէ եւ կ՚աղաւաղէ ճշմարիտ սիրոյ հասկացողութիւնը մարդ արարածին մէջ, որովհետեւ սպաննել՝ կը նշանակէ չանսալ Տիրոջ պատուէրին:

Վիժումը՝ մահ է, սակայն «Քրիստոս եկաւ յաղթելու մահուան, որպէսզի մենք կեանք ունենանք, եւ աւելիով ունենանք» (տե՛ս Յովհ. 10:10), եւ ինչպէս շարակնագիր հայրապետը կ՚ըսէ. «Մահուամբ զմահ կոխեաց եւ Յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեւեաց»:

Այս անմարդկային տխուր երեւոյթը կրօնականէն անդին իր անդրադարձը կ՚ունենայ նաեւ մեր հասարակական կեանքին մէջ: Եթէ չկան բժիշկի կողմէ մատնանշուած եւ ապացուցուած յատուկ պատճառներ, որոնք կրնան անյապաղ վերահաս մահ պատճառել յղի կնոջ, այդ պարագային վիժումը կը դառնայ սպաննութիւն եւ արարք մը՝ Աստուծոյ կամքին հակառակ:

Բժշկական գիտութիւնը իր զանազան պատճառաբանութիւններով դէմ է վիժումի: Տանք մի քանի գլխաւոր օրինակներ.-

1. Արգասաւորման ժամանակ սաղմը (embryo) ծննդականօրէն (genetically) անջատ է մօրմէն: Նոյն տրամաբանութեամբ՝ աճող սաղմը տարբեր է սերմէն եւ ձուիկէն որ ստեղծեցին զինք: Մարդ արարածը ունի 46 երփնահատ (chromosome), երբեմն 47, իսկ սերմն ու ձուիկը ունին 23 երփնահատ: Մասնագէտ ծննդաբան մը կարող է զատորոշել ՏՆԱ-ի (DNA) տարբերութիւնը սաղմի եւ սերմ ու ձուիկի: Բայց եւ այնպէս, ծննդաբանը չի կրնար զանազանել ՏՆԱ-ը աճող սաղմին եւ չափահաս մարդ արարածին:

2. Բժշկութիւնը «մահը» կը սահմանէ որպէս սրտի զարկի դադարում եւ հետեւաբար սրտի զարկ կը նշանակէ «կեանք»: Սիրտը մօր արգանդին մէջ իր լրիւ կերպարը կ՚ունենայ 18րդ օրը: Հետեւաբար, եթէ սրտի զարկը որոշիչն է կեանքի, ուստի բոլոր վիժումներն ալ պէտք է ապօրէն նկատուին:

3. Աճող սաղմը (fetus) իր իւրայատուկ մատնահետքերը ունի: Գիտական նորարար գործիքներ (sonography) մեզի կ՚ընծայեն առիթը տեսնելու երախան իր մօր արգանդին մէջ թէ ինչպէս կ՚աճի ան: Կը տեսնենք անոր աչքերը, ականջները, քիթն ու բերանը: Մեր տեսողական իմացականութիւնը կը յայտնէ մեզի որ երախան աճման մէջ է: Հետեւաբար կարելի չէ ըսել որ մեր տեսածը նախանիւթ (protoplasm) մըն է միայն, այլ աճող կեանք մը մօր արգանդին մէջ:

Դժբախտաբար Ամերիկեան Բարձրագոյն Ատեանի որոշումը վիժումի պարագային խուսափում մըն է ճշմարտութենէն, «մեղքը» թողլով բժշկութեան, փիլիսոփայութեան եւ աստուածաբանութեան վրայ, ըսելով որ եթէ անոնք չեն կրնար յստակ տեսակէտի մը յանգիլ, հետեւաբար մենք չենք կրնար յստակ որոշում մը առնել:

Հակառակ այն իրողութեան որ չծնած երախաներ պաշտպանուած են Միացեալ Ազգերու Մարդկային Իրաւանց յատուկ յայտարարութեամբ, եւ հակառակ այն իրողութեան որ բժիշկներ իրենց ասպարէզը չսկսած կ՚երդնուն որ արգանդակալ (pessary) պիտի չտան կանանց վիժումին համար, դժբախտաբար կը շարունակուին վիժումները, անհասկնալի չափերով եւ միջոցներով:

Ոմանք աւելի փիլիսոփայական եւ ծայրայեղ կը մօտենան հարցին: Տօքթ. Ժոզէֆ Ֆլէչըր (Dr. Joseph Fletcher) իր « Humanhood» խորագրով գրքին մէջ, հետեւեալ մօտեցումը կ՚արտայայտէ. «Մարդ արարածը իր ուշիմութեան ցած մակարդակով, կարելի չէ նկատել «անձ» (person), նոյնիսկ եթէ իր գործարանները կը բանին եւ յարատեւ աճման մէջ են»: Մէկ խօսքով, Տօքթ. Ֆլէչըր կը թելադրէ թէ մարդը ճշգրիտ անձ մը չէ, եթէ իր ուշիմութեան մակարդակը՝ IQ-ն 40-էն վար է:

Ինչպէս կը տեսնենք, զանազան թեր եւ դէմ մեկնաբանութիւններ կան վիժումի մասին, աստուածաշնչական, բժշկական, իրաւաբանական եւ փիլիսոփայական: Տրամաբանութիւնն ու աստուածաշնչական ուսուցումները կ՚ընդունին այն քրիստոնեաները որոնք կը պաշտպանեն սրբութիւնը մարդկային կեանքին:

Այս բոլորէն զատ եւ անկախ, կան նաեւ մեր ազգային գոյութեան եւ յարատեւութեան մարտահրաւէրները, որոնք սերտ կապ ունին վիժումին հետ: Հայ ժողովուրդն ալ անմասն չէ մնացած այս ազգակործան փորձութիւններէն, ինչ որ ալ ըլլան անոնց դրդապատճառները: Մենք մեղադրական խօսքերով չենք մօտենար այս հարցին, ընդհակառակը կը թողունք զայն իւրաքանչիւր անհատի խղճին:

Մեր մտահոգութիւնները այս պարագային, կը բխին վճիտ աղբիւրէ: Նկատի ունենալով որ նահատակութիւններ, ջարդեր եւ սովեր տեսած ժողովուրդ ենք, որոնց հետեւանքով նուազած է մեր ազգին քանակը, պարտաւոր ենք աւելի զգօնութեամբ մօտենալու այս հարցին, եւ կ՚ակնկալենք որ մեր Եկեղեցին, իր յաջորդ Եպիսկոպոսական Ժողովով, անպայման ըսելիք մը ունենայ այս հրատապ եւ հասարակութիւնը յուզող շա՜տ լուրջ հարցի մասին:

Յ.Գ.

Այս յօդուածին պիտի ուզէի կցել, Willi Hoffsmmer-ի ապրումներու մէկ դրսեւորումը.

Աշխարհ չելած երախայի մը օրագրէն...

Մայիս 1.- Հօրս ու մօրս սէրը՝ կեանքի կոչեցին զիս:

Մայիս 15.-Երակներս կը կազմուին, եւ արագօրէն կը ձեւաւորուի մարմինս:

Մայիս 19.- Բերան մը ունիմ արդէն:

Մայիս 21.- Սիրտս սկսած է բաբախել: Ո՞վ կրնայ կասկածիլ,- կ՚ապրի՛մ ես արդէն:

Մայիս 22.- Չեմ կրնար հասկնալ, թէ ինչո՞ւ կը մտահոգուի իմ մայրս:

Մայիս 28.- Ականջ սկսած են թեւերս ու սրունքներս եւ սկսած եմ շարժել զանոնք:

Յունիս 6.- Ձեռքերս սկսած են բողբոջիլ: Անոնք որքա՜ն հաճոյք կը պատճառեն ինծի:

Յունիս 15.- Այսօր, առաջին անգամն է, որ մայրս անդրադարձաւ, թէ իր ծոցին մէջն եմ ես:

Յունիս 20.- Ստոյգ է, որ աղջնակ մըն եմ:

Յունիս 24.- Արդէն գրեթէ ամբողջապէս կազմուած են մարմնիս բոլոր անդամները:

Յուլիս 6.- Մազեր սկսած եմ ունենալ եւ յօնքեր. սկսած եմ գեղեցկանալ:

Յուլիս 8.- Ամբողջապէս կազմուած են աչքերս: Շուտով պիտի տեսնեմ մայրս, որ իր ծոցին մէջ կրեց զիս:

Յուլիս 19.- Կանոնաւոր կերպով կը բաբախէ սիրտս: Ապահով կը զգամ եւ լի եմ երջանկութեամբ:

Յուլիս 20.- Այսօր զիս սպաննեց իմ մայրս...

ԽՆԴՐԱՆՔ - ԲԱՑ ՆԱՄԱԿ

Շարունակուած էջ 13-էն

ստորագրութիւնները պահուած են մեր մօտ:

Այս «Խնդրանք - Բաց Նամակ»-ին կցուած է

1. «Կոչ - Բաց Նամակ»ը, ղրկուած Հ.Բ.Ը.Միութեան Կեդր. Վարչութեան

2. «Մ.Կ.Հ.-ի Վերաբացումի «Կոչ-Բաց Նամակ»ին Առիթով»- Բացատրողական գրութիւն

3. «Արեւմտահայերէն Լեզուի Փրկութեան եւ Պահպանութեան Համար» Բացատրողական գրութիւն

Այս «Խնդրանք - Բաց Նամակ»ը եւ բացատրողական գրութիւնները ղրկուած են նաեւ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ., Ամենայն Հայոց Կաթողիկոսին

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա., Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին

Տիկ. Հրանուշ Յակոբեանին, Հ.Հ. Սփիւռքի Նախարարուհիին

Տիար Արմէն Աշոտեանին, Հ.Հ. Կրթութեան եւ Գիտութեան Նախարարին

Տիար Մայք Խարապեանին, Ռ.Ա.Կուսակցութեան Կենդ. Վարչ. Ատենապետին

Տիար Յակոբ Տիգրանեանին, Ս.Դ.Հ.Կուսակցութեան Կեդրոնական Վարչ. Ատենապետին

Տիար Հրանդ Մարգարեանին, Հ.Յ.Դաշնակցութեան Պիւրոյի Ներկայացուցիչին

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ

Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

«ՇԱՐԺՈՒՄ ԴԷՊԻ ՀԱՒԱՍԱՐԱԿՇՌՈՒԹԻՒՆ»

Շարունակուած էջ 14-էն

տալիս. զուտ արտաքին -մակերեսային մօտեցումները արտացոլում են ժամանակակից մարդու սպառողական հոգեբանութիւնը, բարոյական անկումը: Միջնադարի եւ Վերածնութեան հակադրութիւնը փաստօրէն արտայայտում է Աստծոյ եւ Մարդու հակադրութիւնը, այսինքն՝ մարդու հեռացումը Աստծուց, որն ահա այսպիսի արձագանք է ունենում գրականութեան մէջ:

«Ժամանակակից մարդը կանգնած է ընտրութեան առջեւ. իր ձեռք բերած ազատութեան մէջ նա պէտք է որոշի իր ուղին, իր հետագայ կեցութեան հարցը, ինչպէս աւետարանական Ս. Պետրոսը, որն ուրացումից յետոյ վերադառնում է Քրիստոսին արդէն ընդմիշտ, առյաւէտ, քանի որ ընտրութիւնը կատարուած է ազատ մարդու կողմից», գրում է հեղինակը:

Առկայ հակադրութիւնը/ նիւթի ֆետիշացումը, մարդու հեռացումը իր հոգեւոր նախասկզբից/ խախտել է կեանքի, արուեստի հաւասարակշռութիւնը, աստուածայինի ու մարդկայինի ներդաշնակութիւնը, որը՝ պայմանաւորած այս երկու սուբստանցիաների միաժամանակեայ ներկայութեամբ, ի սկզբանէ մարմնաւորուած էր քրիստոնէական Աստծու մէկ ընդհանրական էութեան մէջ:

Որպէս վերադարձի հնարաւորութիւն, հաւասարակշռութեանը հասնելու ճանապարհ՝ առաջադրւում է աստուածայինի ու մարդկայինի միասնութեան գաղափարը- այսպէս ասած յաւերժութեան հասնելու միակ երաշխիքը.

«Մշակութային ոչ մի համակարգ չի կարող յարատեւել միակողմանի զարգացման մէջ. այն չի կարող յարատեւել առանց մարդու հաւասար ներկայութեան/ Միջնադար/, այն չի կարող յարատեւել առանց Աստծու հաւասար ներկայութեան/ Վերածնունդ/. նրանցից որեւէ մէկի մոռացումը իր տեւից բերում է միւսի անկումը: Մարդու մոռացումը / երկրորդ պլանի վրայ անցնելը/ պատճառն է Միջնադարի անկման, Աստծոյ մոռացումը՝ Վերածննդի/ յատկապէս 20-րդ դարի երկրորդ կէսում եւ 21-րդ դարի սկզբներին/:

Նոր դարաշրջանը կոսմիկական Քրիստոսի դարաշրջանն է, ուր Աստուած եւ Մարդը ձուլւում են իրար Քրիստոսի մէջ՝ այլեւս մէկընդմիշտ չբաժանուելու հեռանկարով: Դա անառակ որդու վերադարձն է տուն, ուր նրան հայրն է սպասում: Դա վերադարձ չէ դէպի Միջնադար/ Միջնադարի «Քրիստոս-Աստուածը» մեռած է. դա վերադարձ չէ դէպի Վերածնունդ/ 14-20 դդ դարերի «Քրիստոս-Մարդը» մեռած է/: Դա մօտեցում է Կոսմիկական Քրիստոսին, Քրիստոսի համապարփակ էութեանը, ուր չկան բաժանումներ / Աստուած եւ Մարդ/, ներհակ կենսաձեւեր /խօսք եւ գործ/ եւ տարաշխարհիկ այլ անտինոմիաներ / արուեստ եւ գրականութիւն»:

Յ. Գ. -Հենրիկ Էդոյեանը ժամանակակից հայ բանաստեղծութեան նշանաւոր դէմքերից է: 20-րդ դարի 2-րդ կէսի բանաստեղծական արուեստի առանձնայատկութիւններով բնորոշուող նրա պոէզիան իր բովանդակային ուղղուածութեամբ հոգեւոր- փիլիսոփայական բնոյթ ունի: Լինելով անցած դարի 60-ականների գեղագիտական շարժման առաջատարներից՝ նա մեծ ներդրում, ազդեցութիւն ունի հայ բանաստեղծական լեզուամտածողութիւնը՝ պատկերային կառուցուածքը, արտայայտչաձեւերը, թեմատիկան փոխելու, արդիականացնելու:

Հ. Էդոյեանը հեղինակ է աւելի քան քսան բանաստեղծական, թարգմանական ժողովածուների, գրականագիտական մենագրութիւնների՝ տպագրուած Երեւանում, Հալէպում, Պէյրութում, Թեհրանում:

Աւելի քան 40 տարի նա դասախօսում է Երեւանի Պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետներում/հայ եւ ռոմանագերմանական/, շուրջ 30 տարի արտասահմանեան գրականութեան ամբիոնի վարիչն է եղել, բանասիրական գիտութիւնների դոկտոր պրոֆեսոր է:

ԱՐՏԱՍՈՎՈՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 15-էն

եւ երկաթեայ ձող մը սպաննեց ծեր կինը եւ ես նետուեցայ կամուրջի մը ծայրէն վար եւ ձիուն սանձերն էին որ փրկեցին զիս երբ փաթթուեցան ոտքիս շուրջ: Յիսուս փրկեց զիս: Կախուեցայ այնտեղ եւ լսեցի մարմինէս դուրս հոսող արիւնին ձայնը ,հը՝ չչչչ»: Եւնիկէ ցոյց կու տայ սրունքին սպիացած ծանր վէրքը: Հասած է մինչեւ մկանը: Ուշաթափ եղած էր երկու օր, դանդաղօրէն ապաքինելով Հալէպի մէջ, յետոյ Դամասկոս եւ վերջապէս Պէյրութի ապաստանը:

Մնացեալ կեանքը եւ իր խօսքերով եւ տրուած էր Աստուծոյ, ամուսնոյն եւ 1953-ին՝ որդիներէն մէկուն Լիբանանեան պողոտայի մը վրայ արկածի իբր հետեւանք կոլուստին ողբերգութեան: Իր Պէյրութ ժամանումին առիթով քաշուած լուսանկար մը ցոյց կու տայ թէ Եւնիկէ բացառիկ գեղեցկութեամբ երիտասարդուհի մըն էր եւ ունէր, կ՛ըսէ, բազմաթիւ երկրպագուներ: Ի վերջոյ ան ընտրեց ճաղատ Աւետարանական քարոզիչ մը, աւելի տարեց Վահրամ Սալիպեանը, որ ունէր լայն ժպիտ մը եւ որուն անունը եւ Սալիպի եւ կը նշանակէ խաչակիր: Գլխուն վրայ մազ չկար, բայց Յիսուս կար սրտին մէջ կը յայտարարէ ինծի Եւնիկէն: Վահրամ կը մահանայ 1995-ին, 60 տարուայ ամուսնութենէ վերջ իսկ Եւնիկէ հաշիւը կորսնցուցած է իր ծոռերուն եւ առնուազն 22 հատ կան առայժմ եւ բայց երջանիկ է ան իր զուարթ Հայկական ծերանոցին մէջ:

«Լաւ բան չէ ընտանիքդ հեռու ըլլալը եւ բայց այս տեղը կը սիրեմ: Մեծ ընտանիքս է ասիկա: Կը սիրէ Ամերիկան, կ՛ըսէ Եւնիկէ: Իր ընտանիքը այնտեղ փախաւ երբ Լիբանանի եղբայրասպան պատերազմը սկսաւ 1976-ին: Ազատ տեղ է: Ամէն մարդ ամէն կողմէ Ամերիկա կու գայ: Բայց մեր նախագահը ինչու՝ մահմետական է»:

Կը փորձեմ համոզել զինք թէ ճիշդ չէ ըսածը: Ան Նոր Կտակարանը կը կարդայ ամէն օր եւ շարունակ կը խօսի Յիսուսի հանդէպ իր սիրոյ մասին եւ ծեր կին մըն է այս, որ երջանիկ պիտի ըլլայ եթէ մեռնի, կը կարծեմ եւ երբ կը հարցնեմ թէ ինչ կը զգայ այսօր Թուրքերուն հանդէպ, որ բնաջնջել փորձեցին Հայերը, ան կը պատասխանէ անմիջապէս: Կ՛աղօթեմ Թուրքիայի համար: Կ՛աղօթեմ որ Թուրք իշխանաւորները Յիսուսը ճանչնան: Ինչ որ մնացած է Մոհամէտ մարգարէէն փոշի է միայն: Բայց Յիսուս կենդանի է երկինքին մէջ:

Անակնկալի առջեւ կը գտնուիմ այս խօսքերով, մինչեւ որ յանկարծ կ՛անդրադառնամ թէ լսածս հարիւրամեայ կնոջ մը ձայնը չէ: Լսածս ձայնն է եռամեայ հայ աղջնակի մը, որուն հայրը Աւետարանը կը կարդայ Այնթապի տան մը յատակին նստած եւ ինք մուտքի փայտեայ դռան ճեղքերէն նայելով վկան կ՛ըլլայ իր ժողովուրդի հալածանքին:

Անգլերէնէ թրգմ.
Երանուհի Ղազարեան

ԷՋԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱՆՑԵԱԼԻՑ

Շարունակուած էջ 15-էն

կան: Բոլոր դէպքերում, վերջնական արդիւնքը Մարտի 1-ն էր՝ միանգամայն ողբերգական, որին յաջորդեց ճարտասանութեան ու էներգետիկայի տեւական ու խորը ճգնաժամը:

Յաջորդ անգամ էլ մեր ժողովրդի դժգոհ զանգուածն ի մի եկաւ նախագահական ընտրութիւնների առիթով: Այս անգամ գլխաւոր գործող անձը «Ժառանգութեան» առաջնորդ Ռաֆֆի Յովհաննիսեանն էր: Ժողովուրդը վերստին յոյսեր էր փայփայում, բայց շատ շուտով էդ յոյսերը եւս սառոյցին գրուեցին, եւ ամէն ինչ աւարտուեց «Ժառանգութեան» առաջնորդի ու գլխաւոր ոստիկանապետի միացեալ աղօթքով, եւ չնայած մենք աշխարհում առաջին Քրիստոնէութիւնն ընդունած պետութիւնն ենք, Ռաֆֆի Յովհաննիսեանի ու Վլադիմիր Գասպարեանի էդ միացեալ աղօթքը մերոնց առանձնապէս ոգեւորութիւն չպատճառեց:

Վերջին անգամ բողոքաւոր ժողովուրդն Ազատութեան հրապարակը բերնեբերան «լցրեց» այս տարուայ Մարտի 1-ին:

Հիմնական հռետորը վերստին Տէր-Պետրոսեանն էր, եւ չնայած էդ օրուայ հանրահաւաքի ու երթի շարունակութիւնը չի նշմարւում, այդուհանդերձ, էդ օրուայ ժողովրդի քանակը վկայում էր, որ այսքանից յետոյ էլ ժողովուրդն ընդդիմութեան հետ որոշակի յոյսեր է կապում, կամ, եթէ աւելի ճիշտ ասենք, ժողովուրդն էն աստիճան է իշխանութիւնից հիասթափուած, որ յամառօրէն շարունակում է ընդդիմութեան հետ յոյսեր կապել:

Բայց, ըստ ամենայնի, սա վերջն է, աւելի ճիշտ, սա ընդդիմութեան ու ժողովրդի վերջին համատեղ փորձութիւնն է, որովհետեւ ոչ ժողովրդի համբերութիւնն է անսպառ, ոչ էլ՝ հաւատը: Եւ եթէ ժողովրդի էներգիան ու էներգետիկան եւս մէկ անգամ ջուրը թափուեն, ժողովուրդն արդէն վերջնականապէս ձեռ կը քաշի ընդդիմադիր կուսակցութիւններից եւ արդէն կը փորձի ինքն իրենով ընդդիմադիր կուսակցութեան եւ ընդդիմութեան առաջնորդի դերերը ստանձնել:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԼԻՍԻ ՕԿԱՆՆԷՍԵԱՆԻ մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց խորագոյց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի համայն հարազատներուն, մասնաւորաբար եղբօր Տէր եւ Տիկ. Յարութիւն եւ Շուշան Վարդանեանին:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ԳՐՔԵԱՇԱՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու աշխատակազմը իր խորագոյց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի համայն հարազատներուն, մասնաւորաբար իր եղբօր եւ «Մասիս»ի ներհուն աշխատակից Ալպերթ Գրքեաշարեանին:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Գնահատելով «Մասիս» շաբաթաթերթի բովանդակութիւնը եւ մաղթելով յարատեւ յաջողութիւն մի ոմն $100 կը նուիրէ «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:

ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ
ՍԱՀԱԿԵԱՆ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ
Մայիս 16, 2014, երեկոյեան ժամը 8:00ին:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
OFFICE SPACE FOR RENT
1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
հեռաձայնել՝ (626) 398-0506

ՀԱՅՐ ԿՈՄԻՏԱՍԻ ՅԵՏՄԱՀՈՒ ԳՈՂԳՈԹԱՆ

Շարունակուած էջ 16-էն

դի դրսերեւոյթ ունէր, բայց ճիշդ եւ ճիշդ այնպիսի դեղնագորշ գինուորական բաճկոն էր հագել, որ պատերազմի ու խաղաղութեան, ուրախութեան ու յուղարկաւորութեան օրերին Ստալինն էր հագնում: Սեղբոսի հայեացքը գրասեղանի այս ու այն անկիւնում նոյն ծխամորճն էլ փնտռեց, չնկատեց:

Քննիչը, խիստ բարեացակամ, ճիշդ դիմացը նրան տեղ տուեց, մի տրցակ թուղթ, գրիչ վերցրեց, գործնական հարցրեց.

- Անուն, ազգանուն, հայրանուն...

- Ծննդեան թիւը, տեղը...

- Հիմնական բնակավայրը...

- Մասնագիտութիւնը...

- Ընտանեկան դրութիւնը...

- Կուսակցականութիւնը...

Կապիտան Պօղոսեանը հարցեր տուեց նաեւ Սեղբոսի՝ Ակնում թաղուած պապերի ու տատերի, Վասպուրականից գաղթած նախնիների, ճանիկ գիւղի իրենց գերդաստանի անուանադրի մասին, բայց Սենեքերիմ արքային չհասաւ:

Ըստ երեւոյթին յոգնել էր: Գրած թղթերը խնամքով թղթապանակի մէջ դասաւորեց, թղթապանակի վրայ մեծ-մեծ տառերով Սեղբոս Ակնունի անուն-ազգանունը գրեց (ռուսերէն), հսկիչին կարգադրեց կասկածեալին, ինքն այդպէս կոչեց, խուց տանել:

Կէս գիշերին նորից կանչեց: Բացեց ծանօթ թղթապանակը, գրած թղթերը առջեւը քաշեց, մատնեերը տողերի վրայով սահեցնելով, հարցրեց.

- Անուն, ազգանուն, հայրանուն...

- Ծննդեան թիւը, տեղը...

- Ես այդ հարցերին արդէն պատասխանել եմ,- փորձեց յիշեցնել Սեղբոսը:

Կապիտանը երեւի չլսեց նրան: Միօրինակ ու միապաղաղ շարունակեց.

- Հիմնական բնակավայրը...

- Մասնագիտութիւնը...

Երբ հօր, մօր, քոյրերի տուեալներն էր հաղորդում, Սեղբոսը թերեւս իր հայ լինելը յիշեցնելու, քննիչի հետ արիւնակցական մտերմութիւն ստեղծելու համար յաւելեց, որ նրանց թուրքերն են սպաննել: Սպաննել մեղմ եմ ասում՝ կառափնատել են:

Քննիչը նորից գլուխը չբարձրացրեց, նորից ձեւացրեց, թէ չի լսում, շարունակեց՝

- Ընտանեկան դրութիւնը...

- Կուսակցականութիւնը...

Մէկ շաբաթ անընդհատ, օրուայ ամենատարբեր՝ ամենաանսպասելի ժամերին հարցաքննելուց յետոյ կապիտան Պօղոսեանը վերջապէս (առաջին անգամ) աչքերը Սեղբոսի աչքերին սեւեռեց, հարցրեց.

- Դուք ընդունո՞ւմ էք ձեր յանցանքը:

- Ի՞նչ յանցանք,- տարակուսեց Ակնունին:

- Զէ՞ք հասկանում: Դուք չէք ենթարկուել խորհրդային իշխանութեան որոշմանը, չնայած յատուկ հրահանգին, արգելուած ապրանք էք երկիր բերել:

«Արգելուած ապրանք» ասելով հաւանաբար Կոմիտասի զմռսուած մարմինը նկատի ունէր:

- Ես այդ մասին Բաթումում, հսկիչ-գինուորականներից եմ իմացել:

- Շատ հնարաւոր է, ուրեմն դուք ձեր միամտութեան ու անտեղեակութեան զոհն էք: Յիշեցէք՝ ո՞վ է խորհրդային վարչակարգի դէմ սադրանք հրահրել, ձեզ յանձնարարել Կոմիտասի դիակը ապօրինի երկիր մտցնել:

Ակնունին լռեց: Փորձում էր հասկանալ, թէ ինչո՞ւ է մի տարի առաջ մահացած հոգեզարի մարմինը այդպէս անհանգստացնում Հայաստանի ներքին գործերի ժողկոմատին, չէր հասկանում:

- Ոչ ոք էլ չի յանձնարարել,- յամենայն դէպս զգուշացաւ ու զգաստացաւ,- յուղարկաւոր յանձնախումբն է որոշել:

- Ովքե՞ր են յանձնախմբի անդամները:

- Մէկը, օրինակ, ես:

- Միւսնե՞րը:

- Ինչ իմանամ: Ես միւսների հետ անձնական մտերմութիւն չեմ ունեցել, նիստերի ընթացքում եմ շփուել:

- Դժուար է հաւատալ, որ դուք ձեր գործընկերներին չէք ճանաչում: Թոյլ տուէք կարծել, որ այս պահին անուն- ազգանուններն էք մոռացել: Ոչինչ, ես չեմ շտապում, մենք, առաջիկայ օրերին աւելի յաճախակի կը հանդիպենք, կը զրուցենք, մինչեւ բոլորին մէկ առ մէկ յիշէք:

Ուրեմն առաջիկայ օրերն էլ էր նա այս արգելավայրում անցկացնելու: Բայց ինչի՞ համար: Հարցաքննութիւնները, որ կապիտանը «զրոյց» էր կոչում, շարունակուեցին եւս մի շաբաթ: Կամ մի ամիս: Մի տարի: Սեղբոս Ակնունին ի վերջոյ կորցրեց ժամանակի հաշուարկը, որովհետեւ արտաքին հաղորդակցութեան բոլոր հնարաւորութիւններից զրկուած էր:

Մի շաբաթ, մի ամիս կամ մի տարի յետոյ հերթական հարցաքննութեան ժամանակ նա խնդրեց քննիչին.

- Նկատի ունեցէք՝ իմ այսքան երկարող, անհասկանալի բացակայութիւնը կը մտահոգի ընտանիքիս: Կարո՞ղ եմ հեռագրել, յայտնել, թէ որտեղ եմ:

Ըստ երեւոյթին քննիչին թուաց, թէ վճռական պահը հասել է:

- Ես ձեզ հասկանում եմ, ես էլ ամուսին ու հայր եմ, - սրտցաւ հաւատացրեց նա,- եթէ դուք ձեր կնոջը, երեխաներին իսկապէս կարօտել էք, կ'աշխատեմ օգնել, որ հնարաւորին չափ շուտ տուն վերադառնաք: Մի պայմանով միայն:

- Ի՞նչ պայման:

Կապիտան Պօղոսեանը ոտքի ելաւ, ձեռքը մտերմաբար, այո՛, մտերմաբար Ակնունու ուսին դրեց.

- Մենք մի ամիս է արդէն գրեթէ ամէն օր զրուցել ենք, եւ ես համոզուել եմ, որ դուք ազնիւ, նուիրեալ հայրենասէր էք: Ուզում եմ, որ Ֆրանսիա վերադառնալուց յետոյ էլ նոյն կերպ շարունակէք, ամէն օր, ամէն ժամ հայրենիքին օգտակար լինէք:

- Այսի՞նքն,- Ակնունու ուսին դրուած ձեռքը հետզհետէ ծանրանում էր:

- Բացայայտէք Խորհրդային Հայաստանի թշնամիներին ու հակահայաստանեան քարոզչութեամբ զբաղուողներին, անունները պարբերաբար փարիզի խորհրդային դեսպանատուն հաղորդէք: Մենք ձեզ համար ամէն հնարաւորութիւն կը ստեղծենք, նոյնիսկ վճարել կարող ենք:

Քննիչը գրասեղանին մօտեցաւ, Ակնունու թղթապանակից երկու մեքենագրուած էջ հանեց:

- Եթէ համաձայն էք, իսկ ես վստահ եմ, որ համաձայն էք, մանաւանդ որ ձեր հարազատներին կարօտել էք, ստորագրէք, ահա՛, այս պարտաւորագիրը, ու կապիտանի ուսադիրներով եմ երդւում, ինքնաթիռով հէնց այսօր երեկոյեան Մոսկուայում, իսկ վաղը՝ Փարիզում, տանը կը լինէք:

Ակնունին նոր գլխի ընկաւ, թէ ինչ էր ուզում հասկացնել իրեն չորսաստղանի քննիչը այսքան երկար ժամանակ, որ ինքը ոչ մի կերպ չէր հասկանում:

- Ստորագրէք,- գրիչը պարզելով շարունակում էր խրախուսական ժպտալ նա,- կը տեսնէք, ամէն ինչ լաւ կը լինի: Ուրեմն ներքին գործերի ժողկոմի այս ջահելը Ակնունու ստորութեան վրայ այնքան վստահ է եղել, որ նախօրօք պարտաւորագիրը պատրաստել, մեքենագրել է տուել:

Ստորագրիր Սեղբոս Ակնունի՝ դու Հայաստան էիր եկել ոչ թէ Կոմիտասին վերջին հանգրուան հասցնելու, այլ լրտես, դաւաճան, մատնիչ օձուելու համար: Ստորագրիր, դրա համար մայրդ, մանկամարդ քոյրերդ պղծուեցին ու խողխողուեցին, հօրդ ոսկորները Զանղըրիի աւազներով խարկուեցին:

Միայն նրանք չէ, այդ պահին ինչքան իրեն ծանօթ ու անծանօթ Ակնունիներ կային, Մեծ ու Փոքր Հայքից, որտեղից ասես փութացին, տոհմական պատուասիրութեամբ ձեռքն առաջ մղեցին, ու ինքն էլ լաւ չտեսաւ՝ գրասեղանի վրայից Լենինի՞, թէ՞ Ստալինի արձանիկը խլեց, քննիչի դէմքին շպրտեց: Իր կամ քննիչի բախտից էր՝ չդիպաւ: Վերջինս աչքն անգամ չթարթեց.

- Մահապատիժ,- որոտաց:

Սեղբոսին պատժախուց նետեցին ու նրա մասին մոռացան...

Մի օր կապիտան Պօղոսեանը ծառայութեան պետին զեկուցագրեր էր տարել ստորագրելու, ոնց եղաւ յիշեց, խորհուրդ հարցրեց:

- Ֆրանսահային ի՞նչ անեմ:

- Ո՞ր մէկին:

- Էն որ Կոմիտասին էր բերել: Միտդ չի՞՝ վերեւից յանձնարարել էին, որ նախքան յետ՝ Փարիզ ուղարկելը, վախեցնենք, մեր գործակալը դարձնենք: Մի ամիս համոզեցի, վերջը արձանիկը գլխովս տուեց:

- Ինձ ինչի՞ ես հարցնում: Յօդուածը կպցրու, թող դատեն:

- Ախր սպառնացել եմ, որ գնդակահարելու ենք: Պատժախցում նստած էսքան ժամանակ մահուանն է սպասում:

- Գնդակահարելը նրա համար փրկութիւն է, Առաջնորդի արձանը փշրելու համար թող էնպիսի տեղ քշեն, որ մղկտալով մեռնի:

- Լաւ ասիր:

Յաջորդ օրը նրան ներքին բանտի ատեանը հրաւիրեցին: Խօսել թոյլ չտուին:

- Քաղաքացի Ակնունի,- դատաւորը չբարեհաճեց էլ նայել նրան, ում դատում էր,- մենք ձեր նկատմամբ մարդկայնօրէն էինք տրամադրուած, անգամ ուզում էինք ազատ արձակել, Ֆրանսիա վերադառնալու հնարաւորութիւն ընձեռել, բայց դուք ձեր վարքով ձեզ ծանր վիճակի մէջ դրիք: Ձեր այդ արարքը մահապատժի է արժանի, բայց ատեանը հաշուի առնելով մեր քաղաքացին չլինելը, սահմանադրական օրէնքները չիմանալը, ձեր հանդէպ ներողամիտ է գտնուել, գնդակահարութիւնը տասը տարուայ աքսորով է փոխարինել: Դուք ձեր պատիժը կրելու էք Ծայր Հիւսիսում: Խնդրում եմ ստորագրէք, որ դատավճիռը ձեզ յայտնել ենք ու չէք բողոքարկել:

Ակնունին ստորագրեց դատաւորի ցոյց տուած բոլոր էջերի տակն ու թեթեւացած բանտախուց վերադարձաւ:

Նա չգիտէր, թէ Ծայր Հիւսիսը որտեղ է, բայց խիղճը հանգիստ էր՝ ինքն ուրեմն իսկապէս արդար է, հայրենիքի, որեւէ հայի հանդէպ չի մեղանչել: Բանտային կէս ժամանոց քայլաշրջանների ժամանակ հայաստանցի կալանաւորներն իրար մէջ խօսում էին, որ ներքին գործերի ժողկոմատի ատեանը տասը տարով միայն անմեղ մարդկանց է դատապարտում: Ամենաչնչին յանցանքի դէպքում հէնց բանտի ներսում գնդակահարում կամ քսան-քսանհինգ տարով են աքսորում:

Տասը տարին ինչ էր որ:

Կոմիտասի համար հօրը գլխատել էին: